



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a **Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported** (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

1346

Г. Г. Г. Г.
С. Г. Г. Г.
1902 г.

83

Г. Г. Г.

Հանգանակայն անցնող Բարեկամներ. Մայր. Քանդակարտ
Սիմոն Բարեկամներ.



83
9-66

28 JUN 2005

8247

Փ Ա Ո Ւ Մ Տ

ՈՂԵՐԳՈՒԹԻՒՆ

Գ Է Օ Թ Է Ի

Թարգմանեց զերմաներէնից

ԳԷՈՐԳ ԲԱՐՍՈՒԴԱՐԵԱՆՅ

Հնդկական ՊԱՏԿԵՐՈՎ, ՆԻ ԿԱՐԵՒՈՐ ԺԱՆՕԹՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ

Հրատարակութիւն Արշակ Բարեանի



Թ Ի Ց Լ Ի Զ

Արագատիպ Մնացական Մարտիրոսեանցի
Միքայէլեան փողոց, տուն 81.
1902

FAUST

EINE TRAGÖDIE

VON

GOETHE

ERSTER THEIL.

Дозволено Цензурою. Тифлисъ, 12 Апрѣля 1900 г.

Armenische Uebersetzung

VON

GEORG BARCHUDARJANZ



TIFLIS
Schnelldruckerei von M. Martirosjanz.
Michailowski, № 81.
1902

Յ Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

Գերմանացի մեծահանձար քանաստեղծ Գեօթեի քաղմա-
թիւ հոյակապ գրաւոր վաստակների պսակն է համարվում
նորա «ՓԱՌԻՍՏ» ողբերգութիւնը, որ իւր տեսակի մէջ, թէ
խորին եւ քաղմարտական իմաստով եւ թէ համամարդ-
կային գաղափարներով, չունի իւր նմանը ոչ մի ազգի գրա-
կանութեան մէջ—անգուգական է: Եթէ Գեօթեն քացի «Փաուս-
տից» ուրիշ ոչինչ գրած չլիներ, (նորա հեղինակութիւնների
ժողովածուն կազմում է քառասուն հատոր) մարդկային հան-
ձարի այդ ամենամեծ արտադրութիւնն արդէն քաւական էր
իւր հեղինակի անունն ընդմիշտ անմահացնելու: Գերմանական
աւանդութիւնը դօկտոր Փաուստի մասին, (ապրել է XV դա-
րում) որ իւր հոգին ծախել է սատանային երկրաւոր ըղոր
վայելչութիւնները ծաշակելու համար, Գեօթեն լսել է դեռ եւս
երեխայ ժամանակ: 1774 թուականին նա առաջին անգամ
փորձեց գրել մի քանի տեսարաններ իւր անմահ ողբերգու-
թեան, որ այնուհետեւ զբաղեցրեց նորան ամբողջ կեանքում:
«Փաուստի» տեսարանները չեն դուրս եկել մեծ քանաստեղծի
գրչի տակից այն կարգով, ինչպէս որ մենք այդ տեսնում
ենք նորա աննման հեղինակութեան մէջ, այլ նոցանից մի
քանիսը առաջ, միւսները յետոյ, եւ քացի դորանից նոքա

108631-ՎԸ



4185-ԷՅ

գրուած են հոգեկան այլեւայլ տրամադրութեան տակ եւ այդ պատճառով, կարծես, պակաս է ներքին կապը. քայց այդ ըստ նրեւոյթին միայն, որովհետեւ ըրորը միասին կազմում են մի սքանչելի, հոյակապ եւ խորը մտածուած ամբողջութիւն: Գէօթէն ոչ միայն ամենամեծ քանաստեղծն է նոր ժամանակների, այլ եւ քաղմակողմանի գիտնական եւ փիլիսոփայ, որ մարդկային գիտութեան եւ ոչ մի ճիւղ չէր թողնում առանց հիմնաւոր եւ խորին ուսումնասիրութեան եւ իւր հետազոտութիւններով եւ քաղմաթիւ ուսումնական շարադրութիւններով դարձնում էր իւր վերայ ամբողջ գիտնական աշխարհի ուշադրութիւնը: Ահա այդ գիտնական պարապմունքներով յափշտակուած, Գէօթէն երբեմն դադարում էր զբաղուել իւր սիրած եւ փայփայած ստեղծագործութեամբ, կամ փոխում եւ նորից մշակում նորա զանազան մասները. եւ այդ է պատճառը, որ միայն 1806 թուականին լոյս տեսաւ «Փաուստի» առաջին մասը այնպէս, ինչպէս որ այն տեսնում ենք հիմա. իսկ ամբողջ գրուածքը նա վերջացրեց իւր մահից հազիւ մէկ տարի առաջ, այն է 1831 թուականին:

Թէեւ մինչեւ Գէօթէի «Փաուստի» լոյս տեսնելը միեւնոյն աւանդութիւնը մշակել էին շատ տաղանդաւոր մատենագիրներ եւ քառասունդոններ, ինչպէս Լէսսինգը, Միլլէրը, Կլինգէմանը, Գրաբբէն, Լէնաուն եւ ուրիշները եւ գերմանական գրականութեան մէջ արդէն գոյութիւն ունէին 39 ինքնուրոյն դրամատիկական եւ վիպասական շարադրութիւններ, սակայն ոչ մէկը նոցանից չունի այն կատարելութիւնները եւ համաշխարհային նշանակութիւնը, ինչպէս Գէօթէի «Փաուստը». նոքա ըրորը համարեա թէ արդէն մոռացուել են, իսկ վերջինը կայ եւ կը մնայ յաւիտեան, իբրեւ ամենափառաւոր եւ անջնջելի արձան իւր անմահ հեղինակին:

«Փաուստը» Գէօթէի կեանքի ծշգրիտ պատկերն է: Ահա նորա սեպհական խօսքերը. «Ես էլ», ասում է նա, «Փաուստի պէս փորձեցի գիտութեան ամբողջ շրջանը եւ շուտով իմացայ նորա ըրոր ունայնութիւնը. ես էլ նորա պէս գնում էի կեան-

քի ըրոր շաւիղներով եւ ամեն անգամ վերադառնում էի աւելի անքաւական ու տանջուած»:

Գէօթէի «Փաուստը» քաղմակողմանի ուսումնասիրել, քննել ու քացատրել են շատ ականաւոր մատենագիրներ եւ զրբել են քաղմաթիւ հատորներ: Գերմանական գրականութեան այդ անգին զոհարը դարձել է սեպհականութիւն ամբողջ մարդկութեան, թարգմանուած լինելով ըրոր քաղաքակիրթ ազգերի լեզուներով:

Մինչեւ այժմ հայերէն լեզուով ունինք երկու թարգմանութիւն «Փաուստի» առաջին մասի. մէկը Պ. Մ. Նուպարեանի, որ տպագրուած է 1881 թուականին Զմիւռնիայում հրատարակուող «Մէտէօրա» հանդիսում: Թարգմանութիւնը կատարուած է Ֆրանսերէնից արձակ եւ միայն տեղ տեղ ոտանաւորով: Պ. Մ. Նուպարեանը Ժէրար դը Նէրվալի «Փաուստի» Ֆրանսերէն թարգմանութիւնն է հայացրել, իբրեւ այդ լեզուով գոյութիւն ունեցող երեք թարգմանութիւններից ամենից յաջողուածը: Միւս թարգմանութիւնը պատկանում է մեծապատիւ Բժիշկ պ. Լեւոն Տիգրանեանին, որ թարգմանել է քնազրից, նոյնպէս արձակ: Պ. Տիգրանեանի թարգմանութիւնը լոյս տեսաւ 1900 թուականին:

Ես էլ թարգմանել եմ «Փաուստի» միայն առաջին մասը, աշխատելով, կարողութեանս չափ, մօտ մնալ քնազրին, որքան հնարաւոր էր այդ իրագործել մի տաղաշափական գրուածքի մէջ: Թէ որքան յաջողել է ինձ այդ քանը, թող անաշու կրիտիկան արտասանէ այդ մասին իւր վճիռը:

Գեորգ Բարխոդարեանց

1902 թ. Մարտի 20-ին

ԹԻՖԼԻՉ

Ֆ Ա Ո Ւ Ս Տ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍԷ



Ն Ո Ւ Ի Ր Ո Ւ Մ Ն



րկին յայտնվում էք, պատկերներ աղօտ,
 Որ երեցար երբեմն իմ աչքին:
 Փորձեմ այս անգամ պահել ձեզ ինձ մօտ,
 Զգում եմ իմ սիրտը հակուած այն ցնորին:
 Խմբվում էք իմ շուրջ՝ օղում մշուշոտ:
 Զատ լաւ, հակառակ չեմ ես ձեր կամբին,
 Կուրծքս զգում է ոյժ պատանեկական,
 Դիպչելով ինձ ձեր շունչը դիմական:

Բերում էք ձեզ հետ ուրախ օրերի
 Պատկերները և սիրելի ստուերներ:
 Իբր աւանդութիւն անցած դարերի
 Զարթում է սրտումս առաջին սէր:
 Վիշտս նորոգվում, սրտիս լարերի
 Հնչիւնը կրկնում է հին գանգատներ,
 Եւ անուանում է սիրելիներին,
 Որոնք հեռացան, թողին ընկերին:

Նորա չեն լսում իմ նոր երգերը,
Որոնց երգեցի երգերս առաջին:
Աւաղ, ցրուած են բարեկամները,
Քնարս չէ հնչում նոցա ականջին:
Երգս լսում են անծանօթները:
Ուրախ չեմ անգամ, թէ գովել հաճին,
Իսկ, որոնք էին երգովս զմայլուած,
Թէև ապրում են, հեռու են ցրուած:

Եւ ինձ քաշում է բուն ցանկութիւն
Դէպ' կախարդական խաղաղ աշխարհը.
Իմ թոթով երգը արձակում հնչին,
Ինչպէս էօլի տաւիղի լարը:
Դողում եմ, լացն է ինձ թեթևութիւն,
Նա հալածում է սրտիս խաւարը.
Այն, ինչ որ ունիմ, հեռու է թվում,
Ինչ որ էլ չկայ, ինձ պարզ երևում:



ՆԱԽԵՐԳԱՆՔ ԹԱՏՐՈՆՈՒՄ



ԿԱՌԱՎԱՐԻՉ, ԲԱՆԱՍՏԵՂԾ, ԿԱՏԱԿԵՐԳՈՒ

ԿԱՌԱՎԱՐԻՉ

արեթիս մէջ օգնել էք ինձ
Դուք շատ անգամ, բարեկամներ.
Արդ, ուզում եմ լսել ձեզնից,
Կը յաջողի՞ ձեռնարկը մեր:
Ցանկալի է հաճոյանալ ինձ ամբողջին,
Մանաւանդ որ ամբողջն է մեզ ապրուստ
տալիս:

Արդէն բեմը պատրաստուած է բոլորովին,

Եւ ամենքը տօն են սպասում, այստեղ գալիս:
Ուզում են, որ այնպիսի բան ներկայացնենք,
Որ մենք նոցա թէ՛ զուարճացնենք, թէ՛ դարմացնենք:
Այո, գիտեմ, ժողովուրդը ինչ է սիրում,
Սակայն երբէք այսպէս նեղը չեմ ընկել ես.
Թէպէտ լաւ բան քիչ է տեսել նա իւր օրում,
Միայն թէ շատ է կարգացել ընդհանրապէս:
Արդ, ընկերներ, խորհուրդ տուէք, ինչպէս անենք,
Արժանաւոր և հաճելի խաղ բեմ հանենք:
Չատ եմ սիրում տեսնել, ինչպէս ժողովուրդը,
Խռնուելով, պաշարում է մեր խանութը,
Ներս է նետվում բռնի, իբրեւ ուժգին հոսանք,
Չեն դիմանում նորա ոյժին դուռն ու փականք:

Լոյս ցերեկով, ժամը չորսը չլրացած,
Ժողովրդով նախագաւթն արդէն լցուած,
Տոմսակներէ համար ճնշում, հրում են իրար,
Ինչպէս սովին հացթուխի մօտ հացի համար:
Այդ հրաշքը բանաստեղծին է հնարաւոր.
Ի՞մ բարեկամ, խնդրում եմ, այդ արա՛ այսօր:

ԲԱՆԱՍՏԵՂԾ

Մի յիշեցնիր ինձ ամբոխը խաթամուծ,
Որի տեղից թուլանում է ոգոյս ոյժ:
Ծածկիր ինձնից այդ հոսանքը վայրենի,
Որ մեզ իւր հետ քշում, տանում է բռնի:
Տա՛ր ինձ դէպի խաղաղ վայրը երկնային,
Ուր ծաղկում է ուրախութիւնն անարատ,
Ուր սուրբ սէրը պարգևում է մեր սրտին
Քաղցր վայելք, երջանկութիւն անընդհատ:

Ա՛խ, այն, ինչ որ սրտի խորքից է բխում
Եւ անվատահ թոթովում է մեր բերան,
Յաջողում է արդեօք, թէ չէ յաջողում,
Մի հատ վայրկեան ոչնչացնում է նորան:
Յաճախ պէտք է անցնեն երկար տարիներ,
Մինչև կառնէ նա կատարեալ մի պատկեր:
Կարճատև է, ինչ փայլում է արտաքուստ,
Պատուականը միշտ կըմնայ անկորուստ:

ԿԱՏԱԿԵՐԳՈՒ

Հետաքրքիր չէ ինձ համար ապագան.
Եթէ ես էլ նորա մասին խօսէի,
Էլ ո՞վ, ասա՛, պիտ' զուարճացնէր մեր ներկան,
Այդպէս մէկին տեսնել ես շատ կուզէի:
Սակայն ներկան, ինչպիսի էլ որ լինի,
Կտրիճ մարդը անուշադիր չի թողնի.
Ով որ գիտէ ժողովուրդը զբաղեցնել,
Նրա հաճոյքը կարող չէ նրան դառնացնել.
Նա խնդրում է աւելի լայն ասպարէզ,
Ուր կարող է իւր ձիրքերով գալ հանդէս:

Դէ՛հ, ուրեմն ցոյց տուէ՛ք ձեր շնորհքը.
Բե՛մ հանեցէ՛ք դուք մարդկային ցընորքը,
Իմաստութիւն, խելք, միտք, զգացմունք ու կրքեր,
Զմուռնա՛ր յիմարութեանն էլ տալ դեր:

ԿԱՌԱՎԱՐԻՉ

Մանուանդ թէ ամեն տեսակ արկածքներ:
Մարդիկ թատրոն գալիս են, որ բան տեսնեն:
Թէ ցոյց կըտար դուք այնպիսի պատկերներ,
Որոնք նոցա զարմացնեն ու շլացնեն,
Ապա ձերն է յաղթութիւնն այն ժամանակ,
Ժողովուրդի սիրելին էլ կըդառնար:
Բազմութիւնը միայն բազմութեամբ կը յաղթէր.
Ամեն մէկը իւր ուզածը կըստանայ,
Չատ բան տալով, չատ շատերին կըշահէր,
Եւ մեն մէկը գոհ սրտով տուն կըգնայ:
Ձեր հատուածը հատուածներից կազմեցէ՛ք.
Կըյաջողի ձեզ, միայն թէ կամեցէ՛ք.
Ձեզ համար հեշտ է այդ բանը հընարել.
Մեզ համար էլ միևնոյնը կատարել:
Ի՞նչ օգուտ, թէ կարտադրէ՛ք մի ամբողջ բան.
Ամբոխն էլի պատառ պատառ կանէ այն:

ԲԱՆԱՍՏԵՂԾ

Դուք չէ՛ք ըզգում, որքան ստոր է այդ արհեստը
Եւ անվայել մի ճշմարիտ բանաստեղծին:
Տեսնում եմ, որ սովոր էք տալ ձեր գովեստը
Անընդունակ զրողների մրոտածին:

ԿԱՌԱՎԱՐԻՉ

Ի դուր էք ինձ յանդիմանում, բարեկամ:
Լսեցէ՛ք ինձ, ձեզ մի բարի խորհուրդ տամ:
Նպատակին յարմար միջոց գործ դրէ՛ք,
Թէ չէ՛ք ուզում, որ ձեզ ի դուր չարչարէ:
Դիտէ՛ք արդեօք, ո՞ւմ համար էք դուք պրում:
Մէկին այստեղ տանջող ձանձրոյթն է բերում,
Իսկ միւսը գալիս է կուշտ սեղանից.
Չատ շատերն էլ, և այդ է վատն ամենից,

Հրադիրներում կարգադրութիւն են դատում:
Թատրոնն իբր պարահանդէս նկատում.
Նորութիւնն է հետաքրքրում ամբոխին.
Կանայք իրանց դարձերն են ի ցոյց հանում,
Որ հրապուրեն իրանց վերայ նայողին,
Եւ բեմի վրայ ուշադրութիւն չեն դարձնում:
Ինչի՞նչ էք ձեզ այդպէս բարձր երազում,
Ուրախանում, երբ տունը լիքն էք տեսնում:
Նայեցէք ձեր պաշտպաններին դուք մօտից.
Կէսը սառն է, կէսը կոպիտ նոցանից:
Սա թատրոնից կերթայ ուղիւ խաղատուն,
Բողի գրկում կըլուսացնէ միւսն անքուն.
Դորա համար մի՞թէ արժէ, յիմարներ,
Որ ձեր ձեռքն տանջուին չքնաղ մուսաներ:
Ասում եմ ձեզ, շատ բան տուէք, շատ և շատ,
Եւ կըհասնէք նպատակին դուք հաստատ:
Աշխատեցէք ամբօք մոլորեցնել.
Դժուար է նրան բոլորովին գոհացնել:—
Հը՞, սկսում էք ոգեորուել, թէ տխրել:

ԲԱՆԱՍՏԵՂԾ

Գնա՛, որոնիր դու մի այլ ստրուկ քեզ համար:
Բանաստեղծը չի վատնի այդպէս թեթիկ
Իւր մարդկային վեհ իրաւունքն ու քանդար,
Որ ստացել է բընութենից նա պարգև:
Ինչո՞ւ է նա շարժում մարդկանց սրտերը,
Ինչո՞ւ է նա յաղթում յուզուած կրքերը:
2է՛ որ նորա սրտից բղխող հնչիւնն է այն.
Սրտից, որում ամփոփվում է աշխարհն համայն:
Մինչ բնութիւնը, պտոյտ տալով ճախարակը,
Ուրում է ժամանակի թերն անտարբեր,
Աններգաշնակ աղմկում է այս աշխարհքը,
Եւ խռնվում են նրա մէջ ապրող արարածներ.
Ո՞վ է տալիս կանոնաւոր ընթացք կեանքին,
Ներշնչելով շափակցութիւն նրա հոսանքին.
Ո՞վ է կազմում, միացնելով մէկ մէկ հնչիւն,

Մի հրաշալի և ներգաշնակ ամբողջութիւն.
Ո՞վ է մրրիկ դարձնում մարդու սրտի յոյզը,
Ո՞վ է ներկում ոսկէ գոյնով վերջալոյսը.
Ո՞վ գեղեցիկ ծաղիկները դարնանային
Ցանում է իւր սիրականի ճանապարհին.
Ո՞վ է կանաչ տերևներից հիւսում պսակ
Եւ պսակում ամեն տեսակ աղնիւ վաստակ.
Ո՞վ Օլիմպում միացնում է աստուածներին—
Մարդու ոյժը, որ յատուկ է պովէտներին:

ԿԱՏԱԿԵՐԳՈՒ

Դէ՛հ, ցոյց տուէք ձեր գեղեցիկ ոյժը գործով
Եւ սկսեցէք պովէտական մի նոր փորձով,
Ինչպէս մէկը, որ սկսում է սիրոյ արկածը:
Նա պատահամբ հանդիպում է մի աղջկան,
Հաւանում է, չէ հեռացնում նորանից աչք.
Կամաց կամաց սարքում է ինքն իրան ական
Եւ այդպէսով խճճվում է սիրոյ ցանցում:
Մէկ, կարծես թէ, երջանիկ է, մէկ նախանձում,
Մէկ ցնծում է, մէկ հիւանում և մէկ զգում վիշտ.
Այդպէս ահա և պատրաստ է բօմանը միշտ,
Եկէք, մենք էլ ներկայացնենք մի նման բան:
Մարդկանց կեանքում յարմարաւոր նիւթեր չատ կան.
Իրար կեանքին մարդիկ ծանօթ չեն ու տեղեակ.
Հետաքրքիր կըլնի, ինչ որ դուք մեզ կըտաք:
Հանգէս բերէք շատ պատկերներ աղօտ ու մութ,
Մոլորութեան հետ և մի կայծ ճշմարտութիւն.
Այդպէս, ահա, կարող էք դուք աւելի շուտ
Ձեր գրուածքին տպահովել յաջողութիւն:
Այն ժամանակ երիտասարդ մարդիկ կըզան
Ուշադրութեամբ լսելու ձեր յայտնութիւնը.
Նոցա քնոյշ սիրտն ու հոգին այնտեղ կըզզան
Ձեր խօսքերի հոգեսնունդ զօրութիւնը:
Ամեն մէկը բեմի վերայ ձեր հատուածում
Կըտեսնէ, թէ ինքն ինչ է զգում ու մտածում.
Եւ պատրաստ են նոքա իսկոյն լալ ու խնդալ,

Թէ լսածով, թէ տեսածով ուրախանալ:
Ով փորձուած է, դժուար է նրան զոհացում տալ.
Անփորձները միշտ կըլինին չնորհակալ:

ԲԱՆԱՍՏԵՂԾ

Ապա տուր ինձ նորից դու այն ժամանակը,
Երբ որ ինքս էի դեռ մի երիտասարդ,
Գեղածիծաղ ժպտում էր ինձ մատաղ կեանքը,
Եւ ես երգեր երգում էի ուրախ ու զուարթ.
Երբ աշխարհը դեռ ծածկուած էր ինձնից մէզով,
Երբ որ ծաղիկ կոկոնը հրաշք էր խոստանում,
Եւ ես զմայլում ծաղիկների սիրուն տեսքով
Հովիտներում, բնութեան շքեղ բուրաստանում:

Ինքս ոչինչ չունենալով,

Զգում էի ինձ անչափ հարուստ.

Ճամարտութիւն որոնելով,

Ցնորքից չէի տալիս փախուստ:

Տուր ինձ իմ այն ձգտումները,

Այն երջանիկ ցնցումները,

Ատելութեան ոյժը, սիրոյ զօրութիւնը.

Ա՛խ, տուր ինձ դու իմ երիտասարդութիւնը:

ԿԱՏԱԿԵՐԳՈՒ

Երիտասարդ լինել պէտք է քեզ, բարեկամ,
Երբ թշնամին քեզ արիւնոտ դաշտն է կանչում,
Երբ սիրունիկ աղջիկները յօժարակամ,
Վզիդ կախուած, քեզնից գլուանք են պահանջում.
Երբոր դժուար հասանելի է նպատակ,
Որի համար պիտի ստանաս դու մրցանակ.
Երբոր պէտք է այնքան պարեւ, մինչև քրտնեւ,
Գիշերները կեր ու խումով միշտ լուսացնես:

Սակայն լարերը հնչեցնել,

Մեր լսելիքը քաղցրացնել,

Դիմել ընտրած նպատակին,

Դոհացում տալ մեր ճաշակին,

Ծեր պարոններ, այդ բանը ձեր պարտքն է ահա:

Դորա համար չի պակասի պատիւը ձեր:

Ասում են, թէ ծերը դառնում է երեխայ:
Ո՛չ, այլ մենք ենք նորա առաջ երեխաներ:

ԿԱՌԱՎԱՐԻՉ

Լաւ կանէք, որ վերջացնէք:

Չատ խօսելուց ի՞նչ օգուտ:

Զուր ժամանակ մի կորցնէք,

Հիմա դործին կպէք շուտ:

Ոգևորուել կարող չէ նա,

Ով վստահ չէ իւր անձի վրայ.

Ուրեմն, թէ բանաստեղծ էք,

Ձեր արուեստի վրայ իշխեցէք:

Դիտէք, մեզ ինչ է հարկաւոր.

Մենք ուզում ենք խմիչք զօրաւոր:

Ուրեմն շուտ պատրաստեցէք

Եւ այս բանը լաւ իմացէք.

Պէտք չէ թողնել վաղուայ համար,

Ինչ որ այսօր անել է հնար:

Մեր բեմի վրայ ամեն մէկը

Փորձում է իւր ձիրքն ու լսելքը:

Այսօր ոչինչ մի խնայէք,

Տեսարաններ, մերեմաներ.

Թէ հարկաւոր է զործ դրէք

Արեւ, լուսին, փայլուն աստղեր,

Քարաժայռեր, ջուր ու կրակ,

Գազան, թռչուն ամեն տեսակ.

Բեմի վրայ թող հանդէս դայ

Բոլորն, ինչ որ աշխարհում կայ.

Եւ երկնքից երկրի վրայով

Իջէք զըժովքն արագ քայլով:

ՆԱԽԵՐԳԱՆՔ ԵՐԿՆՔՈՒՄ



ՏԷՐԸ, ԵՐԿՆԱՅԻՆ ԶՕՐՔԸ, ապա ՄԷՓԻՍՏՕՓԷԼԷՍ



Մտնում են երեք ՀՐԵՃՏԱԿԱՊԵՏՆԵՐԸ

ՌԱՓԱՅԷԼ

աշնակցում է արեգակը
Խմբերգում իւր եղբայրներին,
Կատարելով իւր ընթացքը,
Նախագծած կամքով վերին:
Նրա տեսքը մեզ տալիս է ոյժ,
Անքնին են գործը Արարչին,
Հրաշալի են, սքանչելի յոյժ,
Ինչպէս էին օրն առաջին:

ԳԱՅՐԻԷԼ

Եւ երկիրը արագ արագ
Սլանում է եթերի մէջ,
Օր ու գիշերը շարունակ
Փոփոխում են իրար անվերջ.
Ծովը փրփրած ալիքներով
Ժայռերին է զարկվում յաւէտ,
Ցափշտակած և ժայռ և ծով,
Քշում տանում է գունդն իւր հետ:

ՄԻՔԱՅԷԼ

Եւ մրրիկներ շառաչելով
Ցամարի ու ծովի վերայ,

Զուրջ աւերմունք տարածելով,
Կազմում են մի գործող շղթայ.
Յանկարծ վառվում է կայծակը
Եւ հրկիզում է իւր ուղին.
Բայց մեզ, Տէր, քո արեգակը
Ժպտում է, փառք նրա ստեղծողին:

ՆՐԵՔԸ ՄԻԱՍԻՆ

Այդ տեսքը մեզ տալիս է ոյժ.
Անքնին են գործք Արարչին,
Հրաշալի են, սքանչելի յոյժ,
Ինչպէս էին օրն առաջին:

ՄԷՖԻՍՏՕՖԷԼԷՍ

Ահա, Տէր, կրկին մօտենում ես մեզ
Եւ հարցնում. ինչպէս է մեր նիստ ու կաց.
Երբեմն ինձ տեսնել հաճելի էր քեզ,
Ծառաներիդ հետ կամ այժմ քո պիմաց:
Պերճախօս լինել չեմ կարող, ներքի,
Թէն ինձ ծաղրէր ներկայ կաճառը:
Անշուշտ, ծիծաղել թէ կամենայիր,
Կրժիժաղացէր քեզ էլ իմ ճառը:
Արեւ, աստղերին անտեղեակ եմ ես,
Մարդկանց տանջանքին եմ ականատես:
Երկրի փոքր աստուածն է նոյնը, ինչ որ
Առաջին օրն էր—էակ խելացնոր:
Գուցէ լաւ ապրէր մարդը հողածին,
Թէ չէիր տուել նրան կայծն երկնային—
Խելքը, որ միայն գործ է ածում նա,
Որ անասնից էլ անասուն դառնայ:
Նա, թէ թոյլ կըտայ ձեր մեծութիւնը,
Ունի ճպտութիւն քնաւորութիւնը,
Որ թռչում, ոստնում է խոտերի մէջ
Եւ իւր հին երգը միշտ երգում անվերջ:
Եւ թող միշտ պառկած մնար նա խոտում.
Ո՛չ, ամեն ցեխում իւր քիթն է խոթում:

ՏԷՐԸ

Ուրիշ բան չունիս դու ինձ ասելու:
Դալիս ես միայն միշտ դանդաղութիւն:
Մի՞թէ երկրի վրայ ամեն բան վատ է:

ՄԷՖԻՍՏՕՖԷԼԷՍ

Այո, այդ մասին կարծիքս հաստատ է:
Մարդիկ այնքան խեղճ են այնտեղ, թշուառ,
Որ նոցա տանջելն է ինձ շատ դժուար:

ՏԷՐԸ

Ճանաչում ես դու այնտեղ Փառաստին:

ՄԷՖԻՍՏՕՖԷԼԷՍ

Դօկտորին, Տէր իմ:

ՏԷՐԸ

Այո, իմ ստրկին:

ՄԷՖԻՍՏՕՖԷԼԷՍ

Տարօրինակ է ծառայում նա ձեզ:
Ուտում, խմում չէ հողեղէնի պէս:
Չարունակ ձգտում է հեռուն ու վեր.
Մասամբ ըզգում է իւր խելառութիւն.
Նա պահանջում է երկնքից աստղեր,
Եւ երկրից ամեն մի վայելչութիւն.
Եւ ոչ մօտիկը, և ոչ էլ հեռուն
Չեն յագեցնում նրա կուրծքը երեւուն:

ՏԷՐԸ

Թ'և ծառայում է նա այժմ ինձ անճիշտ,
Բայց շուտ նրա միտքը կըլուսաւորուի:
Չէ՞ որ պարտիզպանն անշուշտ գիտէ միշտ,
Ե՛րբ պիտի ծառը պտղով զարդարուի:

ՄԷՖԻՍՏՕՖԷԼԷՍ

Գրագն ինչ է, որ դուք նորան կըկորցնէք,
Եթէ թոյլ կըտար ինձ ու կըյանձնէք,
Որ նորան տանեմ իմ ճանապարհով:

ՏԷՐԸ

Ես չեմ արգելի, եղբի ապահով,
Քանի ապրում է նա երկրի վերայ:



4185-78

Քանի մարդ ձգտում, մոլորվում է նա:

ՄԷՖԻՍՏՓԷԼԷՍ

Չնոյն հարկալ եմ. մեռելների հետ
Երբէք կամեցել չեմ դարձ ունենալ.
Վարդապետն այտեր սիրել եմ յաւէտ,
Դիակից ես ինչ կարող եմ յուսալ.
Կատուն սիրում է մկան հետ խաղալ:

ՏԷՐԸ

Լաւ, թոյլ եմ տալիս, գործիւր անդադար.
Հեռացրու նորան իւր սկզբնաղբիւրից,
Եւ, թէ կարող ես, քաշիր, հետդ տար,
Հանելով նորան իւր ճանապարհից.
Եւ համոզուելով մընաւ ամօթհար,
Որ բարի մարդը իւր մութ ընթացքում
Ճշմարտութիւնը պահում է կրծքում:

ՄԷՖԻՍՏՓԷԼԷՍ

Ես համաձայն եմ, չի տես երկար:
Ես երկիւղ չունիմ գըրադիս համար:
Երբ նպատակիս հասնեմ իմ ջանքով,
Թոյլ տուէք, տօնեմ յաղթանակս ես.
Հոգ պիտի ուտի նա ախորժանքով,
Բազմահաշակ օձ մօրաքրոջս պէս:

ՏԷՐԸ

Աղատ, համարձակ կարող ես գործել.
Քեզ նմաններին ատել չեմ փորձել.
Բոլոր ապստամբ, սև ոգիներից
Ամենից սակաւ դու ես ընդդէմ ինձ:
Մարդը թմրում է, չէ միշտ ջանասէր.
Նա շատ է սիրում անպայման հանգիստ,
Այդ պատճառով նրան տալիս եմ ընկեր
Սատանայ, որ նրան դրդէ, ցնցէ խիստ: —
Իսկ դուք, Աստուծոյ որդիք լուսաւոր,
Դուք ուրախացէք վեհ գեղեցկութեամբ:
Այն, ինչ որ պիտի լինի, ծնի նոր,
Պատէ ձեզ սիրոյ գրկախառնութեամբ:

Եւ ինչ որ թրվում է կասկածելի,

Ամրացրէք մտքով անսասանելի:

Երկինքը փակվում է, հրեշտակապետները բաժանվում են ղանազան կողմեր:

ՄԷՖԻՍՏՓԷԼԷՍ (մենակ)

Երբեմն ծերին յօժար եմ տեսնել,

Եւ զգուշանում եմ նորան բարկացնել:

Ինչ լաւ է, երբոր սրա պէս մի մեծ պետ

Մարդավարի է խօսում դէի հետ:



ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆ ԱՌԱՋԻՆ ՄԱՍԸ



Գ Ի Շ Ե Ր

ՓԱՌԻՍՑ

(Մի բարձրակամար, նեղ դոժական սենեակում անհանգիստ նստած է բազկաթոռի վերայ, դրակալի առաջ։)



Տ, ուսել եմ մեծ ջանքով
Եւ անխոնջ աշխատանքով
Ես փրկիստփայութիւն,
Եւ իրաւաբանութիւն,
Եւ բժշկականութիւն,
Ա՛խ և աստուած՝ բանութիւն։
Բայց նոյնքան եմ ես խելօք,
Որքան էի նախօրօք.
Մագիստրոս եմ և դօկտօր,
Տասնեակ տարի է, ինչ որ
Աշակերտներիս ի զուր
Ման եմ ածում ծուռն ու մուռ—

Եւ տեսնում եմ, որ ո՛չինչ չենք կարող մենք գիտենալ։
Այս միտքը ինձ տանջում է, չէ ուզում ինձ հանգիստ տալ։

Թէն աւելի խելօք եմ, քան բոլոր յիմարներ,
Մագիստրոս ու դօկտօրներ, գրողներ ու տէրտէրներ,
Թէն ոչինչ կասկածներ անհանգիստ չեն անում ինձ,
Զեմ վախենում դժոխքից և ոչ էլ սատանայից:
Բայց և խլուած է ինձնից ամեն մի ուրախութիւն,
Զեմ կարող ասել ինքս ինձ, թէ ունիւմ ես գիտութիւն,
Զեմ կարող ասել ինքս ինձ, թէ մարդկանց ուսում տալով,
Նոցա բարբը ուղղում եմ, սիրտն ու հոգին կրթելով:

Չունիւմ ստացուածք, չունիւմ դրամ,
Ոչ փառք, պատիւ աշխարհի.
Այսպէս չունն էլ չի ապրի:
Ես մոգութեան ինձ կըտամ,
Գուցէ ոգին ինձ օգնէ,
Ինչ որ դադտնիր կայ, յայտնէ,
Որ չքրտնեմ ամօթհար,
Ջգալով, ինչումն եմ տկար,
Որ իմանամ բընութեան
Ներքին կապը միութեան,
Տեսնեմ մրցումն ոյժերի,
Միտքս ասեմ անթերի:

Բոլորակ լուսին, երանի՜ վերջին
Անգամ տեսնէիր խեղճ մտաւանջին:
Ա՛խ, քանի՜, քանի՜ անքուն գիշերներ
Լուսացրել եմ ես այս սեղանի մօտ
Գրքերի վերայ և դու, իմ ընկեր,
Ինձ լոյս ես տուել մինչև առաւօտ:
Երանի՜ շրջել կարողանայի
Լեռների վրայ քո ճառագայթներում,
Ոգիների հետ վեր սլանայի,
Ապրէի անհոգ կանաչ դաշտերում,
Գիտութեան ծարաւս իսպառ անցնէր,
Եւ ինձ երկնային ցողը զովացնէր:

Վայ ինձ, դեռ ես բանտումն եմ նստած,
Այս խուլ ու խաւար ծաղում անիծած,
Ինչտեղ որ ներկած ապակիներում
Արևի լոյսն էլ մութն է երևում:
Զուրջս փոշիոտ գրքերի կոյտեր,
Որսնց կրծելով ուտում են որդեր,
Եւ որոնց վերայ մինչև կամարներ
Դիզած են դեղնած թղթի ծրարներ.
Զիշեր, անօթներ, զանազան գործիք,
Պատերից մնացած հին կահ-կարասիք—
Ահա, այս է քո աշխարհը անձուկ,
Ահա, ինչ տեղ ես ապրում դու, խեղճուկ:

Դու հարցնում ես, էր քո սիրտը
Երկշոտ ճնշվում է քո կրծքում,
Անասելի ծանր վիշտը
Անբաժան է քեզնից կեանքում:
Քեզ փոխանակ բնութեան զուարթուն,
Որում Աստուած ստեղծեց մարդուն,
Զուրջ պատում է լոկ ծուխ ու փուտ,
Կմալք, մահուան պիղծ կողոպուտ:

Փախիր բնութեան ազատ գիրկը:
Նօստրադամի ձեռով գրած
Խորհրդաւոր քեզ այս գիրքը
Լաւ ուղեկից ունիս ընտրած:
Աստղերի գնացքը կիմանաս,
Բնութիւնը քեզ կըստվեցնէ.
Նա քո հոգին կըզօրացնէ,
Ոգիներին կընկերանաս:
Մեր չոր խելքը չի բացատրի
Այս սրբազան նշանները.
Պատասխանը իմ հարցերի
Պիտի տան ինձ ոգիները:

Բաց է տնում գիրքը եւ տեսնում է Մակրոկոսմոսի նշանը:

Ահ, ինչ ցնծութեամբ լցնում է յանկարծ
հոգիս հրաշալի այս նշանակը:
Ես զգում եմ, ինչպէս նորից բորբոքուած,
Վառում է անձս մանկութեան կրակը:
Աստուած է գծել այս նշանները,
Որոնցից ներքին վրդովս իջնում,
Իմ խեղճուկ սիրտը խնդութեամբ լցվում,
Եւ իմ շուրջ բնութեան զօրութիւնները
Սքանչելի ձգտմամբ նորա մերկացնում:
Աստուած եմ արդեօք, ինչպէս լաւ է ինձ:
Ես տեսնում եմ այս մարուր գծերից
Կենդանի բնութիւնն իմ հոգու առաջ:
Նոր եմ հասկանում իմաստունին քաջ.
«Բաց է աշխարհը հոգեղէն.
Քո միտքն է փակ, սիրտդ մեռած:
Վեր կաց, լուսն կուրծքդ հոգեղէն
Արշալուսում շքեղ վառած»:

Դիտում է նշանը:

Ինչպէս բոլորը ամբողջ է կազմում,
Մէկը միւսում ապրում ու գործում:
Ինչպէս երկնային զօրութիւնները
Լցնում են ոսկեղէն անօթները.
Թեթեւ շարժելով փայլուն թևերը,
Երկնքից երկրի վրայ իջնում արագ
Եւ հնչեցնում են նուագ ներդաշնակ:

Ոհ, ինչ տեսարան. բայց, աւանդ, պատիր
Տեսարան միայն: Ինչպէս գրկեմ քեզ,
Անսահման բնութիւն, ինչպէս, ծծեր, ձեզ,
Որ սննդում էք երկինք ու երկիր.
Ձեզ է փափագում կուրծքս թառամած—
Է՛ր պիտի մնամ միշտ ծարաւ, քաղցած:

Դժգոհութեամբ թերթում է գիրքը եւ տեսնում է երկրի ոգու նշանը:

Այս նշանն ազդում է վրաս այլապէս:
Դու, երկրի ոգի, աւելի մօտ ես
Ինձ և զգում եմ ես ինձ զօրացած,
Արիւնս, կարծես, նոր գինուց եռաց.
Վստահ կարող եմ ես աշխարհ մտնել,
Վիշտ, ուրախութիւն սրտումս տանել,
Մրրիկների հետ կըմտնեմ ես մարտ,
Նաւարեկութեան կընայեմ հանդարտ:

Վերեն ամսում է—

Լուսինը ծածկվում—

Կանթեղն հանգչում է—

Ծուխ է բարձրանում—

Գլխիս շուրջ կարմիր

Հողեր են փայլում—

Կամարից վերաս

Սարսուռ է փչում,

Եւ անձս պատում.

Զգում եմ, շուրջ դու ես,

Ոգի, սաւառնում:

Ցոյց տուր ինձ դէմքդ:

Սիրտս զոգում է,

Նոր զգացմունքներով

Ալեկոծվում է:

Քեզ բոլոր սրտով անձնատուր եմ ես:

Թէ մեռնիմ անգամ, պիտի տեսնեմ քեզ:

Նա վեր է առնում գիրքը եւ խորհրդաւոր կերպով արտասանում է ոգու նշանը:

Յանկարծ վառվում է կարմրագոյն բոց եւ բոցի մէջ երևում է

ՈԳԻՆ:

ՈԳԻ

Ո՛վ է կանչում ինձ:

ՔԱՌԻՍՏ (երեսը դարձնելով):

Սոսկալի երես:

ՈԳԻ

Դու ինձ քաշել ես գեպի քեզ ուժգին,

Երկար սննդուել ես դու իմ կրծքին,
Եւ հիմա —

ՓԱՌԻՍՏ

Վայ ինձ, անտանելի ես:

ՈԳԻ

Դու աղերսում ես, որ քեզ երևամ,
Որ ձայնս լսես, որ դէմքս ցոյց տամ.
Եւ ես, լսելով քո աղերսանքը,
Ահա, այստեղ եմ:—Քո զարհուրանքը
Ջարմացնում է ինձ, ով դու զօրեղ մարդ:
Ո՛ւր է քո հոգու հրաւէրը զուարթ,
Ո՛ւր այն կուրծքը, որ աշխարհն ընդարձակ
Ուզում էր առնել իւր մէջ համարձակ.
Որ ոգիներին հետ մի հաւասար
Ձգտում էր թռչել դէպ' վերին աշխարհ:
Ո՛ւր ես, Փառուտ, որի ձայնն ինձ հնչեց,
Որ պաղատագին ինձ իւր մօտ կանչեց:
Այդ դու ես, որին հաղիւ թէ դիպաւ
Իմ շունչը, բոլոր մարմնով սարսեցաւ.
Որ կծկվում է վախկոտ որդի պէս:

ՓԱՌԻՍՏ

Բոցեղէն ծնունդ, խոնարհիմ ես քեզ:
Ա՜յ, Փառուտն եմ, քեզ նման եմ ես:

ՈԳԻ

Կեանքի հոսանքում, գործի մրրկում
Ես բարձրանում, իջնում եմ,
Այս ու այն կողմ հիւսում եմ:

Ծնունդ ու դերեղման,

Մի ծով մշտական,

Չարժումն անդադար,

Եւ կեանք բոցավառ.

Ժամանակի արագ անուի վերայ այսպէս
Աստուածութեան անմահ զգեստը գործում եմ ես:

ՓԱՌԻՍՏ

Դ՛ու, որ թռչում ես ամբողջ աշխարհում,

Գործունեայ ոգի, ի՜նչպէս մօտ եմ քեզ:
ՈԳԻ

Նրման ես ոգուն, որին հասկանում,
Ո՛չ ինձ:

Անյայտանում է:

ՓԱՌԻՍՏ

Ոչ քեզ,

Բայց ում:

Ես, Աստծոյ պատկեր,

Քեզ էլ չեմ նման:

Դուրը ծեծում են:

Վայ—ճանաչում եմ—օգնականս է սա:

Երջանկութիւնս չբացաւ ահա:

Ափսոս, որ տեսիլս այն փառաւոր

Խանգարում է մի անսիրտ կեղծաւոր:

Մտնում է ՎԱԳՆԵՐԸ քնահանդերձով եւ գիշերային գլխարկով, մի լսպտեր ծե-
ռին: Ֆառաստը տհաճութեամբ դարձնում է երեսը:

ՎԱԳՆԵՐ

Ներեցէք, կարծեմ բան էիք կարդում.

Անշուշտ յունական մի ողբերգութիւն:

Կուզէի վարժուել ես այդ արուեստում,

Որ այժմ ունի մեծ ազդեցութիւն:

Լսել եմ. կարող է մի դերասան

Տէրտէրին դաս տալ, իբրեւ ճարտասան:

ՓԱՌԻՍՏ

Հա, թէ տէրտէրը դերասան է մի,

Ինչպէս երբեմն գուցէ կը լինի:

ՎԱԳՆԵՐ

Երբ մարդ փակուած է միշտ իւր սենեակում,

Եւ աշխարհ տեսնում հաղիւ մի տօն օր,

Միայն հեռուից, հեռագիտակում,

Ի՜նչպէս պիտ' ազդէ խօսքով զօրաւոր:

ՓԱՌԻՍՏ

Ձոնը է, երբ ինքդ ոչինչ չես ըզգում,
Երբ խօսքը բղխում չէ հոգու խորքից,
Եւ խողների սրտերում ձգում
Բաւականութեան զրգիւ բերկրալից:
Իսկ դուք նստեցէք, կարկառանեցէք
Եւ փշրանքներից օտար սեպանի
Խառնուող կերակուր մի պատրաստեցէք,
Եփելով չնշովը ձեր բերանի:
Ձեր ճառով անշուշտ գուցէ հիանան
Երեսաները և յիմարները,
Սակայն դժուար թէ սրտեր միանան,
Թէ չեն հնչում ձեր սրտի լարերը:

ՎԱԳՆԷՐ

Ճարտար խօսքն է բաղդն ատենաբանի.
Ա՛խ, այդ բաղդին երբ կըլնի արժանի:

ՓԱՌԻՍՏ

Որոնիր ազնիւ վաստակ քեզ համար:
Պէտք չեն բոժոժներ քեզ, թէ չես յիմար:
Խելքը և առողջ միտքն ինքն ըստ ինքեան
Առանց արուեստի երևան կըզան.
Եւ երբ լուրջ կերպով խօսել կամենար,
Բառեր որսալու կարիք կունենար:
Այժմ ձեր ճառը, որ այնպէս փայլուն
Եւ վսեմ ոճով է նա զարդարուն,
Անան անախորժ հոգմն է յիշեցնում,
Որ չոր տերևներն է խշխշեցնում:

ՎԱԳՆԷՐ

Արուեստն երկար է և կարճ մեր կեանքը:
Իմ կրիտիկական ծանր աշխատանքը
Ինձ վախեցնում է: Ճշմարիտն ասեմ.
Մի գուցէ գլխիս ու կրծքիս վնասեմ,
Ո՛րքան դժուար է միջոցներ գտնել,
Որոնցով հնար է աղբիւրին հասնել:
Բայց, հազիւ հասած կէս ճանապարհին,

Մահը բռնում է խղճուկ տխմարին:

ՓԱՌԻՍՏ

Մի՛թէ մազադալմն է այն աղբիւրը,
Որ պիտ' զովացնէ մեզ նորա ջուրը:
Ո՛չ, դու զովութիւն երբէք չես ստանայ,
Թէ որ քո հոգուց չէ դուրս բղխում նա:

ՎԱԳՆԷՐ

Վայելչութիւն է, կը համաձայնիր,
Անցած դարերի ոգին թափանցել,
Տեսնել, ինչպէս են մտածել մարդիկ
Եւ որքան շատ ենք մենք առաջ գնացել:

ՓԱՌԻՍՏ

Այո՛, անշափ շատ, մինչև աստղերը:
Բարեկամ, անցեալ ժամանակները
Մեզ համար գիւրք են եօթն անգամ կնքած.
Եւ ժամանակի ոգին ձեր ասած
Է անհատների սեփական ոգին,
Որ հայելի է իւր ժամանակին:
Իրաւ, կատարեալ մի չարիք է դա,
Որից մարդ իսկոյն պիտ' փախչի, երթայ.
Դա աղբանոց է, փտած հնութիւն,
Չատ շատ պետական արձանագրութիւն,
Կազմած շատ ընտիր և վսեմ ոճով,
Որ բաց՝ յիմարից չի գովի ոչով:

ՎԱԳՆԷՐ

Սակայն ցանկալի է ամեն մէկին
Ճանաչել մարդկանց և սիրտն և ոգին:

ՓԱՌԻՍՏ

Բայց ինչո՞ւն է այդ ծանօթութիւնը:
Ո՛վ կըտայ մանկան իւր իսկ անունը:
Այո՛, եղել են այնպիսիները,
Որոնք իրանց միտքն ու զգացմունքները
Աներկիւղ ասել են հրապարակում.
Նոցա խաչել են կամ այրել կրակում:
Արդէն կէս գիշերն անցաւ, բարեկամ.

Սրանով վերջացնենք մեր խօսքն այս անգամ:

ՎԱԳՆԷՐ

Ես ուրախութեամբ կըլուսացնէի,
Որ ձեզ հետ այսպէս լուրջ խօսակցէի:
Բայց վաղը, Զատիկի առաջին օրը,
Թոյլ տուէք ինձ ձեզ մի երկու հարց տալ:
Լինելով ուսման ջերմ սպասաւորը,
Ուզում եմ ամեն բան էլ գիտենալ:

Դուրս է գնում:

ՓԱՌԻՍՏ (մենակ)

Ինչպէս այս մարդը լի է յոյսերով
Եւ միշտ զբաղուած է դատարկ բաներով:
Ուզում է գանձեր գտնել նա գետնում
Եւ ուրախ է, երբ որդեր է գտնում:

Մարդու ձայնն ինչպէս պիտի հնչէ աստ,
Ինչտեղ ժողովվել էին ոգիներ:
Բայց ես չնորհակալ լինել եմ պատրաստ
Քեզ, ո՞վ հողածին, տարաբաղդ ընկեր:
Դու ինձ փրկեցիր յուս՛հատութենից,
Որ այնպէս սաստիկ շփոթում էր ինձ:
Ա՛խ, այն մեծաշուք տեսիլքի առաջ
Ես ինձ զգում էի կատարեալ գաճաճ:

Ե՛ս, Աստծոյ պատկեր, որ ինձ մօտ արդէն
Կարծում էի վեհ ճշմարտութեանը,
Ոչ իբրեւ չնչին ծնունդ հողեղէն,
Մասնակից վերին վայելչութեանը:
Ե՛ս, որ ունեցայ համարձակութիւն
Ինձ քրովրէից էլ բարձր համարել,
Կարող թափանցել համայն բնութիւն,
Եւ Աստուածային վայելք ճաշակել,
Ի՛նչպէս պատժուած եմ. ինձ կայծակնահար
Գետին տապալեց մի հատ ազդու բառ:

Ինձ քեզ նմանեցնել չեմ յանդգնի ես:
Ես ոյժ ունեցայ քեզ ինձ քաշելու,
Բայց ան, չունեցայ ոյժ քեզ պահելու:
Ես այն երջանիկ վայրկեանին այնպէս
Մեծ էի զգում ինձ և փոքր նոյնպէս:
Դու յետ մղեցիր ինձ անգթարար
Դէպի մարդկային անորոշ աշխարհ:
Ո՞վ կըտայ խորհուրդ, ինչից հեռանամ.
Արդեօք բաղձանքիս պիտի տեղի տամ:
Ա՛խ, մեր գործերը, մեր հարշարանքը
Խանդարում են մեր կեանքի ընթացքը:

Գեղեցկին, որ և ոգուն սեփական,
Օտար, խորթ նիւթեր են միշտ միանում,
Հասնելով մի լաւ բանին կենսական,
Աւելի լաւ ցնորք ենք անուանում:
Վեհ զգացմունքները, որ կեանք տուին մեզ,
Թմրում են, հենց որ մտանք ասպարէզ:

Երբոր մեր միտքը համարձակ թռիչքով
Դէպ՝ յաւերժականն է դիմում յուսով,
Նորա շրջանը շատ է փոքրանում,
Երբոր մեր բազմը յանկարծ չքանում:
Իսկոյն բուն է գնում հոգսը մեր սրտում,
Ծածուկ վշտերով մեր հոգին լցնում,
Խլում է հանգիստ, գառնացնում կեանքը:
Միշտ փոփոխում է իւր կերպարանքը,
Յայտնուելով իբրեւ տուն, կին ու զաւակ,
Իբրեւ կրակ կամ ջուր, իբրեւ թոյն, դաշնակ.
Եւ վախենում ենք, թէ գուցէ կորցնենք
Այն, ինչ որ մերն է, ինչ որ ունինք մենք:

Աստուածներին նման չեմ: Այս միտքն է շատ համարձակ.
Ես թոյլ որդին եմ նման, որ ապրում է փոշու մէջ,

Որին անցորդը յանկարծ կոխում է իւր ոտի տակ,
Եւ տրորելով նրա թշուառ կեանքին դնում է շուտ վերջ:

Միթէ փոշի չեն այս դարակները,
Որոնցով ծածկուած են այս պատերը,
Ցեցերով լիքը հնոտին փտած,
Որով եմ այստեղ չորս կողմից պատած:
Այստեղ պիտ' գտնեմ ես իմ բաղձանքը,
Եւ պիտ' սովորեցնեն ինձ այս գրեանքը,
Որ ամեն տեղ էլ տանջուել են մարդիկ,
Հազարից մէկն է ապրել երջանիկ:—
Ի՞նչ ես ցոյց տալիս ինձ ատամներդ,
Դատարկ գանգ, անշուշտ երբեմն ուղեղդ
Իմիս պէս մթնումն էր չըջում լուսով,
Ճշմարտութիւնը գտնելու յուսով:
Ի՞նչ էք, գործիքներ, նայում ինձ ծաղրով
Ձեր անիւներով և ատամներով:
Դուք իմ առաջը պիտի բանայիք
Փակուած դռները, իբրև բանալիք.
Բայց դուք անգոր էք. և լոյս ցերեկով
Ձի լծոյլ տայ խել բնութիւնն իւր քողը.
Եւ ինչ որ յայտնում չէ նա իւր կամքով,
Մերենաներն են նորան ստիպողը:
Եւ դու, հին գործիք, որ ինձ պէտքը չես,
Ինձ ժառանգութիւն հայրս է թողել քեզ:
Դու, հին ճախարակ, որ սկացել ես,
Կանթեղիս ծուխն է քեզ ներկել այդպէս:
Աւելի լաւ էր, կայքս վատնէի,
Քան թէ պահելով, այստեղ քրտնէի:
Ժառանգութիւնը միայն այն ժամանակ
Լաւ է, երբոր մեզ տալիս է վաստակ:
Ինչ որ օգուտ չէ, բռն է ընդունայն.
Վայրկեանի տուածն է մեզ օգուտ միայն:

Բայց ինչի՞նչ է այն կողմը դառնում միշտ իմ հայեացքը,

Եւ մագնիսի պէս քաշում այն սրուակը իմ աչքը.
Ինչի՞նչ յանկարծ իմ միտքը լուսաւորւում է պայծառ,
Կարծես, լուսին ծագելով, լուսաւորեց մութ անտառ:

Ողջոյն քեզ, միակ անօթ թանկագին,
Որ վայր եմ բերում զգացմամբ սրտագին:
Քո մէջ պաշտում եմ խելքն ու արուեստը:
Դու ամփոփում ես զօրաւոր նիւթեր,
Անոյշ քնացնող մահացու հիւթեր,
Ցոյց տուր ինձ շնորհդ—ան իմ գովեստը:
Երբ քեզ տեսնում եմ, ցաւս է մեղմանում,
Երբ ձեռս առնում, զրդիւս իջնում,
Հոգուս հոսանքը քաշվում է յետ յետ,
Դէպի բաց ծովը տանում ինձ իւր հետ.
Առաջս անսահման ջուր բիւրեղափայլ,
Իսկ անդ. նոր ափեր, նոր օր լուսափայլ:

Ահա հրեղէն կառք թեթեւ թևերով
Իջնում է ինձ մօտ: Պատրաստ եմ չըջել
Եթերի միջով, նոր ճանապարհով,
Դէպի երկնային աշխարհներ թռչել:
Արժանի ես դու այդ վսեմ կեանքին,
Դու, սրբ, արժանի այդ սուրբ վայելքին:
Այն, դու պիտի վճռես համարձակ
Երկրի արեւին դարձնել քո կռնակ:
Անվախ բաց արա դու այն դռները,
Որից փախչում են միշտ ուրիշները:
Այժմ դու պիտի գործով հաստատես,
Որ աստուածներին դու հաւատար ես,
Որ այն մութ փոսից չես զգայ դարհուրանք,
Որ ցնորքն է ստեղծել իրան, իբր տանջանք,
Որ կը մօտենաւ փտահ այն անցքին,
Ուր կրակ է վառվում դժոխքի յատակին.
Դու այդ քայլն անել պիտ' փտահանաս,
Վտանգ էլ լինէր, թէ կը չբանաս:

Յնժ արի, մաքուր բիւրեղեայ բաժակ,
Քո հին պատեանից դուրս եկ, փայլիր զուարթ,
Ես քեզ չեմ յիշել երկար ժամանակ:
Դու, իմ պապերի սեղանի հին զարդ,
Որ ուրախացնում էիր հիւրերին,
Երբ քեզ մեկնում էր ընկերն ընկերին:
Խմողի պարտքն էր գովել նկարդ,
Եւ դատարկելով ցոյց տալ յատակդ.
Եւ այդ բոլորը յիշեցնում է ինձ
Մանկութեան օրերը մրրկալից:
Այժմ չեմ մեկնի քեզ իմ գրքացուն,
Չեմ գովաբանի քո շէնքը սիրուն.
Ահա, այս հիւթը շուտ է հարբեցնում,
Սորանով եմ քեզ այժմ ես լցնում.
Ե՛ս եմ պատրաստել և ես եմ խմում:
Վերջին բաժակը ձօնում եմ սրտով
Նոր օրին, որ պիտ' լուսանայ շուտով:

Նա դնում է բաժակը բերանին:

Զ ա ն դ ա կ ա հ ա ր ու թ ի լ ն եւ ի մ բ ա կ ա ն երդ:

ՀՐԵՃՏԱԿՆԵՐԻ ՊԱՐ

Քրիստոսը յարեալ:
Յնժացէր, մարդիկ,
Չեր օրհասական
Եւ ժառանգական
Չբացաւ չարիք:

ՖԱՌԻՍՏ

Ո՛հ, ի՛նչ քաղցրալուր, ի՛նչ ախորժ հնչիւն
Յետ է մզում քեզ, բաժակ թունաւոր:
Արդեօք աւետո՞ւմ է ձեր զողանջիւն,
Ձանգակներ, Ձատկի տօնը փառաւոր:
Պար, այդ այն երգն է մխիթարական,
Որով երկնային խումբը լուսաւոր
Աւետեց մեզ կեանք յաւիտենական:

ԿԱՆԱՆՑ ՊԱՐ

Խնկով ու իւղով
Օձեցինք նորան,
Լացով, երկիւղով
Դրինք գերեզման.
Մաքուր պատանդում
Էր մարմինն անմեղ.
Ա՛խ, էլ չենք դտնում
Քրիստոսին այստեղ:

ՀՐԵՃՏԱԿՆԵՐԻ ՊԱՐ

Քրիստոսը յարեալ:
Սիրով երջանիկ,
Ով սրտածմլիկ
Փորձելով չարիք,
Փորձին դիմացաւ:

ՖԱՌԻՍՏ

Ազդու, քաղցրալուր երկնային ձայներ,
Ի՛նչ էք որոնում ինձ այստեղ փոշում:
Հնչեցէր, ուր կան դիւրազգաց սրտեր:
Լսում եմ ես ձեզ, բայց չեմ հաւատում.
Հրաշքը հաւատի ծնունդ է հարազատ:
Չեմ կարող դիմել սահմանն երկնային,
Որտեղից հնչում է այդ լուրն ազատ.
Բայց մանկութեանից սովոր այդ ձայնին,
Ինձ յետ է կանչում կեանքը խնդառատ:
Երբեմն Ձատկի շարաթ գիշերը
Սիրտս լցնում էր երկնային սէրը.
Ձանգակների ձայնն էր ախորժալուր,
Ազօթքը սփռվում իմ անձը տխուր.
Բուռն ցանկութեամբ յափշտակուելով,
Ես վազում էի դէպ' դաշտ ու անտառ,
Անվերջ արտասուր աչքից թափելով,
Թվում էր ինձ, ստեղծվում է մի նոր աշխարհ:
Ինձ յիշեցնում է այդ վսեմ տաղը
Կեանքիս դարունը, մանկութեան խաղը.

Եւ ես անձնատուր այդ յիշատակին,
 Չեմ ուզում անել լուրջ քայլը վերջին:
 Հնչեցէք անոյշ, երկնային երգեր:
 Աչքս արտասուեց, յետ առ ինձ, երկիր:

ԱՌԱՔԵԱԼՆԵՐԻ ՊԱՐ

Նա մահուան քնից
 Արդէն զարթեցաւ,
 Օթեանն երկնից
 Փառքով բարձրացաւ.
 Աշխարհ ամենայն
 Պատեց ցնծութիւն,
 Սակայն մեզ միայն
 Ցաւ ու տրտմութիւն:
 Տէր, դու մեզ թողիր
 Այստեղ տառապեալ,
 Տէր, մխիթարիր
 Մեր հոգին լքեալ:

ՀՐԵՃՏԱԿՆԵՐԻ ՊԱՐ

Քրիստոսը յարեալ
 Մութ գերեզմանից:
 Մարդն աղատուեցաւ
 Մահուան կապանքից:
 Նորան ջերմեռանդ
 Փառաբանողին,
 Եւ քրիստոսաւանդ
 Սիրով ապրողին,
 Նորա պատուէրը
 Միշտ քարոզողին,
 Միշտ մօտ է Տէրը,
 Մօտ նորա սէրը:



ՔԱՂԱՔԻՅ ԴՈՒՐՍ

Դուրս են գնում ԱՄԵՆ ԿԱՐԴԻ ՀՅՈՍԵՈՂՆԵՐ



ՄԻ ՔԱՆԻ ԱՐՀԵՍՏԱՌՈՐ ԲԱՆՈՒՈՐՆԵՐ

յդ ուր էք գնում այդ կողմն, ընկերներ:
 ՄԻՒՍԵՆՐԸ

Որսորդների սրահը, բարեկամներ,
 ԱՌԱՋԻՆԵՐԸ

Իսկ մենք ջրաղացը ուզում ենք գնալ:
 ՄԷՅ ԲԱՆՈՒՈՐ

Աւելի լաւ է, լճի ափն երթալ:
 ԵՐԿՐՈՐԴԸ

Այդ ճանապարհը ես չեմ հաւանում:
 ԵՐԿՐՈՐԴՆԵՐԸ

Իսկ դու ուր:

ԵՐՐՈՐԴԸ

Ուր որ ուրիշներն են գնում:
 ՉՈՐՐՈՐԴԸ

Եկէք գնանք Բուրգոյֆ, թէ ունիք ճաշակ.
 Սիրուն աղջիկներ և լաւ գործչուր,
 Եւ տուր ու դմբոց առաջին տեսակ:

ՀԻՆԳԵՐՈՐԴԸ

Է՛յ դու կռուասէր, զնա, շնորհքդ ցոյց տուր,
Կաշիդ քոր եկաւ: Դէ՛հ, զնա, լաւ ծեծ կեր,
Իսկ ես չեմ ուզում լինել քեզ ընկեր:

ԱՂԱԽԻՆ

Ո՛հ, ես պիտի տուն դառնամ անպատճառ:

ՈՒՐԻՉԸ

Նա այնտեղ կըլնի ուռիների տակ:

ԱՌԱՋԻՆԸ

Մեծ երջանկութիւնն չէ այդ ինձ համար.
Նա ման է գալիս միշտ քեզ հետ մենակ,
Քեզ հետ է պարում, քեզ հետ խօսակցում,
Քո ուրախութեան ես չեմ մասնակցում:

ԵՐԿՐՈՐԴԸ

Նա այսօր այնտեղ մենակ չի լինի.

Քո գանգրահերը հետը կըլնի:

ԱՂԱԽԵՐՏ

Տես, ինչպէս են այն քոծերը վազում:
Ե՛կ, եղբայր, հասնենք, էլ ի՛նչ ես սպասում:
Կծու ծխախոտ և թունդ գարեջուր,
Եւ կոկիկ աղջիկ. ահա, ինձ ինչ տուր:

ՔԱՂԱՔԱՑԻ ՕՐԻՈՐԴ

Նայիր այն երկու պատանիներին.

Իրան, կատարեալ խայտառակութիւն.

Նոքա հետամուտ են այն քոծերին,

Թողած պատուաւոր հասարակութիւն:

ԵՐԿՐՈՐԴ ԱՂԱԽԵՐՏ (առաջին)

Կաց, ի՛նչ ես շտապում. տես, մեր ետևից

Դալիս են երկու գեղեցիկուհիներ:

Նոցանից մէկը հարևան է ինձ,

Եւ իմ սրտումը ձգել է նա սէր:

Հանգարտ գնում են, համոզուած եմ ես,

Վերջը իրանց հետ կառնեն նոքա մեզ:

ԱՌԱՋԻՆԸ

Ո՛հ, եղբայր, ինչի՛ նեղացնեմ ես ինձ:

Ջտապիր, որ որսը չթողնենք ձեռից:
Ով շարաթ աւել է առնում ձեռը,
Գիտէ կիրակի ցոյց տալ իւր սէրը:

ՔԱՂԱՔԱՑԻ

Ո՛հ, լաւը չէ նոր քաղաքապետը.

Յանդուգն է, խօսել չէ լինում հետը:

Քաղաքի համար ոչինչ չէ անում,

Գործերն աւելի վատ են ընթանում:

Իսկ դու հնազանդիր և միշտ հնազանդիր,

Առաջուանից շատ հարկեր վճարիր:

ՄՈՒՐԱՅԿԱՆ (երգում է)

Բարի պարոններ, աիկիններ սիրուն,

Ջրում էք առողջ դուք ու զարգարուն.

Խեղճուկիս նայել բարհաճեցէք,

Կարիքս տեսէք, մխիթարեցէք:

Ո՛հ, թող չհնչէ երգս ընդունայն.

Ողորմած սիրտն է միշտ ուրախ միայն:

Համայն մարդկութիւն տօնում է այսօր,

Թող և ի՛նձ համար լինի հնձի օր:

ԵՐԿՐՈՐԴ ՔԱՂԱՔԱՑԻ

Կիրակի և տօն օրերին մեծ հաճութեամբ եմ լսում

Պատերազմի մասին, երբոր մարդիկ տաք տաք են խօսում,

Ինչպէս հեռու ծածկաստանում

Մարդիկ իրար ջարդում, սպանում:

Իսկ ես, կանգնած պատուհանում, հանդարտ խմում եմ իմ գինին,

Տեսնում, ինչպէս սլանում են կոկիկ նաւեր ջրի երեսին.

Երեկոյան ուրախ սրտով վերադառնում եմ ես իմ տուն

Եւ օրհնում եմ լիաբերան մեր վայելած ազատութիւն:

ԵՐՐՈՐԴ ՔԱՂԱՔԱՑԻ

Այո, հարևան, ես նոյնն եմ անում.

Թող նոքա իրար գլուխ ջարդեն այնտեղ,

Նոցա կռիւն ինձ չէ անհանգստացնում,

Միայն թէ հանգիստ թողնեն մեզ այստեղ:

ՊԱՌԱՆԻ ԿԻՆ

Ի՛նչ զարգարուն է այս զոյգը մանուկ:

Չսիրել կարող չէ ձեզ տեսնողը.
Բայց և մի այդքան հպարտանալը դուք,
Ձեր ցանկացածը ես եմ գտնողը:

ԳԱՂԱՔԱՑԻ ՕՐԻՈՐԴ

Գնանք, Ազաթա, կախարդ կնոջ հետ
Անվայել է մեզ լինել միասին.
Սուրբ Անդրէասի զիշերը թէպէտ
Ցոյց տուեց բաղդից ինձ վիճակուածին:

ՄԻԻՍԸ

Ինձ էլ ցոյց տուեց հայելում իմին,
Զինուորական էր, քաջ և փառահեղ.
Բայց չեմ պատահում նրան ամենեւին,
Թէ՛ն որոնում եմ ես ամեն տեղ:

ԶԻՆՈՒՈՐՆԵՐ

Բարձր ամրոցներ,
Ամուր պարիսպներ,
Հպարտ աղջիկներ,
Անառիկ սրտեր
Ուզում եմ գրաւել:
Գործն է համարձակ,
Փառաւոր վաստակ:

Փողը հնչում է,
Նա մեզ կանչում է
Թէ ուրախութեան
Եւ թէ կորստեան:
Պատերազմ ու մարտ
Պիտ' վարէ միշտ մարդ.
Ամրոց ու աղջիկ
Ձեն մեզ անառիկ.
Գործն է համարձակ,
Փառաւոր վաստակ,
Եւ քաջ զինուորին
Արժանի պսակ:

ՓԱՌԻՍՏ ԵՆ ՎԱԳՆԷՐ

ՓԱՌԻՍՏ

Գարնան կենսատու շունչը ազատեց
Սառցից գետերը և վտակները,
Դաշտեր, հովիտներ կանաչադարձեց.
Ծերունի ձմեռը քաշուեց լեռները:
Ուժասպառ ծերը, հեռու փախչելով,
Այնտեղ էլ մնալ չէ ուզում հանդարտ,
Սառցէ հատիկներ առատ թափելով,
Սպիտակացնում է երբեմն հանդ, արտ:
Արևը նոցա հալում է իսկոյն,
Ամեն ինչ ներկում է նա դոյնդոյն,
Կենդանացնում է բնութիւնը համայն.
Դաշտում պակաս են ծաղիկներ միայն:
Նոցա փոխարէն մարդիկ զարդարուն
Ողջունում են քեզ, նորածին գարնան:
Հիմա երեսդ դարձրու քաղաքին:
Նրա մութ դռներից, տես, ինչ ահագին
Բազմութիւն զիմում է դաշտը դալար,
Ազատ օդ շնչել արևում պայծառ:
Մարդիկ տօնում են Տիրոջ Յարութիւնն.
Ձէ որ իրանք էլ առան յարութիւն
Ցածր տների մութ սենեակներից,
Արհեստանոց ու գործարաններից,
Ճնշուած ու փակուած մռայլ տանիքներից,
Խոնաւ ու ցեխոտ նեղ փողոցներից:
Մութ տաճարներից մարդիկ դուրս գալով,
Լոյս արևումն են շրջում խնդալով:
Տես, ինչպէս շտապում է ժողովուրդը
Դէպի պարտէզներ ու կանաչ դաշտեր,
Եւ ինչպէս գետի մակերևոյթը
Ծածկում են արագ վազող նաւակներ:
Տես, և մի նաւակ մարդկանցով լիքը,

Քիչ է մնում, որ կուլ տայ ալիքը:
Նաև հեռաւոր լեռան կողերին
Տեսնում ես անթիւ մանեկուհիներին:
Գիւղից հնչում են ձայներ ցնծութեան,
Ամենքն անձնատուր են ուրախութեան.
Մարդկանց երջանիկ ուրախ եմ տեսնել,
Ես մարդ եմ և մարդ ուզում եմ լինել:

ՎԱԳՆԷՐ

Մեծարգոյ դօկտօր, գրօսանքը ձեզ հետ
Պատուարեր է ինձ ու շատ օգտաւէտ.
Բայց երբէք այստեղ չէի գայ մենակ,
Կոպիտ դուարձութեան շատ եմ հակառակ:
Անտանելի է ականջիս համար
Սոցա ջութակը ու գոռում գոչին.
Տես, կատաղում են, ինչպէս դիւահար.
Այս է սոցա երգն ու ուրախութիւն:

ԳԻԻՂԱՅԻՔ Լօրենու տակ:

Պար եւ երգ

Հովին ուզեց պար մտնել,
Հագաւ բաճկոն ոսկեթել,
Եւ գլխին պսակ:
Լօրենու շուրջ ժողովված,
Մարդիկ պարով են զբաղուած:
Հէյ, հէյ, հէյ, հէյ հէյ,
Հէյ հէյ, հէյ հէյ, հէյ.
Խղիւզում ջութակ:

Նա հրելով ներս մտաւ
Եւ մի աղջկան դիպաւ
Իւր պինդ արմուկով:
Եւ աղջիկը բարկացած,
«Ինչ յիմար ես», նրան ասաց,
Հէյ, հէյ, հէյ, հէյ հէյ,
Հէյ հէյ, հէյ հէյ, հէյ.
«Կոպիտ վարմունքով»:

Թիւր աղջկան գցեց,
Եւ զոյգը պարել սկսեց.
Զգեստը փրփրաց:
Տաքացան ու կարմրեցան,
Հեւալով հանդստացան,
Հէյ, հէյ, հէյ, հէյ հէյ,
Հէյ հէյ, հէյ հէյ, հէյ.
Իրար պինդ գրկած:

«Մի սխմիր ինձ քո սրտին,
Չեմ հաւատում քո ստին,
Կանես խայտառակ»:
Տղան աղջկան դուրս քաշեց,
Ծառի տակ դարձեալ հնչեց.
Հէյ, հէյ, հէյ, հէյ հէյ,
Հէյ հէյ, հէյ հէյ, հէյ.
Երգ, պար ու ջութակ:

ԾԵՐ ԳԻԻՂԱՅԻ

Պարոն դօկտօր, մեծ պատիւ է մեզ համար,
Որ դուք մեր մէջ երևում էք այս տօնին.
Դուք գիտնական և հռչակուած մի հանճար,
Մօտենում էք մեր այս անկիրթ ամբոխին:
Ապա առէք այս դիպիցիկ բաժակը,
Որ լցրել ենք անոյշ գինով պատուական,
Թող քաղցրացնէ, պարոն, սա ձեր ճաշակը,
Տայ զովութիւն, ուրախութիւն կենսական.
Թող շատանան ձեր օրերը թանկագին,
Որքան կաթիլ որ կայ մէջ այս բաժակին:

ՖԱՌԻՍ

Չնորհակալութեամբ ընդունում եմ ես
Եւ ձեր կենացը խմում եմ նոյնպէս:

ԺՈՂՈՎՈՒՐԳԸ ժողովելով շրջան է կազմում:

ԾԵՐ ԳԻՒՂԱՅԻ

Իրան, շատ լաւ է, պատուական դօկտօր,
 Որ մեզ յիշեցիր դուք այս ուրախ օր.
 Հատ անգամ էք դուք տխուր օրերին
 Օգնութեան հասել մեր հիւանդներին:
 Հատերն են այստեղ կենդանի կանգնած,
 Որոնց ձեր հայրը դեռ առողջացրեց,
 Երբոր մեր գիւղն էր տենդով վարակուած,
 Եւ համաճարակը ոչնչացրեց:
 Դուք այն ժամանակ, դեռ երիտասարդ,
 Այցելում էիք ամեն հիւանդին,
 Դիակներ տեսնում անվրդով, հանդարտ,
 Անվախ դէմ գնում ամեն վտանգին:
 Եւ դուք դիմացաք ծանր փորձերին.
 Փրկողին փրկեց փրկողը վերին:

ԱՄԵՆՔԸ

Տէրն առողջութիւն շնորհէ մեծ մարդուն,
 Որ մեզ դեռ երկար հասցնէ օգնութիւն:

ՓԱՌԻՍՏ

Պիտի խոնարհիք Տիրոջ առաջը,
 Որ ձեզ միշտ օգնէ նորա սուրբ աջը:

Նա եւ Վազնէրը առաջ են դնում:

ՎԱԳՆԷՐ

Ո՛վ մեծ մարդ, արդեօք ինչ պիտի դգաս դու,
 Երբ ամբոխն այսպէս մեծարում է քեզ:
 Ո՛հ, երջանիկ է մի մահկանացու,
 Երբ իւր ձիրքերից օգտւում է այսպէս:
 Հայրը իւր որդուն քեզ է ցոյց տալիս,
 Ամենքը քեզ են հարցնում, քեզ խնդրում,
 Զութակը լուծւում, պարը դադարում,
 Ամենքը շարվում են, քեզ տեսնելիս,
 Գլխարկը հանում, քեզ ողջունելիս:

Եւ քիչ է մնում, որ ծունկ խոնարհած,
 Նորա պաշտեն քեզ, իբրեւ մի աստուած:

ՓԱՌԻՍՏ

Մի քանի քայլ անենք դէպի այն քարը —
 Այստեղ նստենք, հանգստանանք միասին:
 Այստեղ յաճախ, մոռանալով աշխարհը,
 Նուիրել եմ ինձ աղօթքին ու պասին:
 Յուսով հարուստ և հաւատով անսասան,
 Արտասուքով, հառաչանքով խոր սրտից
 Կարծում էի, կամքով վերին տեսչութեան,
 Կըյաջողի փրկել մարդկանց ժանտախտից:
 Կծու ծաղր է դովասանքն ամբոխի:
 Ա՛խ, տեսնէիր սիրտը քեզ հետ խօսողի.
 Հայրն ու որդին արժանի չեն այդ փառքին.
 Հատ քիչ օգուտ տուին նորա աշխարհքին:
 Հայրս հասարակ, բայց ազնիւ մարդ էր:
 Զերմեռանդութեամբ, որքան կարող էր,
 Որքան ներում էր իւր գիտութիւնը,
 Ուսումնասիրում էր բնութիւնը:
 Գաղտնագէտների հետ ընկերացած,
 Իւր դեղատան մէջ օրերով փակուած,
 Դեղատոմսերով, թւով անհամար,
 Ճգնում էր կազմել մի զօրաւոր ճար:
 Կարմիր առիւծը, քաջասիրտ փեսան,
 Տար ջրում պսակվում էր շուշանի հետ.
 Յետոյ կըրակն էր նոցա ննջարան,
 Ապա այդտեղից շուտ երկունս և եթ
 Մտնում այլ սենեակ և ամենից վերջ
 Թագունին փայլում էր ապակու մէջ:
 Այս էր մեր դեղը. հիւանդը մեռնում,
 Ո՛վ առողջացաւ, ոչ ոք չէր հարցնում:
 Այսպէս մահաբեր մեր դեղը այստեղ
 Աւելի շատ մարդ քչեց միւս աշխարհ,
 Աւելի, քան թէ ժանտախտը ահեղ.
 Ինքս թունեցի մի քանի հազար:

Այժմ, ո՞վ դու կոյր, պարզամիտ ամբօխ,
Մարդասպաններին ձօնում ես ներքող:

ՎԱԳՆԷՐ

Ինչի՞ պէտք է ձեզ դա վիշտ պատճառէ,
Երբոր ձեր խիղճը մաքուր, արդար է:
Իբրև աղնիւ մարդ դուք գործ էք գրել,
Ինչ որ գիտութիւնն է ձեզ թելադրել:
Իբր երիտասարդ, հօրը յարգելով,
Պարտաւոր էիք նորան հնազանդել,
Ապա, իբրև այր, հարստացնելով
Գիտութիւնը, ձեր որդուն աւանդել:

ՖԱՌԻՍՏ

Ո՛հ, երջանիկ է, ով որ յոյս ունի
Ազատուել ծովիցը մոլորութեան:
Ինչ որ չգիտենք, այն է պիտանի.
Իսկ ինչ որ գիտենք, է մեզ անպիտան:
Բայց չգառնացնենք տխուր մտքերով
Մեր այս գեղեցիկ ժամը երջանիկ.
Տես, արեգակը վերջին շողերով
Ոսկեղօծում է խրճիթ ու տանիք:
Նա մայր է մտնում, օրը վերջանում,
Բայց այնտեղ, հեռու, նոր օր լուսանում:
Ո՛հ, ինչի՞ չունիմ թեք, բարձրանամ,
Նորա ետեից արագ սլանամ:
Ես կըտեսնէի վերջալուսի մէջ
Իմ ոտների տակ աշխարհը անվերջ.
Փայլուն գազաթներ, խաղաղ հովիտներ,
Արծաթ վտակներ, ոսկեփայլ գետեր:
Զէր դադարեցնի իմ թռիչքը ուժգին,
Իւր խոր ձորերով լեռը ահագին,
Եւ կըտեսնէի զմայլած աչքերով
Անսահման ծովը իւր ալիքներով:
Բայց տես, արեւ ահա ծածկվում է,
Սակայն սրտիս իղձը նորոգվում է.
Ետեից թռչել, նրա լոյսը ծծել,

Ետես դիշեր, առաջս օր տեսնել,
Վերել երկինք, ծովը ներքիւ:
Գեղեցիկ երազ: Ծածկուեց արեւ:
Հոգու թեքի հետ միհաւասար
Ձեն թռչի մարմնի թեքը տկար:
Սակայն բնածին է ամեն մէկին,
Ձգտել միշտ առաջ, ձգտել դէպի վեր,
Երբոր լսում ենք մենք արտուտիկին,
Որ հնչեցնում է օդումը երգեր,
Երբոր արծիւը, արագ թռչելով
Բարձր անտառի վերայ սաւառնում,
Եւ երբոր կըռուկը կռնչելով
Դէպի հայրենի աշխարհն է դիմում:

ՎԱԳՆԷՐ

Ես էլ շատ անգամ զգացել եմ ձանձրոյթ,
Բայց այդ ձգտումը դեռ չեմ ունեցել:
Անտառն ու դաշտեր ձանձրացնում են շուտ,
Թռչունին երբէք ես չեմ նախանձել:
Բայց ինչպէս ցնծում է միշտ մեր հողին,
Երբ փոխանակում է գիրքը դրօշին,
Ո՛րքան ախորժ են ձմռան դիշերներ,
Եւ ինչպէս զգում ես քեզ երջանկացած.
Իսկ երբ ձեռք բերում հին մաղաղածներ,
Կարծես երկինքը իջաւ քեզ մօտ ցած:

ՖԱՌԻՍՏ

Դու ճանաչում ես միայն մէկ ձգտում.
Ո՛հ, մի երկրորդի հետ ծանօթանար:
Երկու հոգի են բնակվում իմ սրտում,
Ցանկութիւններով հակառակ իրար.
Մէկը բուռն և բորբոքուած սիրով
Աշխարհի հետ է կապուած անբաժան.
Միւսը սլանում ուժեղ թեքերով
Դէպի երկնային վայրերն անսահման:
Ո՛հ, թէ երկնքի և երկրի մէջ տեղ,
Ոգիներ, օդում բնակութիւն ունիք,

Ձեր վեհարանից ցած իջէր այստեղ,
Տարէք ինձ դէպի նոր կեանք երջանիկ:
Թէ ունենայի այն կախարդական
Վերարկուն, որ ինձ թուցնէր նոր աշխարհ,
Ես չէի փոխի նրան արքայական
Չքեզ ծիրանու հետ ունայնափառ:

ՎԱԳՆԷՐ

Ո՛հ, մի կանչիր այդ ծանօթ խմբերը,
Որոնցով լիքն է օդը մեր վերը.
Հազար մի տեսակ սպառնում են վտանգ
Մեզ ամեն կողմից նորա ու փորձանք:
Նոցա ցուրտ շունչը փչում հիւսիսից
Եւ թափանցում է մեզ սուր նետի պէս,
Եւ երբ գալիս է նա արեւելքից,
Մեր կուրծքը սխմում, չորացնում է մեզ.
Հարաւի կողմի անապատներից
Գալով, բերում է նա խորշակ ու տօթ.
Նախ զովացնում է մեզ արեւմուտքից,
Ապա հեղեղում մեր արտն ու արօտ:
Նորա յօժար են լսել, հնազանդել,
Երբ մեզ ուզում են վնասել, խաբել,
Եւ ձեռնում են, իբրեւ երկնառաք,
Ստելիս խօսում, իբր անմեղ հրեշտակ:
Բայց գնանք: Արդէն մթնեց երկինքը,
Օդը հովացաւ, փռվում է մէզը:
Երեկոնները շատ լաւ է տանը: —
Բայց ի՞նչ կանգնեցար, զարմացած նայում.
Չփոթուած ես, ի՞նչ ես տեսնում խաւարում:

ՖԱՌԻՍ

Տեսնում ես արտում դու այն սև շանը:

ՎԱԳՆԷՐ

Վաղուց տեսնում եմ: Ի՞նչ ես զարմանում:

ՖԱՌԻՍ

Լաւ նայիր, արդեօք բան չես նկատում:

ՎԱԳՆԷՐ

Ոչինչ: Բրդոտ շուն, որ վաղվղելով,
Իւր կորցրած տիրոջ հետքն է հոտոտում:

ՖԱՌԻՍ

Տես, ինչպէս մեր շուրջը ոլորուելով,
Նա հետզհետէ մեզ է մօտենում.
Եւ, թէ չեմ սխալվում, նա իւր ետևից
Թողնում է փայլուն հրեղէն մի գիծ:

ՎԱԳՆԷՐ

Բացի պուգէլից ոչինչ չեմ տեսնում,
Ձեր աչքին է միայն այդպէս երևում:

ՖԱՌԻՍ

Ինձ թվում է, թէ մեզ կախարդում է,
Նա մեր ոտներին ցանցեր է դնում:

ՎԱԳՆԷՐ

Ո՛չ, նա երկիւղով մեզ մօտենում է,
Որ իւր տիրոջ տեղ օտարներ տեսնում:

ՖԱՌԻՍ

Տես, բոլորովին մօտ եկաւ նա մեզ:

ՎԱԳՆԷՐ

Չուն է, ոչ ոգի, ինչպէս տեսնում ես:
Նա մոմում է, պառկում փորի վրայ,
Պոչը խաղացնում, ինչպէս ամեն շուն:

ՖԱՌԻՍ

Ե՛կ այստեղ, ես քեզ կը տանեմ իմ տուն:

ՎԱԳՆԷՐ

Տես, ինչ զուարճալի կենդանի է սա.
Կանգնում ես, ինքն էլ կանգնում, նայում է.
Կանչում ես, շուտով մօտդ վազում է.
Իսկոյն կը բերէ դէն ձգած բանը,
Ջրից կը հանէ քո գաւազանը:

ՖԱՌԻՍ

Իրաւունք ունիս, ոգու հետք չկայ,
Այլ մի կրթուած շուն է այստեղ ներկայ:

ՎԱԳՆԷՐ

Լաւ ընտելացրած ու կրթած շանը
Կարող է սիրել և զխոնականը:
Այո, արժանի է սա քո շնորհին,
Սա, որ լաւ ընկեր է ուսանողին:

Նորա մտնում են քաղաք:



ԱՌԱՆՁՆԱՍԵՆԵԱԿ



ՖԱՌԻՍՏ մտնում է շան հետ:

ողի դաշտերը և արօտները,
Որոնց ծածկում է խորը գիշերը:
Երկիւղածութեամբ լի է իմ անձը,
Ջարձեց սրտիս մէջ բարի նախանձը:
Էլ չեմ յուզում ինձ կատաղի կրքեր,
Հոգուս մէջ տիրում է խաղաղութիւն.
Սրտումս վառուեց սէր դէպի ընկեր,
Եւ նորից պաշտում եմ աստուածութիւն:

Մի շփոթուիր, պոկէլ, տեղդ հանգիստ կ'անց:
Ի՞նչ ես հոտոտում դրան չեմքն անդադար:
Ահա, տալիս եմ քեզ մի կակուղ բարձ:
Վառարանի մօտ պառկիր քեզ համար:
Ճանապարհին շատ ուրախացրիր մեզ
Քո վազվզելով ու թռչկոտելով,
Փոխարէնը խնամք ցոյց կըտամ ես քեզ,
Իբրեւ ցանկալի հիւր ընդունելով:

Ա՛խ, երբ մեր նեղ և մութ խցում
 Նորից վառվում է լապտերը,
 Լոյսը մեր կուրծքն է թափանցում
 Եւ փարատում մեր վշտերը:
 Հանդարտում է հոգու յոյզը,
 Բարի մտքեր են ծնանում.
 Նորից ծաղկում է մեր յոյսը,
 Երջանկութեան վայրը տանում:

Պո՛ւզէլ, մի ոռնա, մի խառնիր, ա՛յ շուն,
 Ձայնդ այս սրբազան հնչիւնների հետ,
 Որոնք տիրել են այժմ իմ հոգուն:
 Այո, մենք գիտենք, որ մարդիկ յաւէտ
 Սովոր են կծու ծաղրի ենթարկել,
 Ինչ որ չեն կարող հասկանալ, յարգել.
 Ինչ որ բարի է, ինչ որ գեղեցիկ,
 Նոցա ընդդէմ է. քեզ նոյնպէս, չնիկ:

Բայց աւա՛ղ, թէ՛ն մեծ է ցանկութիւն,
 Կուրծքս ըզգում չէ բաւականութիւն:
 Ա՛խ, ինչի՞ այսպէս շուտ ցամաքեցաւ
 Աղբիւրը և մենք մնացինք ծարաւ:
 Բայց այս պակասը հեշտ է լրացնել,
 Գերբնականին պէտք է միայն անցնել.
 Եւ մեր ըղձերին բաւականութիւն
 Անշուշտ տալու է մեզ սուրբ յայտնութիւն,
 Որ այնպէս պայծառ վառվում է, փայլում
 Միմիայն Փրկչի աւետարանում:
 Սիրտս վառվում է սաստիկ ցանկութեամբ
 Աստուածաշունչը հիմա բաց անել,
 Եւ բնագիրը բարեխղճութեամբ
 Սիրած մայրենի լեզուով թարգմանել:

Բայց է անում մի հատոր եւ սկսում է:

Այստեղ գրուած է. «Ի սկզբան էր քան:»
 Արդէն դէմ ընկաւ: Ո՛վ է ինձ օգնում:
 Բանը գնահատել չեմ կարող այդքան,
 Եւ ես ուրիշ կերպ եմ այդ թարգմանում.
 Եթէ ոգին է ինձ թելադրողը,
 Այստեղ գրուած է. «Ի սկզբան էր միտք:»
 Բայց լաւ մտածիր առաջին տողը,
 Այստեղ շտապելու չունիս դու կարիք:
 Կարո՞ղ է միտքը ամեն ինչ ստեղծել:
 Ո՛չ, պիտի լինէր. «Ի սկզբան էր ոյժ:»
 Այն ինչ այս տողը ուզում եմ գծել,
 Արդէն զգում եմ, շտապում եմ ես յոյժ:
 Ոգին ինձ օգնեց: Ահա յաջող փորձ,
 Վստահ գրում եմ. «Ի սկզբան էր գործ:»

Թէ որ ուզում ես սենեակում մնալ,
 Պո՛ւզէլ, դադարիր հաջել ու ոռնալ:
 Քեզ պէս ընկեր խանդարող
 Ինձ մօտ ապրել չէ կարող.
 Եւ մէկը մեր երկուսից
 Պիտ՝ հեռանայ սենեակից:
 Թէ՛ն իմ հիւրն ես, բայց չեմ պահում քեզ.
 Դռները բաց են, գընա՛, ազատ ես:
 Բայց ի՛նչ եմ տեսնում,
 Այս ի՛նչ է լինում:
 Արդեօք երանգ է սա թէ իսկութիւն:
 Զարմանալի է, ի՛նչ փոփոխութիւն:
 Ի՛նչպէս ուռչում է, ի՛նչպէս մեծանում.
 Սա իմ պուզէլին էլ չէ նմանում:
 Մի՛թէ մի ոգի բերի ես իմ տուն:
 Հիմա նման է նա գետաձիուն,
 Փայլուն աչքերով, մեծ առամներով:
 Ո՛հ, ճանաչեցի քեզ, թէ ո՞վ ես, ո՞վ.
 Եւ Սողոմոնի բանալիքով քեզ,
 Դըժոխքի ծնունդ, շուտ կըզսպեմ ես:

ՈԳԻՆԵՐ (Թուշեցի):

Մէկը բռնուած է ներսը.
Զմտնէր, մնացէր դուրսը:
Ինչպէս աղուէս շղթայած,
Ծեր դէն է անդ կուշ եկած:
Բայց գործ դնենք զգուշութիւն,
Թռչենք վեր, թռչենք վար,
Դէս ու դէն, անպատճառ
Կըստանայ աղատութիւն:
Մենք պիտի նորան օգնենք,
Այստեղ նստած չթողնենք,
Որովհետեւ մեզ համար
Աշխատում է անդադար:

ՖԱՌԻՍՏ

Երբ դադանին հանդիպեմ,
Այս չորս խօսքով կըկապեմ.
Սալամանդը, բորբոքուիւր,
Դճւ, Ունդէնա, կծկուիւր,
Սիլֆիդա, դու չքացիւր,
Դճւ, չաւր ոգի, աշխատիւր:

Ով որ չէ տեղեակ
Տարերքին քարրեակ,
Նոցա զօրութեան,
Նոցա յատկութեան,
Զէ ամենեկին
Տէր ոգիներին:

Բոցի մէջ չքացիւր,
Սալամանդը.
Իբր ալիք շառաչիւր,
Ունդէնա.
Աստղի պէս դու փայլիւր,
Սիլֆիդա.
Իսկ դու էլ մեզ օգնիւր,

Ինկուբուս, Ինկուբուս,
Առաջ եկ, վերջացիւ:

Ոչ մէկը չկայ
Զորսից աստ ներկայ:
Հանգիստ պառկած է սա բերանը բաց,
Ուրեմն ոյժս դեռ կո չզգաց:

Պիտի լսես ինձ,
Պիտ' ինձ հնազանդես:
Թէ որ դժոխքից
Փախստական ես,

Տես այս նշանը ահաւոր,
Որի առաջ թոյլ են, անդօր,
Դժոխքի որդիքը անիծած:

Արդէն ուռչում է մազերը ցցած:

Արարած, դու զազիր.
Ահա, տես ու սարսիր,
Անսկիզբն, անեղին,
Որ անհաս անքնին,
Որ է տէր երկնային—
Խաչի վրայ խոցուածին:

Վառարանի ետեր
Նա փղի չափ մեծացաւ,
Յատակից մինչ վերեւ
Մէզի պէս տարածուեցաւ:
Առաստաղին մի կպչիւր,
Քո տիրոջ ոտը իջիւր:
Գիտես, սպառնում չեմ ի դուր.
Ունիմ ձեռիս կիզող հուր:
Մի սպասիր
Դու երբեք այրող կրակին.
Մի սպասիր
Իմ վերջին ազդու հնարքին:

Մէզը ցրվում է եւ վառարանի կտեւից դուրս է դալիս **Մէֆիսթֆէլէսը** ճա-
նապարհորդող սքոլաստիկոսի հագուստով:

Մէֆիսթֆէլէս

Այս ինչ աղմուկ է, ինչ էք հրամայում:

ՖԱՌԻՍ

Ահա, թէ ումն էր շունն իւր մէջ պահում,
Ծիծաղելի է: Մի պանդուխտ սքոլաստ:

Մէֆիսթֆէլէս

Ողջունում եմ ձեզ, պարոն գիտնական:
Դուք ինձ քրտնեցրիք այստեղ բաւական:

ՖԱՌԻՍ

Անունդ ինչ է:

Մէֆիսթֆէլէս

Հարցն է անիմաստ:

2^է որ դուք բառը արհամարհում էք,
Եւ արտաքինը թողած, ճշնում էք
Միայն իրերի ներսը թափանցել:

ՖԱՌԻՍ

Բայց սովորաբար ձեր էութիւնը
Ձեր անուններից պէտք է ճանաչել,
Ձեր անուան մէջն է եւ մեկնութիւնը.
Կործանիչ, ստող, ոգի չարութեան:
Բայց լաւ, ո՞վ ես դու:

Մէֆիսթֆէլէս

Մասն այն զօրութեան,

Որ չարն ուղեւով, գործում է բարի:

ՖԱՌԻՍ

Մուծն է ինձ համար իմաստն այդ բառի:

Մէֆիսթֆէլէս

Ես այն ոգին եմ, որ միշտ հերքում է,
Պատճառ բոլորը, ինչ գոյանում է,
Արժանի է, որ հիմքից կործանուի.
Ուրեմն լաւ է, ոչինչ չծնուի:

Ինչ որ անուանում է ձեր աշխարհը.
Մեղք եւ կործանումն եւ ամեն չարը,
Ահա, այդ է իմ իսկական տարրը:

ՖԱՌԻՍ

Միայն մի մասն ես անուանում դու քեզ,
Իսկ իմ առաջը ամբողջ կանգնած ես:

Մէֆիսթֆէլէս

Այո, ճշմարիտն եմ ասում ես քեզ:
Ամբողջ համարել սովոր են մարդիկ
Իրանց այս յիմար, փոքրիկ աշխարհիկ:
Ես մասի մասն եմ, որ ամբողջ էր նախ,
Մասն այն խաւարի, որից լոյս ծնաւ,
Այն հպարտ լոյսը, որ իսկոյն անվախ
Մայր գիշերի հետ պատերազմ մտաւ:
Սակայն անյաջող, որովհետեւ նա
Միշտ մարմինների կպած պիտի մնայ.
Մարմնից է ծագում, մարմին դարդարում
Եւ մարմինն է նրա գնացքը խանգարում:
Եւ ես յոյս ունիմ, շատ չի անցկենայ,
Մարմինների հետ նա կըջքանայ:

ՖԱՌԻՍ

Աղնիւ կոչումդ հիմա պարզ է ինձ:
Դու անկարող ես մեծը կործանել,
Եւ այդ պատճառով սկսում ես փոքրից:

Մէֆիսթֆէլէս

Ի հարկէ շատ բան չեմ կարող անել:
Միշտ մաքառում է ոչնչութեան դէմ
Այս փոքրիկ, չնչին, կոպիտ աշխարհը,
Ոչինչ միջոցով, ինչ որ ես գիտեմ,
Նրան կործանելու չգտայ ճարը,
Ջրով, մրրկով, շարժով, հրդեհով.
Չուտ են խաղաղվում թէ ցամաք, թէ ծով.
Մարդկանց, կենդանեաց անիծած ցեղին
Ես ոչինչ անել չեմ կարողացել.
Քանի քանիսին յանձնել եմ հողին,

Բայց դարձեալ միշտ նոր կեանք է գոյացել:
Այդպէս էլ և միշտ—կատաղում եմ ես—
Հողում ու ջրում, ինչպէս և օդում
Բիւրաւոր սաղմեր են ծլում, նոյնպէս
Չորում ու թացում, տաքում ու ցրտում:
Թէ բոցը գոնէ չէի պահել ինձ,
Զուրկ կըմնայի ես ամեն բանից:

ՖԱՌԻՍ

Ուրեմն ի դուր ես դու դէմ անում
Դիւական բուռը, ողբի չարութեան,
Ի դուր նենգութեամբ սխմում ես, սպառնում
Ցաւէտ կենդանի ստեղծող զօրութեան:
Ընտրիր գործելու մի այլ եղանակ,
Քառսի ծնունդ դու տարօրինակ:

ՄԷՖԻՍՏՕՖԷԼԷՍ

Դորա մասին կըմտածենք
Եւ միւս անգամ շատ կըխօսենք:
Կարո՞ղ եմ այժմ հեռանալ:

ՖԱՌԻՍ

Պէտք է արդեօք այդ հարցը տալ:
Այժմ քեզ հետ ծանօթ եմ ես,
Այցելիր ինձ, երբոր ուզես:
Ահա դուռը և լուսամուտ,
Եւ ծխնելոյղ, աղատ ել, մո՛ւտ:

ՄԷՖԻՍՏՕՖԷԼԷՍ

Խոստովանում եմ, այստեղ կայ արդելք,
Որ այս սենեակից չէ տալիս ինձ ելք:
Դա ձեր դրան շեմքի նշանն է տգեղ:

ՖԱՌԻՍ

Պէնտազրամման է քեզ փակում այստեղ:
Ասա, դժոխքի որդի հարազատ,
Թէ դա արդելք է, ինչպէս ներս եկար,
Եւ ինչպէս դու իմ թակարդը ընկար:

ՄԷՖԻՍՏՕՖԷԼԷՍ

Տեսէ՛ք, նշանը զծած է շատ վատ.

Նրա մի անկիւնը, փակ դէպի դուրսը,
Տես, մի փոքր բաց է դէպի ներսը:

ՖԱՌԻՍ

Այդ շատ լաւ է, որ դէպքն այդպէս բերեց:
Ուրեմն դու իմ գերլին ես հիմա:
Անսպասելի կերպով յաջուկեց:

ՄԷՖԻՍՏՕՖԷԼԷՍ

Չունը չտեսաւ, երբ ներս ցատկեց նա,
Եւ փորձանքի մէջ ընկաւ այդ բանից:
Դեւ կարող չէ դուրս պնալ տանից:

ՖԱՌԻՍ

Ինչի՞նչ ես պնում դուրս պատուհանից:

ՄԷՖԻՍՏՕՖԷԼԷՍ

Դեւ չի կարող շեղուել կանոնից:
Նա մտած տեղից պիտի դուրս պնայ:
Առաջնում տէր է, երկրորդում ծառայ:

ՖԱՌԻՍ

Միթէ դժոխքն էլ ունի կանոններ:
Այդ լաւ է: Ապա ձեզ հետ, պարոններ,
Կարելի է և մի պայման կապել:

ՄԷՖԻՍՏՕՖԷԼԷՍ

Ինչ որ խոստանանք, լրիւ կըստանաս,
Ապահով եղիր, չենք ուզում խաբել:
Սակայն, որպէս զի ինձ լաւ հասկանաս,
Էլի կըխօսենք մենք ուրիշ անգամ:
Իսկ հիմա, խնդրում եմ խոնարհաբար,
Իրաւունք տո՛ւր ինձ, որ ես հեռանամ:

ՖԱՌԻՍ

Կանց, ես չեմ պահի քեզ այստեղ երկար:
Մի լաւ բան ասա սրտիս մխիթար:

ՄԷՖԻՍՏՕՖԷԼԷՍ

Հիմա թող, շուտով կը վերադառնամ,
Բոլոր հարցերիդ պատասխան կըտամ:

ՖԱՌԻՍ

Ես քեզ բռնելու թակարդ չեմ սարքել,

Ինքդ ցանցի մէջ ընկար քո կամքով:—
Պահիր սատանին, երբ ձեռդ ընկել,
Նորից չես բռնի դու նորան շուտով:

ՄԷՖԻՍՏՕՖԷԼԷՍ

Լաւ, որ ուզում ես, յօժար եմ մնալ,
Յօժար եմ քեզ հետ ես ընկերանալ.
Միայն, որպէս զի շատ չձանձրացնեմ,
Թող իմ արուեստով ես քեզ զուարճացնեմ:

ՓԱՌԻՍՏ

Զատ լաւ, զուարճացրու, եթէ կարող ես.
Արուեստդ տեսնել կամենում եմ ես:

ՄԷՖԻՍՏՕՖԷԼԷՍ

Քեզ այս մէկ ժամը կըտայ, բարեկամ,
Այնքան հոգեղէն բաւականութիւն,
Որքան չես զգացել դու ոչ մի անգամ.
Եւ այդ չի լինի լոկ կախարդութիւն:
Քեզ համար կերպեն քնքոյշ ոգիներ,
Նորա ցոյց կըտան սիրուն պատկերներ.
Զուրջդ կըպատէ անուշ հոտութիւն,
Եւ քո ճաշակը կըզգայ քաղցրութիւն,
Եւ բոլոր անձդ հոգեզմայլութիւն:—
Մեզ հարկաւոր չէ երկար պատրաստուել,
Մենք միասին ենք, կարող էք սկսել:

ՈԳԻՆԵՐ

Զբացէք վերեւ,
Մռայլ կամարներ,
Հաշտ նայիր ներքեւ,
Ժպտիր, տո՛ւր բարեւ,
Կապոյտ, ջինջ եթեր:
Ցրուեցէք, սև սև
Ամպեր, երկնքից,
Վառուեցէք, աստղեր,
Փայլիր վերեւից,
Գեղեցիկ արեւ:
Քնքոյշ ու սիրուն

Երկնածին մանկանց
Խմբեր երերուն,
Օղումը ցրուած,
Դէս ու դէն ազատ
Ճեմում են հանդարտ:
Եւ հանդերձների
Ժապաւէնները
Կանաչ դաշտերի,
Ծառ ու թփերի
Վերայ փրփրում,
Ուր սիրողները
Երջանիկ ապրում:
Դալար որթերից
Ծանր ու հիւթալից
Ողկոյզներ են կախ.
Սկսուեց այգեքաղ.
Տանում են հնձան
Խաղողը, ճմլում,
Մաքուր աւազան
Նրա հիւթը լցնում.
Եւ փրփրալից
Դինին այնտեղից
Սար ու ձոր անցնում
Հեղեղանման
Եւ ուրախացնում
Աշխարհը համայն:
Եւ թռչունները
Ուրախ թռչում են
Դէպի լոյս արեւ,
Դէպ' կղզիները,
Որոնք ճօճում են
Ջրի վրայ թեթեւ,
Ինչտեղ հնչում են
Քաղցրաձայն երգեր.
Եւ արօտներում

Երջանիկ խմբեր
Ցնծում են, պարում,
Հանդէս կատարում
Արևում պայծառ,
Դաշտերում դալար:
Ոմանք ելնում են,
Զրջում լեռներում,
Ոմանք լողում են
Վճիտ լճերում,
Ոմանք դէպի վեր,
Հեռուն սլանում,
Կեանք են վայելում,
Վայելում են սէր,
Երջանիկ օրեր:

ՄԷՖԻՍՏՕՖԷԼԷՍ

Քննց: Լաւ արիք, մանուկներ քնքոյշ,
Ձեր նանիկը սրան քուն բերեց անոյշ:
Ձեր երգի համար պարտական եմ ձեզ:—
Դու այն մարդը չես, որ դեին բռնես:
Խաբեցէք սորան սուտ երազներով,
Յափշտակեցէք քաղցր ցնորքներով:
Սակայն այս շեմքի կախարդութիւնը
Մկան ատամը պիտի վերացնէ,
Զուտ է կատարվում իմ ցանկութիւնը,
Այ մէկը: Իսկոյն ուղածս կանէ:

Բոլոր մկների, ճանճ ու գորտերի
Եւ մլուկների ու ոջիւնների
Իշխանն ու տէրը հրամայում է քեզ,
Որ դու այս դրան շեմքը շուտ կրճես,
Այն տեղը, ինչտեղ նա իւր կը քսէ:—
Ահա, դու եկար: Զուտ գործը սկսէ,
Էլ մի ուշացիր: Այն անկիւնն է ինձ
Արգելում ազատ դուրս գնալ տանից:

Մի փոքր էլ: Ահա, հիմա ազատ ենք:—
Լաւ քնիք, Փառստ, մինչև կը տեսնուենք:

ՓԱՌԻՍՏ (զարթելով):

Այս ինչ է: Մի՞թէ խարուած եմ կրկին:
Անձնատուր էի ունայն ցնորքին:
Մի՞թէ երազում տեսայ սատանայ:
Զունն էլ փախել է: Ո՞ւր է, չկայ նա:





ԱՌԱՆՁՆԱՍԵՆԵԱԿ

ՓԱՌԻՍՏ, ՄԷՖԻՍՏՕՓԷԼԷՍ



ՓԱՌԻՍՏ

Վ է ներս մտէք: Նոր տանջող է սա:
ՄԷՖԻՍՏՕՓԷԼԷՍ

Ե՛ս եմ:

ՓԱՌԻՍՏ

Ներս մտէք:
ՄԷՖԻՍՏՕՓԷԼԷՍ
Մէկ էլի ասա:

ՓԱՌԻՍՏ

Դէհ, մտիք:

ՄԷՖԻՍՏՕՓԷԼԷՍ

Այդպէս հաւանում եմ յեզ:

Կըհամաձայնենք մենք, յոյս ունիմ ես:
Քո տխրութիւնը ցրուելու համար,
Ահա, այստեղ եմ, իբր աղնուական,
Կարմիր հագուստով, չքեղ ու յարմար.
Ծածկել եմ թիկնոց մետաքս պատուական,
Գլխարկիս վերայ ցցել եմ փետուր,

Գօտկիցս կախել երկայն և սուր թուր:
Խորհուրդ եմ տալիս, չոտ դու էլ նոյնպիս
Հագուստդ փոխիր, զարդարուիր ինձ պէս,
Որ կարողանաս ազատ ու անկախ
Մտնել կեանքի մէջ և ապրել ուրախ:

ՓԱՌԻՍՏ

Ինչ էլ որ հագնեմ, ինձնից անբաժան
Կըլինի կեանքի տանջանքը դաժան:
Ես անշափ ծեր եմ, որ միայն խաղամ,
Եւ երիտասարդ, որ իղձ չունենամ:
Ի՞նչ կարող է տալ ինձ այս փունձ աշխարհ:
Չափաւոր ապրիր, ապրիր չափաւոր.
Ահա, այս երգն է հնչում անդադար,
Եւ մեր ականջը տանջում ամեն օր:
Սարսափով զարթում եմ առաւօտը,
Դառնապէս պատրաստ եմ արտասուելու,
Տեսնելով օրը, որ մինչև մութը
Եւ ոչ մէկ իղձս չէ կատարելու,
Որ ուրախութեան գրգիռը անգամ
Ինքնահաճ կերպով ոչնչացնում է,
Որ զաղափարներս ամեն անգամ
Այլանդակում ու տգեղացնում է:
Եւ երբ երկրի վրայ իջնում է գիշեր,
Ահ ու դողով եմ անկողին մտնում.
Աւաղ, այնտեղ էլ հանգիստ չեմ գտնում,
Եւ ինձ տանջում են ահեղ երազներ:
Աստուածը, որ իմ կրծքումն է բնակվում,
Կարող է նա իմ սիրտը զրգուել,
Նա, որ ոյժերիս վերայ է իշխում,
Կարող չէ դուրսը ոչինչ կատարել:
Իմ գոյութիւնն է անտանելի,
Մահը ցանկալի, կեանքս ատելի:

ՄԷՖԻՍՏՕՓԷԼԷՍ

Բայց մահը երբէք հիւս չէ ցանկալի:

ՓԱՌԻՍՏ

Ո՛հ, երջանիկ է, ում դափնիներով
Մահը պըսակում է կռուի դաշտում,
Ում նա բռնում է կմախք ձեռներով
Աղջկայ գրկին, որին նա պաշտում:
Երանի զմայլած տայի իմ հոգին,
Երբ երևեցաւ ինձ վսեմ ոգին:

ՄԷՖԻՍՏՕՖԷԼԷՍ

Սակայն այն գիշեր մէկը չլամեց
Թոյնի բաժակը, որ ինքը լցրեց:

ՓԱՌԻՍՏ

Լրտեսութիւնը արհեստդ է, գիտեմ:

ՄԷՖԻՍՏՕՖԷԼԷՍ

Ամենագէտ չեմ, բայց շատ բան գիտեմ:

ՓԱՌԻՍՏ

Եթէ սոսկալի, վճռական քայլից
Մի քաղցր, ծանօթ ձայն ինձ յետ պահեց,
Եւ մանկութիւնս յիշեցնելով ինձ,
Ուրախ օրերի յոյսերով խաբեց.
Ապա անխիղճ եմ ես բոլորը,
Ինչ որ մեր հոգին մոլորեցնում է,
Եւ թափանցելով նորա մէջ խորը,
Կեղծում է, ստում ու ստրկացնում է:
Անէծք և նզովք վսեմ կարծիքին,
Որ ինքն իւր մասին կազմել է ոգին,
Անէծք կուրացնող այն երևոյթին,
Որ կամենում է տիրել մեր սրտին:
Անիծուի, ինչ որ մեզ երազներում
Խաբում է, իբրև փառք, իբրև հռչակ.
Անիծուի, ինչ որ մերն ենք համարում,
Թէ կին, թէ գաւալ, թէ կայք, թէ վաստակ:
Անէծք եմ կարդում, մամոնայ, և քեզ,
Որ հրապուրում ես մեզ քո դանձերով,
Յանդուգն գործեր թելադրում ես մեզ,
Զեղխ կեանք պատրաստում դու մեզ քո ձեռով:

Անէծք խաղողի հարբեցնող հիւթին,
Անէծք և սիրոյ երջանկութեանը,
Անէծք յոյսերին, անէծք հաւատին,
Եւս և անէծք համբերութեանը:

ՈԳԻՆԵՐԻ ՊԱՐ (անտեսանելի:)

Աւաղ, վայ, ինչ արիւր,
Հիմնյատակ քանդեցիր
Գեղեցիկ աշխարհը,
Ցնծութեան այս վայրը,
Քո ձեռով զօրաւոր,
Կիսաստուած ահաւոր:

Նա ընկաւ,

Փուլ եկաւ:

Մենք նորա կտորտանք
Մոռացման պիտի տանք.
Ողբում ենք մենք, աւաղ,
Կորուստըն այդ չքնաղ:
Երկրածին, դու զօրեղ,
Աւելի փառահեղ
Կրծքիդ մէջ նորոգիր
Քո քանդած աշխարհը,
Եւ նոր կեանք սկսիր,
Նոր զգացմունքներով.
Կըստփիէ մեր պարը
Քեզ նոր երգերով:

ՄԷՖԻՍՏՕՖԷԼԷՍ

Իմ փոքրիկներին
Լաւ կանես լսես.
Նոցա հրաւերին
Իսկոյն հետեւս:
Մի մընա մենակ,
Մտիր լայն աշխարհ,
Ինչտեղ արեգակ
Փայլում է պայծառ:

Հերիք անձնատուր լինիս քո վշտին,

Որ պատառում է սիրտդ իբրև ցին:
Եւ ամենալատ ընկերութիւնը
Քեզ կը յիշեցնէ քո մարդութիւնը:
Սակայն սորանով չեմ ասում ես քեզ,
Թէ խաժամութի մէջ պիտի մտնես:

Մեծերից չեմ ես,
Բայց թէ ուզում ես
Ինձ հետ միասին
Մտնել կեանքի մէջ,
Ես բոլորովին
Քոնն եմ մինչև վերջ:

Ես կը լինիմ քեզ միշտ հըլու, հնազանդ,
Անձնուէր ըստրուկ, ծառայ ջերմեռանդ:

ՓԱՌԻՍՏ

Փոխարէնն ի՞նչ պիտի անեմ ես:

ՄԷՖԻՍՏՕՖԷԼԷՍ

Դորա համար դեռ ժամանակ ունիս:

ՓԱՌԻՍՏ

Ո՛չ, ո՛չ, ինքնասէր է միշտ սատանան.
Նա Աստծոյ սիրուն չի անի մի բան,
Որից պիտ' մարդիկ մի օգուտ ստանան:
Առաջուց որոշ աստ պայմանը.

Դու փտանգաւոր ծառայ ես տանը:

ՄԷՖԻՍՏՕՖԷԼԷՍ

Այստեղ ջերմեռանդ կը ծառայեմ քեզ,
Ինչ որ հրամայես կը կատարեմ ես.
Եւ երբոր այնտեղ հանդիպենք իրար,
Նոյնը դու պիտի անես ինձ համար:

ՓԱՌԻՍՏ

Ինձ ամենեին փոյթ չէ, ինչ կայ անդ.
Երբ այս աշխարհը կը լինի քարութանդ,
Թող մի ուրիշը առնէ գոյութիւն:
Երկրից է բոլորում իմ ուրախութիւն,
Այս արեւն է իմ վշտերի վկան.
Եւ երբ ինձ համար նորա էլ չկան,

Թող, ինչ ուզում է, ստեղծէ ապագան:
Ես ամենեին չեմ ուզում լսել,
Արդեօք սիրում են և ատում այնտեղ,
Եւ արդեօք անյայտ այն աշխարհումն էլ
Վերև ու ներքև կայ, ինչպէս այստեղ:

ՄԷՖԻՍՏՕՖԷԼԷՍ

Եթէ այդպէս է, ապա կարող ես
Դու ինձ հետ կապուել համարձակ, ես էլ
Չուտով ցոյց կըտամ իմ արուեստը քեզ.
Կըտամ քեզ, ինչ որ ոչ ոք չէ տեսել:

ՓԱՌԻՍՏ

Ո՛վ խեղճ սատանայ, ի՞նչ կարող ես տալ:
Ընդունակ ես դու արդեօք հասկանալ
Մարդկային ոգու վեհ ձգտումները:
Ձեռն կշտացնում քո կերակուրները.
Ունիս դու ոսկի, որ սնդիկի նման
Իսկոյն ցրվում է կողմեր զանազան.
Մի խաղ, որ երբէք տալիս չէ վաստակ.
Աղջիկ, որ վրկիս եղած ժամանակ,
Աչքով է անում դրացուն շարունակ,
Եւ փառք ու պատուի վայելքն երկնային,
Որ չքանում է, իբրև մէտէօր—
Պտուղ, որ փտում կտրած վայրկեանին
Եւ ծառ, որ ծաղկում է ամենայն օր:

ՄԷՖԻՍՏՕՖԷԼԷՍ

Քո այդ պատուէրը չէ վախեցնում ինձ.
Դու այդ բոլորը կըստանաս ինձնից:
Սակայն, բարեկամ, մօտ է ժամանակ,
Քաղցրացնել մի լաւ բանով մեր ճաշակ:

ՓԱՌԻՍՏ

Երբ ես կը մտնեմ հանդիստ անկողին,
Թող գայ իմ վերջը, յանձնեն ինձ հողին:
Երբ որ կը խարեւ ինձ փաղաքելով,
Որ ես գոհ լինիմ, ինքս ինձ հաւնելով,
Երբ կը ճաշակեմ երկրաւոր վայելք,

Թող էլ չտեսնեմ ես արեւի ելք:
Ահա իմ գրազը:

ՄԷՖԻՍՏՕՖԷԼԷՍ

Հատ լաւ:

ՖԱՌԻՍՏ

Ձեռք տուր:

Երբոր վայրկեանին կասեմ հիացած.
Ո՛հ, գեղեցիկ ես, երկարացիր, կայ—
Այն ժամանակ ինձ չղթայիր ամուր,
Այն ժամանակ թող կորչեմ, չքանամ.
Մահուան զանգակը թող հնչէ տխուր,
Այն ժամանակ քեզ արձակուրդ կը տամ,
Թող ժամանակի սլաքը կանգնի,
Իմ ժամանակը վերջանայ, անցնի:

ՄԷՖԻՍՏՕՖԷԼԷՍ

Լաւ մտածեցէք, մենք չենք մոռանայ:

ՖԱՌԻՍՏ

Իրաւունք ունիս դու բոլորովին:
Ես շատ մեծ կարծիք չունիմ իմ մասին.
Հաստատ վճռել եմ, որ լինիմ ծառայ,
Քոնը, ուրիշի, միևնոյն է դա:

ՄԷՖԻՍՏՕՖԷԼԷՍ

Այսօր իսկ, դժուոր, պատուարժան տէր իմ,
Կըզառնամ ես ձեր ծառայ մտերիմ:
Բայց—գիտէ՞ք, կեանքին մահն է յաջորդող.
Խնդրում եմ, գրէք մի երկու հատ տող:

ՖԱՌԻՍՏ

Ստորագրութիւն ես պահանջում ինձնից:
Մարդն ու իւր խօսքը ի՞նչ է, չգիտեմ:
Բաւական չէ՞ քեզ խօսքը իմ բերնից,
Որ ինձ կապում է մշտնջենապէս:
Թէ կեանքի հոսանքն ինձ քչէ, տանէ,
Մի՞թէ խոստմունքն ինձ կը պահպանէ:
Այդ ցնորքն անբաժան է միշտ մեզանից.
Ո՞վ արդեօք իրան կաղատէ նրանից:

Երջանիկ է նա, ում խիղճն է արդար.
Ոչինչ զոհ ծանր չէ նորա համար:
Գրած ու կնքած մազադաթն, ինչպէս
Ահաւոր տեսիլ, վախեցնում է մեզ:
Բառերը մեռնում են գրչի ծայրին,
Բռնանում մեզ վրայ մոմը ու կաշին:
Չար ոգի, ի՞նչ ես ուզում, ասա ինձ,
Թուղթ, թէ մազադաթ, մարմար, թէ պղինձ.
Ի՞նչ գրչով գրեմ, քարէ, թէ փետրէ,
Կամ թէ երկաթէ. ուզածդ ընտրէ:

ՄԷՖԻՍՏՕՖԷԼԷՍ

Ինչի՞ ես այդքան ճոռոմաբանում
Եւ իզուր տեղը այդպէս տաքանում:
Ինչ թերթ ուզում ես, վեր առ ու գրիր,
Միայն մի կաթիլ արնով ստորագրիր:

ՖԱՌԻՍՏ

Թէ որ այդ բանը կը գոհացնէ քեզ,
Յիմար հաճոյքդ կը կատարեմ ես:

ՄԷՖԻՍՏՕՖԷԼԷՍ

Արիւնն առանձին և թանկ հիւթ է շատ:

ՖԱՌԻՍՏ

Միամիտ եղիր, մեր դաշն է հաստատ:
Հենց այն բանին եմ ձգտում ես հոգով,
Ինչ խոստանում եմ քեզ այժմ խօսքով:
Անշափ շատ էի վրովում, պարծենում.
Քո աստիճանին եմ ես պատկանում:
Մեծ ոգին մերժեց ինձ, արհամարհեց,
Իմ առաջ փակուած է ընդթիւնը,
Իմ մտածութեան թելը կտրուեց.
Եւ ինձ զգուելի է գիտութիւնը:
Ե՛կ, զովացնենք մեր բորբոքուող կիւքը,
Ջգայականութեան ձգենք մեզ գիրկը.
Եւ կախարդութեամբ անիմանալի
Ստեղծենք մի աշխարհ, հրաշքներով լի:
Մեզ ժամանակի հոսանքին յանձնենք,

Արկածքից արկածք անդադար անցնենք:

Եւ այնուհետեւ վիշտ, ուրախութիւն,

Յաջողութիւն և անյաջողութիւն

Թող փոխանակեն իրար շարունակ.

Այր մարդը պիտի լինի անվաստակ:

ՄԷՖԻՍՏՓԷԼԷՍ

Ձեզ չափ չէ դրվում, ոչ էլ նպատակ:

Քաղցրացրէք ձեր քիմքն, ինչտեղ կամենաք:

Ձերն է բոլորը, ինչ որ էլ որսաք.

Եւ ամեն վայելք լինի ձեզ անոյշ:

Միայն ժիր եղէք, մի լինիք ապուշ:

ՓԱՌԻՍՏ

Թէ ասացի, հետամուտ չեմ ուրախութեան:

Նուիրում եմ ինձ կրքերի հարբեցութեան,

Նոցա դառը և հոգեմաշ վայելչութեան,

Եւ սիրատենչ ու յուսահատ ատելութեան:

Կուրծքս, որ զգում չէ էլ ուսման փափագ,

Վշտերի համար էլ չի լինի փակ.

Ինչ որ մարդկութեան բաժին է ընկել,

Կամենում եմ ես անձամբ ճաշակել,

Նրա խորն ու բարձրը հոգով թափանցել,

Բարին ու չարը կրծքումս դիզել,

Եսս նրա եսին հաւասարեցնել,

Եւ վերջը նրա պէս չքանալ, անցնել:

ՄԷՖԻՍՏՓԷԼԷՍ

Ո՛հ, հաւատան ինձ, շատ հազարամեակ

Ծամում եմ ես այդ կոշտ կերակուրը.

Օրրանից սկսած մինչև պատգարակ

Ոչ որ մարսել չէ հին թթուխմորը.

Հաւատան դու ինձ, որ այս բոլորը

Ձինուած է միայն մի Աստծոյ համար.

Նա միշտ պատած է փայլուն շողերով,

Իսկ դուք պիտ' օգտուիք օր ու գիշերով:

ՓԱՌԻՍՏ

Բայց ես ուզում եմ:

ՄԷՖԻՍՏՓԷԼԷՍ

Այո, այդ վատ չէ:

Միայն մէկ բանից վախենում եմ ես.

Արուեստըն երկար, իսկ կեանքը կարճ է:

Թո՛ղ տուր, մի բարի խորհուրդ տամ ես քեզ.

Մի բանաստեղծի հետ ընկերացիր,

Թող այդ պարոնը մտքով սլանայ,

Ամեն յատկութիւն աղնիւ, բնաձիր

Պատուական գլխիդ վերայ դիզէ նա.

Խրոխտ առիւծի քաջութիւն,

Եղջերուի արագութիւն,

Իտալացու տաք արիւն,

Հիւսիսցու հաստատութիւն:

Թող նա գտնէ այն դադանիքը քեզ համար,

Որ վհուկութիւնը նենգութեան հետ զուգէ,

Ըստ նախագծի դարձընէ քեզ սիրահար,

Պատանեակի կրքեր քո մէջ բորբոքէ:

Թէ այդպիսի մէկ պարոն ես ճանաչեմ,

Նորան պարոն Միկրօկոսմոս կը կանչեմ:

ՓԱՌԻՍՏ

Ուրեմն ինչ եմ ես, թէ չունիմ հնար,

Մարդկութեան թագը դրաւել ինձ համար,

Որին ձգտում եմ բոլոր հոգով ես:

ՄԷՖԻՍՏՓԷԼԷՍ

Դու վերջ ի վերջոյ այն ես—ինչ որ ես:

Դիր գլխիդ բիւր և բիւր խոպոպիկներ,

Կանգուն բարձրութեամբ հագիր կօշիկներ,

Դարձեալ կը մնաս դու այն—ինչ որ ես:

ՓԱՌԻՍՏ

Ջգում եմ, որ ինձ վրայ իզուր եմ կիտել

Մարդկային ոգու զանձերը բոլոր,

Եւ վերջն, երբ հանգիստ ուզում եմ նստել,

Ձէ բղխում իմ մէջ զօրութիւն մի նոր.

Մազաչափ անգամ չեմ ես բարձրացել,

Ոչ անվախճանին աւելի մօտցել:

ՄԷՖԻՍՏՓԷԼԷՍ

Իմ բարի պարոն, այնպէս էք նայում
 Իրերին, ինչպէս ամենքն են նայում.
 Պէտք է աւելի խելացի վարուել,
 Քանի դեռ ուշ չէ, ուրախ կեանք վարել:
 Այդ գլուխն ու մէջքը, այդ ոտն ու ձեռքը
 Իհարկէ, որ այդ բոլորն են ձերը:
 Եւ ինչից որ ես մի օգուտ ունիմ,
 Մի՞թէ չեմ կարող անուանել այն իմ:
 Երբ որ ունիմ ես վեց հատ ձի մատակ,
 Ինձ չե՞ն պատկանում նոցա ոյժերը:
 Լծում եմ նոցա, արշաւում արագ,
 Կարծես թէ իմ են նոցա ոտները:
 Ապա չո՞ւտ արա, շատ մի մտածիր,
 Ինձ հետ ուղղակի լոյս աշխարհ թռիր:
 Զատ մտածողը նման է յիմար,
 Անբան կենդանուն, որ է դիւահար
 Եւ թափառում է չոր անապատում,
 Մինչ շուրջը կանաչ արօտ է պատում:

ՖԱՌԻՍ

Բայց ի՞նչպէս սկսենք:

ՄԷՖԻՍՏՓԷԼԷՍ

Մենք իսկոյն կերթանք:

Այստեղ մնալն է կատարեալ տանջանք:
 Մի՞թէ սա կեանք է, թո՛յլ տուր ինձ հարցնել,
 Աչակերտներիդ և քեզ ձանձրացնել:
 Այդ գործն հաստափոր դրացիդ թող անէ,
 Մաղով ջուր կրելն անօգուտ բան է:
 Ամենալաւը, ինչ որ դու գիտես,
 Համարձակ ասել նոցա կարող չես:
 Ահա, գալիս է մէկը նոցանից:

ՖԱՌԻՍ

Նորան տեսնելը անհնար է ինձ:

ՄԷՖԻՍՏՓԷԼԷՍ

Խեղճ տղան արդէն սպասում է երկար.

Չպէտք է թողնել նրան անմխիթար:
 Զուտ տո՛ւր ինձ զգեստդ, նաև զգակը.
 Ինձ շատ վայելուշ կըլինի դիմակը:

Հաղնում է:

Հիմա ամեն բան թող իմ հմտութեան:
 Ինձ հարկաւոր է քառորդ ժամ միայն.
 Իսկ դու պատրաստուիր ուղեորութեան:

Ֆաուստը դուրս է գնում:

ՄԷՖԻՍՏՓԷԼԷՍ

(Ֆաուստի երկար զգեստով):

Արհամարհիր դու խելք ու զիտութիւն,
 Մարդու ամենաբարձր զօրութիւն:
 Թող ընտելացնէ ստութեան ոգին
 Քեզ իւր ցնորքին ու կախարդանքին.
 Այդպէս կը լինիս դու իմն անպայման:—
 Բաղդը մի ոգի է տուել նորան,
 Որ միշտ դէպ' առաջ դիմում է անսանձ,
 Եւ որի թռիչքը, արագ չափազանց,
 Ոչ մի վայելքի վրայ չէ առնում կանգ:
 Քաշ կըտամ նորան դէպ' վայրենի կեանք,
 Կը ձգեմ դատարկ ունայնութեան մէջ,
 Նա կըմաքառէ, կըձգտի անվերջ,
 Եւ նորա անյագ շրթունքների վրայ
 Մնունդ, ըմպելիք մօտովը կանցնեն.
 Իզուր կաղերսէ սփոփանք իւր անձին—
 Եւ, թէ չէր յանձնել իրան սատանին,
 Առանց դորան էլ պիտի կորչէր նա:

Մտնում է ՄԻ ԱՂԱԿԵՐՏ:

ԱՂԱԿԵՐՏ

Կարճ ժամանակ է, հասել եմ այստեղ:
 Ահա, գալիս եմ անձնուէր հոգով,
 Ճանաչել, լսել մարդուն հանճարեղ,
 Որին ամենքն են յիշում յարգանքով:

ՄԷՖԻՍՏՓԷԼԷՍ

Չառ ուրախ եմ, որ քաղաքավար էք:
Այստեղ տեսնում էք չառերից մէկին:
Արդեօր դիմել էք դուք ուրիշներին:

ԱՂԱԿԵՐՏ

Խնդրում եմ, որ ինձ ձեզ մօտ ընդունէք:
Ունիմ մեծ եռանդ և յօժարութիւն,
Բաւականին դրամ և առողջութիւն.
Հազիւ թոյլ տուեց մայրս հեռանալ.
Հիմնաւոր ուսում ուղղում եմ ստանալ:

ՄԷՖԻՍՏՓԷԼԷՍ

Իսկ և իսկ հենց ձեր ուղած տեղն եկաք:

ԱՂԱԿԵՐՏ

Իրաւ, ուղում եմ արդէն յետ դառնալ.
Այս պատերի մէջ, սրահներում փակ
Երդէն իսկ սկսում եմ ես ձանձրանալ:
Նեղումա՞ծ է այստեղ և աչքի համար
Չկայ կանաչ բան, ոչ էլ մի հատ ծառ:
Նստարանների վրայ դահլիճներում
Աչքս, ախանջս, միտքս է սառում:

ՄԷՖԻՍՏՓԷԼԷՍ

Սովորութենից է կախումա՞ծ միայն:
Այսպէս մօր ծիծը սկզբում երեխան
Յօժարակամ չէ բերանը դնում,
Բայց շուտ հաճութեամբ է նա սննդվում:
Իմաստութեան ծիծն էլ այսպէս
Օր ըստ օրէ կը հաւանես:

ԱՂԱԿԵՐՏ

Նորա վզից կը կախում ես ուրախութեամբ.
Ի՞նչպէս հասնեմ նրան, ասացէ՛ր, յաջողութեամբ:

ՄԷՖԻՍՏՓԷԼԷՍ

Նախ և առաջ խնդրում եմ ձեզ ինձ բացատրել,
Թէ գիտութեան ո՞ր բաժինն էք ուղում ընտրել:

ԱՂԱԿԵՐՏ

Ցանկանում եմ լաւ գիտնական դառնալ,

Երկրի, երկնքի բաներն իմանալ.
Մի խօսքով այս է իմ ցանկութիւնը.
Ըմբռնել բնութիւնն ու գիտութիւնը:

ՄԷՖԻՍՏՓԷԼԷՍ

Լաւ ճանապարհի վերայ էք կանգնել.
Միայն չպէտք է գէս ու գէն ընկնել:

ԱՂԱԿԵՐՏ

Հոգով ու մարմնով համաձայն եմ ես.
Սակայն կը դադայի մեծ վայելչութիւն
Տօներին, ամառը երբեմնապէս,
Ունենալ զբօսանք և ազատութիւն:

ՄԷՖԻՍՏՓԷԼԷՍ

Գործ գրէ՛ր ժամանակը, նա շատ արագ է անցնում.
Կարգ պահելը ժամանակ վաստակել է սովորեցնում:
Գորա համար, բարեկամ, թէ խորհուրդս կը լսէք,
Collegium logicum նախ և առաջ կըսկսէք:

Այնտեղ ոգիդ կը մարդեն քաջ

Սպանիական կօշիկներում,

Որ զգուշութեամբ սողայ առաջ

Մտածութեան ճանապարհում,

Եւ շրջմոլիկ կրակի նման

2[Թափառէ այս կողմն ու այն:

Յետոյ շատ օրեր պիտի սովորէք,

Ինչ առաջ ազատ մէկէն արել էք,

Հաց ու ջրի պէս այդ բանի համար

Մէկ, երկու, երեք, պէտք է անպատճառ:

Մտքի գործարանն է նման

Ոստայնակի արհեստատան,

Ինչտեղ ոտի մէկ զարկը հազար թելեր է շարժում,

Մակոյկները վեր ու վար արագ արագ վազվզում,

Թելերն անտեսանելի են իրար հետ միանում,

Եւ մէկ հարուածը հազար հանգոյցներ է ձևացնում:

Ներս է մտնում փիլիսոփան

Եւ հաստատում է ձեզ այս բան.

Թէ առաջինն այսպէս է և երկրորդն այսպէս,

Ուրեմն և երրորդն ու չորրորդն այսպէս.
Եւ, եթէ չլինէին առաջինն ու երկրորդը,
Երբէք լինելու չէին և երրորդն ու չորրորդը:
Աշակերտներն այս բանին տալիս են միշտ զովասանք,
Բայց նոցանից ոչ մէկը գիտ չէ դարձել ոստայնանկ:
Ով ուզում է կենդանի էակ մի լաւ ճանաչել,
Աշխատում է նա առաջ նորա հոգին դուրս քշել.
Ապա նորա մասները իւր ձեռի մէջ ունի նա,
Միայն կապը հոգեղէն, ափսոս, պակաս է, չկայ:
Encheiresin naturae ասում է դրան քիմիան,
Եւ չգիտէ, թէ ինչպէս ծաղրում է նա ինքն իրան:

ԱՋԱԿԵՐՏ

Լաւ չեմ հասկանում ես ձեր ասածը:

ՄԷՖԻՍՏՕՖԷԼԷՍ

Չուտ կըհասկանաք չհասկացածը,
Երբ որ ամեն բան կըհամեմատէք
Եւ ինչպէս հարկն է, կըդասաւորէք:

ԱՋԱԿԵՐՏ

Միտքս բլթանում է ձեզ լսելիս,
Գլուխս անուի պէս պտոյտ է դալիս:

ՄԷՖԻՍՏՕՖԷԼԷՍ

Յետոյ միւս բոլոր բաներից առաջ
Բնազանցութեամբ պիտի պարտաւէր:
Աշխատեցէք, որ ըմբռնէք դուք քաջ,
Ինչ մարդու խելքին յարմար չէ երբէք.
Հասկանալի է, անհասկանալի,
Միշտ պատրաստ ունիք մի բառ հրաշալի:
Բայց նախ և առաջ դուք այս կէս տարին
Կարգապահութեան եղէք հետամուտ.
Օրէնք հինգ ժամ տուէք դասերին,
Հենց զանգը հնչէ, իսկոյն մտէք շուտ:
Պէտք է առաջուց կարգին պատրաստուէք,
Տուած հատուածը հիմնաւոր սերտէք,
Կըտեսնէք, որ ձեզ հաղորդում են այն,
Ինչ որ վերի մէջ դրոշմած է միայն.

Եւ աշխատառէր եղէք գրելում,
Որպէս թէ հոգին Սուրբն է թելադրում:

ԱՋԱԿԵՐՏ

Այդ բանը կրկնել հարկ չի լինի ձեզ:
Դորա օգուտը հասկանում եմ ես.
Երբ սպիտակի վրայ դրոշմած է սևով,
Մարդ տուն է գնում հանգիստ, ապահով:

ՄԷՖԻՍՏՕՖԷԼԷՍ

Սակայն ընտրեցէք մասնագիտութիւն:

ԱՋԱԿԵՐՏ

Օրէնք սովորելու չունիմ ցանկութիւն:

ՄԷՖԻՍՏՕՖԷԼԷՍ

Դորա համար ձեզ չեմ յանդիմանում.

Այդ ուսումն ինչ է, լաւ եմ իմանում:

Իրաւունքն ու օրէնքը միշտ յաջորդում են իրար,
Ինչպէս մի հիւանդութիւն, որ անցնում է դարէ դար.
Նորա սկզբից շարունակ քաշ են դալիս ցեղէ ցեղ,
Դանդաղ կերպով շարժվում են մէկ տեղից մի ուրիշ տեղ:
Խելքն անխելքութիւն, բարիքը չարիք
Է դառնում. վայ քեզ, որ ես մի թռունիկ:
Իրաւունքը, որ է մեզ բընածին,
Ափսոս, չեն հարցնում երբէք նրա մասին:

ԱՋԱԿԵՐՏ

Իմ զգուանքն աւելի սաստկացրիք ձեր խօսքերով:
Երջանիկ է, ում որ դուք կըհրահանգէք ձեր ձեռով:

Հիմա զգում եմ ցանկութիւն

Սովորել աստուած'բանութիւն:

ՄԷՖԻՍՏՕՖԷԼԷՍ

Ես չեմ կամենում ձեզ մոլորեցնել:
Ինչ այդ գիտութեան է վերաբերում,
Դժուար է սխալ ճանապարհ չընտրել.
Դա իւր մէջ անշափ շատ թոյն է կրում,
Որ դիպից հազիւ է զանազանվում:
Ամենից լաւն է, որ մէկին լսէք,
Եւ վարժապետի խօսքովը երդուէք.

Իսկ ընդհանրապէս—բառից պինդ բռնէր:
Այն ժամանակ բաց դռնով կրմտնէր
Դուր ըստուգութեան տաճարն ապահով:

ԱՂԱԿԵՐՏ

Բայց բառը պէտք է միտք պարունակէ:

ՄԷՖԻՍՏՕՖԷԼԷՍ

Այո: Բայց պէտք չէ շատ տանջուել դրանով.
Ուր որ միտք չկայ, այնտեղ իհարկէ,
Բառը նրան շատ հեշտ կը փոխանակէ:
Բառերով հընար է վիճաբանել,
Բառերով ամբողջ մի կարգ սահմանել,
Բառերին պէտք է հաւատ ընծայել,
Բառից հընար չէ և մի տառ հանել:

ԱՂԱԿԵՐՏ

Չատ հարցեր եմ ձեզ տալիս, ներեցէ՛ք,
Բայց պէտք է էլի նեղացնեմ ես ձեզ:
Խնդրում եմ ինձ մի երկու խօսք ասէ՛ք
Եւ բժշկութեան մասին նմանապէս:
Երեք տարին չէ ժամանակ երկար,
Եւ դաշտն, Աստուած իմ, է շատ ընդարձակ.
Երբ ցոյց է տուած ուղիղ ճանապարհ,
Կարող ենք առաջ գընալ համարձակ:

ՄԷՖԻՍՏՕՖԷԼԷՍ (ինքն իրան)

Այս չոր խօսուածքը շատ ձանձրացրեց ինձ,
Պիտի սատանի դեր խաղամ նորից:

Բարձր ծայնով:

Բժշկութեան ողին հեշտ է հասկանալ.
Դորա համար ձեզ հարկաւոր է միայն
Մեծ և փոքր աշխարհին ծանօթանալ,
Որ վերջապէս Աստծոյ կամքին թողնէ՛ք այն:
Ձուր է վազել ձեզ գիտութեան ետեից,
Ամեն մէկը սովորում է, ինչ է կարող.
Ով որ գիտէ օգուտ քաղել վայրկեանից,
Աշխարհիս մէջ է խելացի նա ապրող:
Ձեր կազմուածքը վայելուչ է բաւական,

Անշուշտ և ձեր սիրտն է նոյնչափ համարձակ,
Եւ երբ ունիք վստահութիւն անձնական,
Ուրիշներին նոյնը կաղզէ՛ք բացարձակ:
Սովորեցէ՛ք առաջնորդել դուր կանանց.
Նոցա անվերջ ախ ու վախը, լաւ կանէ՛ք,
Որքան և է բազմատեսակ չափազանց,
Միշտ միևնոյն եղանակով դարմանէ՛ք:
Եւ եթէ դուք փոքր ինչ համեստ այդ կանէ՛ք,
Բոլորին էլ շուտով ձեր ձեռը կառնէ՛ք:
Ձեր տիտղոսը պիտի նոցա համբաւէ,
Որ ձեր արուեստն ուրիշներեցը լաւ է.
Ողջունելիս շօշափեցէ՛ք համարձակ,
Ինչ ուրիշը տարիներով չէ կարող,
Իմացէ՛ք լաւ սխմել նոցա դարկերակ,
Եւ ձգելով հայեացքներ նենդ ու այրող,
Բարակ մէջքին փաթաթեցէ՛ք թին աղատ,
Որ տեսնէ՛ք, թէ արդեօք սխմած չէ նա շատ:

ԱՂԱԿԵՐՏ

Ա՛յ, այդ լաւ է: Տեսնում ես

Գոնէ, ինչտեղ և ինչպէս:

ՄԷՖԻՍՏՕՖԷԼԷՍ

Չոր է, բարեկամ, ամեն տեսութիւն,
Կեանքի ծառն է միայն դալար ու սիրուն:

ԱՂԱԿԵՐՏ

Երգվում եմ, կարծես, երազի մէջ եմ:
Կարո՞ղ եմ արդեօք միւս անգամ էլ զալ,
Ձեր իմաստութեան լիովին ինձ տալ:

ՄԷՖԻՍՏՕՖԷԼԷՍ

Պատրաստ եմ անել, ինչ որ կարող եմ:

ԱՂԱԿԵՐՏ

Անկարելի է այսպէս հեռանալ.
Յուշատետրիս մէջ գրել մի տող բան,
Խնդրում եմ ես ձեր մեծապատուութեան:

ՄԷՖԻՍՏՕՖԷԼԷՍ

Չատ բարի:

Գրում է եւ տալիս:

ԱՋԱԿԵՐՏ (կարգում է)

Eritis sicut Deus, scientes bonum et malum.

Յարգանքով ծածկում է տեսող եւ դուրս է գնում:

ՄԷՖԻՍՏՓԷԼԷՍ

Հետևիր այդ հին խօսքին և մօրաբրոջս—օձին,
Նմանութիւնդ աստուածային երկիւղ կազդէ քո անձին:

Մտնում է ՓԱՌԻՍՏԸ

ՓԱՌԻՍՏ

Հիմա դէպի ուր:

ՄԷՖԻՍՏՓԷԼԷՍ

Ուր որ ուղում ես:

Նախ փոքր, ապա մեծ աշխարհ կըտեսնես:
Ի՜նչ ուրախութիւն, ի՜նչ շահ է սպասում
Քեզ առաջիկայ նոր ասպարիզում:

ՓԱՌԻՍՏ

Մօրուքս շատ է երկար,
Թեթև կեանքին չեմ յարմար:
Զի յաջողի այդ փորձն ինձ.
Երբէք աշխարհ չեմ մտած,
Փոքր եմ զգում ինձ ուրիշից,
Միշտ կըլինիմ շուարած:

ՄԷՖԻՍՏՓԷԼԷՍ

Միամիտ կաց, բարեկամ, յաջողութիւն կունենաս.
Վստահութիւն ունեցիր, ապա ապրել կիմանաս:

ՓԱՌԻՍՏ

Բայց տանից ինչպէս դուրս գնանք հիմա,
Ո՛ւր են ձիաներ, ո՛ւր կառք ու ծառայ:

ՄԷՖԻՍՏՓԷԼԷՍ

Մենք կըփռենք այս վերարկուն մեր առաջ.
Սա օգի մէջ կըթըռցնէ մեզ ազատ:
Այս թռիչքին, որ համարձակ է ու քաջ,
Մի՛ վեր առնիր հետդ կապոց դու մեծ շատ:

Կըպատրաստեմ ես մի փոքր վառուող օդ,
Որ շատ արագ կըբարձրացնէ մեզ երկրից.
Որքան թեթև լինինք, կեղևներ այնքան շուտ:
Ջնորհաւորել քո նոր կեանքը թոյլ տուր ինձ:





ԱՌԻԵՐԲԱԽԻ ՊԱՆԴՈԿԸ ԼԱՅՊՅԻԳՈՒՄ

ՈՒՐԱԽ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ



ՔՐՕՁ

չոր չէ խըմում, ոչոր ծիծաղում.
Ի՞նչ են ամենքը քիթ ու պռունկ կախում:
Այսօր կատարեալ թաց յարդ էք, կարծես,
Մինչ ուրիշ անգամ վառվում կրակի պէս:

ԲՐԱՆԴԷՐ

Այդ քեզանից է: Ոչինչ չես անում,
Ոչ յիմարանում, ոչ էլ խողանում:

ՔՐՕՁ

(Թափում է նորա գլխին մի բաժակ զինի:)

Ահա երկուսն էլ:

ԲՐԱՆԴԷՐ

Կրկնակի խոզ ես:

ՔՐՕՁ

Չէ որ դու ինքդ այդ բանն ուզում ես:

ՋԻՔԷԼ

Դուրս չպուտեցէք կռիւ սկսողին:

— 87 —

Երգենք ու կոնծենք գլինին ու օղին:
Բարձրաձայն դռանը ամենքս. հայ, հայ:

ԱՆՏՄԱՅԷՐ

Սա ինձ խլացրեց, օգնեցէք ինձ, վայ:
Բամբակ տուր խցեմ իմ ափանջները:

ՋԻՔԷԼ

Երբոր թնդում են տան կամարները,
Կըզգաս բամբ ձայնի ելեջները:

ՔՐՕՁ

Դուրս, ով դժգոհ է, փոյթ չէ մեզ բնաւ:
Լա, լա, լա, լա, լա, լա, լա:

ԱՆՏՄԱՅԷՐ

Լա, լա, լա, լա, լա, լա, լա:

ՔՐՕՁ

Կոկորդներն արդէն յարգարած են լաւ:

(Երգում է)

Սուրբ պետութիւնն Հռովմէական
Ի՞նչպէս կանգուն է մինչ ներկան:

ԲՐԱՆԴԷՐ

Փո՛ւ, զգուշի երգ, երգ քաղաքական:

Փառք տուէք Աստծուն ամեն առաւօտ,

Որ պետութիւնը Հռովմէական

Ձեր հոգս ու խնամքին բնաւ չէ կարօտ:

Գոնէ ինձ համար չէ ոչինչ զրկանք,

Որ ես ոչ կայսր եմ, ոչ էլ նախարար:

Բայց մենք էլ պէտք է մէկ մեծ ունենանք.

Եկէք, տղերք, մէկ պապ ընտրենք մեզ համար:

Գիտէք, իհարկէ, թէ ինչ յատկութիւն

Տալիս է մարդուն առաւելութիւն:

ՔՐՕՁ (Երգում է)

Սոխակ, թուր դէպի վերև,

Տուր սիրունուս հաղար բարև:

ՋԻՔԷԼ

Ոչինչ բարև սիրունուն: Ձեմ էլ ուզում ես լսել:

ՓՐՕՁ

Բարև՝ և պահ սիրունուս. չես կարող ինձ արդելել:

(Նրդում է)

Բաց արա դուռը—հանդարտ գիշերը:

Բաց արա դուռը— արթուն է սէրը:

Պինդ փակիր դուռը—բացվում է օրը:

ՋԻՔԷԼ

Հնա, երգիր, երգիր, գովիր սիրունուդ.

Կըզայ ժամանակ, կըծիծաղեմ ես:

Քեզ էլ, ինչպէս ինձ, կըխաբէ նա շուտ:

Թող սիրէ նորան դեռ սեւերես,

Հետը փողոցում կատակներ անէ:

Նորան ծեր այծը, Բլօկսըէրգից պալով,

Վաղելիս բարի գիշեր լծող մայէ:

Կտրիճ տղային, ազնիւ արիւնով,

Քո սիրած քոծը միշտ անարժան է:

Անա, թէ ինչպէս նորան բարեւ տուր.

Պատուհանները արա ջարդ ու փշուր:

ԲՐԱՆԴԷՐ

(Սեղանին բռունցքով տալով)

Ականջ դրէք ինձ, լռութիւն, պարոններ:

Համաձայնեցէք, որ գիտեմ ապրել.

Այստեղ նստած են սիրահարուածներ,

Նոցա ամենքին պէտք է մեծարել,

Նախ քան կասեմ ձեզ ես բարի գիշեր:

Լսեցէք երգս, նոր բոլորովին,

Կրկնեցէք վերջին խօսքը խմբովին:

(Նրդում է)

Մուկն էր ապրում մառանում,

Իւր, ճարպ ուտում անտէրը,

Ուտում էր ու գիրանում,

Ինչպէս դօկտօր Լուտէրը:

Խոհարարը թոյն տուեց,

Խեղճին աշխարհը միժնեց,

Կասեմ սիրահարուած էր:

ԽՈՒՄԲԸ (ցնծալով)

Կասեմ սիրահարուած էր:

ԲՐԱՆԴԷՐ

Նա վազում էր վեր ու վար,

Խմում ամեն փոսերից,

Կրծում, չանդրում, ինչ որ կար,

Ձէր ազատվում ցաւերից.

Թռչկոտում էր նա անից,

Բայց չսրծաւ, անիւ, մահից,

Կասեմ սիրահարուած էր:

ԽՈՒՄԲԸ

Կասեմ սիրահարուած էր:

ԲՐԱՆԴԷՐ

Լոյս ցերեկով սարսափած

Խոհանոցը ներս վաղեց,

Ակութի մօտ թուլացած

Վայր ընկաւ ու փնչփնչեց:

Թոյն տուողը կանչում է.

Անա, շունչը փշում է,

Կասեմ սիրահարուած է:

ԽՈՒՄԲԸ

Կասեմ սիրահարուած է:

ՋԻՔԷԼ

Ինչպէս խնդում է այս խումբը յիմար.

Կարծես թէ պէտք է լինել շատ ճարտար,

Խեղճուկ մկներին թոյն տալու համար:

ԲՐԱՆԴԷՐ

Դու նոցա համար շատ ես հոգատար:

ԱԼՏՄԱՅԷՐ

Էյ, ճաղատ վըրճիս, էյ, դու հաստափոյր,

Քեզ հեզ է դարձնում դժբաղդութիւնը.

Ուռած մկան մէջ, երևում է որ,

Տեսնում ես քո խօս նմանութիւնը:

ՓԱՌԻՍՏ և ՄԷՓԻՍՏՕՓԷԼԷՍ

ՄԷՓԻՍՏՕՓԷԼԷՍ

Այս ուրախ շրջանն եմ բերում ես քեզ
Ամենից առաջ, որ ինքդ տեսնես,
Թէ ինչպէս հեշտ են աստ ապրում մարդիկ:
Սոցա համար միշտ տօն է ու Զատիկ.
Քիչ խելքով, սակայն ուրախ ու զուարթուն,
Ինչպէս պոչի հետ խաղացող կատուն,
Նորա պարելով պտոյտներ են անում.
Եւ թէ զանգատվում չեն զխաղալից,
Պանդոկապետն էլ պարտքը չէ ուզում,
Միշտ զոհ են, ազատ ամեն հոգսերից:

ԲՐԱՆԴԷՐ

Ճանապարհից նոր են գալիս սորա,
Ձևերից արդէն նկատելի է.
Այստեղ լինելը զեռ մէկ ժամ չկայ:

ՓՐՕՂ

Այո, Լայպցիգը փոքր Փարիզ է,
Ամենքի վերայ իւր դրոշմն է դնում:

ՋԻՔԷԼ

Ուրբեր են սորա. դու ի՞նչ ես կարծում:

ՓՐՕՂ

Այդ բանն ինձ թողէք: Մի բաժակ զինով
Այնքան խօսեցնեմ, որ իրանց բերնով,
Երեխայի պէս, ամեն բան պատմեն:
Բայց երևում է, ազնիւ տանից են.
Նայում են հսկարտ և անբաւական:

ԲՐԱՆԴԷՐ

Խաբեբաներ են շատ սովորական:

ԱԼՏՄԱՅԷՐ

Գուցէ:

ՓՐՕՂ

Ո՛ւշ դարձրէք, սկսում եմ ահա:

ՄԷՓԻՍՏՕՓԷԼԷՍ (Պատասխան)

Օձիւրներից էլ բռնէ սատանան,
Սորա չեն ըզզում, որքան մօտ է նա:

ՓԱՌԻՍՏ

Ողջոյն, պարոններ:

ՋԻՔԷԼ

Ձեզ նոյն և նման:

Աամաց, կողքից նայելով Մէֆիստոֆէլէսին

Հատ ոտը կազ է մէկ հոգևորի:

ՄԷՓԻՍՏՕՓԷԼԷՍ

Իրաւունք կըտամք մեզ, ձեզ հետ նստել:
Լաւ գինու տեղ, որ դժուար է գտնել,
Ձեր ընկերութեամբ զուարճանա՞նք պիտի:

ԱԼՏՄԱՅԷՐ

Երևի դժուար է ձեզ զոհացնել:

ՓՐՕՂ

Րիպալաից ո՛ւշ էք ճանապարհ ընկել,
Գիշերն հանէսի տանն էք հաց կերել:

ՄԷՓԻՍՏՕՓԷԼԷՍ

Այսօր մենք նորա տան մօտով անցանք:
Մենք վերջին անգամ երկար խօսեցանք.
Ազգականների մասին շատ պատմեց,
Նոցա ողջունել նա մեզ պատուիրեց:

Գլուխ է տալիս Ֆրօշին

ԱԼՏՄԱՅԷՐ (կամաց)

Կերան:

ՋԻՔԷԼ

Վարպետ է այս խորամանկը:

ՓՐՕՂ

Համբերիր, շուտով կընկնի իմ ճանկը:

ՄԷՓԻՍՏՕՓԷԼԷՍ

Եթէ չեմ սխալվում, խեցինք գալիս
Վարժ ձայներ այստեղ պարերդ երգելիս:
Անշուշտ, պէտք է որ այս կամարները
Լաւ անդրադարձնեն երգի ձայները:

ՖՐՕՁ

Երևի հմուտ երաժիշտ էր դուք:

ՄԷՖԻՍՏՕՖԷԼԷՍ

Ո՛չ, իղձս մեծ է, տաղանդս անշուք:

ԱԼՏՄԱՅԷՐ

Մի բան երգեցէք:

ՄԷՖԻՍՏՕՖԷԼԷՍ

Որքան կամենաք:

ԶԻՔԷԼ

Բայց բոլորովին նոր երգ պիտի տար:

ՄԷՖԻՍՏՕՖԷԼԷՍ

Մենք այժմ գալիս ենք Սպանիայից,

Դինու և երգի բուն հայրենիքից:

(Ներդուժ է)

Երբեմն մէկ թագաւոր

Ունէր մէկ մեծ լու—

ՖՐՕՁ

Լսում էր, մէկ լու: Լսւ էր հասկանում.

Ես լուն միշտ մարուր հիւր եմ անուանում:

ՄԷՖԻՍՏՕՖԷԼԷՍ (երդուժ է)

Երբեմն մէկ թագաւոր

Ունէր մէկ մեծ լու,

Նրան սիրում էր այնքան որ,

Ինչպէ՛ս իւր որդուն:

Կանչելով իւր գերձակին,

Պատուիրեց սաստիկ.

«Չափս առ, կարիր պարոնին

Զգեստ ու վարտիր»:

ԲՐԱՆԴԷՐ

Միայն չմոռանար գերձակին ասել,

Աշխատէ, որքան հնար է, ճիշդ չափել,

Եւ թէ իւր գլուխը սիրելի է նրան,

Վարտիրի վերայ փոթեր չերևան:

ՄԷՖԻՍՏՕՖԷԼԷՍ

Թաւիշ, մետաքս հագած լուն

Երևում էր քաջ.

Նորա զգեստն էր զարդարուն,

Վերան էլ մէկ խաշ.

Իսկոյն դարձաւ նախարար,

Կրծքին աստղ ունէր.

Եւ նորա քոյրն ու եղբայր—

Պալատականներ:

Պալատի մէջ այր ու կին

Սաստիկ տանջուեցան,

Նաժիշտներն ու թագուհին

Խիստ կժողուեցան.

Եւ չէին համարձակում

Սպանել կամ քշել:

Բայց երբոր մեղ են ծակում,

Կարող ենք ճնշել:

ԽՈՒՄԲԸ (ցնծալով)

Բայց երբոր մեղ են ծակում,

Կարող ենք ճնշել:

ՖՐՕՁ

Բրաւօ, բրաւօ, պատուական է, շատ սիրուն:

ԶԻՔԷԼ

Նոյն վիճակը կունենայ և ամեն լուն:

ԲՐԱՆԴԷՐ

Երկու մատի ծայրերով սխմեցէք ուժգին:

ԱԼՏՄԱՅԷՐ

Կեցցէ ազատութիւնը, կեցցէ և զինին:

ՄԷՖԻՍՏՕՖԷԼԷՍ

Ես ի պատիւ ազատութեան կըխմի մէկ բաժակ,

Եթէ միայն ունենայիր դուք զինիներ լաւ տեսակ:

ԶԻՔԷԼ

Այդ բանը դուք էլ չկրկնէր ամենին:

ՄԷՖԻՍՏՕՖԷԼԷՍ

Վախենում եմ պանդոկապետը նեղանայ,

Ապա թէ ոչ կը պատուէի պարոններին,
Խմեցնելով մեր մառանի անոյշ գինին:
ԶԻՔԷԼ

Բերէք, բերէք, ես ամեն բան կառնեմ ինձ վրայ:

ՓՐՕՁ

Բերէք, փորձենք, որ գովենք,
Սակայն քչով մենք գոհ չենք:
Որ գինու համն իմանամ,
Պէտք է բերանս լուանամ:

ԱՆՏՄԱՅԷՐ

Ռայնի կողմից են այս պարոնները:

ՄԷՖԻՍՏՕՖԷԼԷՍ

Գայլիկօն տուէք:

ԲՐԱՆԴԷՐ

Ի՞նչ պիտի անէք,
Մի՞թէ այստեղ դուրսն են տակառները:

ԱՆՏՄԱՅԷՐ

Այնտեղ կողովում տեսէք, կը գտնէք:

ՄԷՖԻՍՏՕՖԷԼԷՍ (գայլիկօնը առնելով)

Ֆրոշին

Ասացէք, դուք ի՞նչ գինի էք ուզում:

ՓՐՕՁ

Ջատ տեսակ ունիք: Այդ ի՞նչ էք ասում:

ՄԷՖԻՍՏՕՖԷԼԷՍ

Թող ազատ ընտրէ, ով ինչ ուզում է:

ԱՆՏՄԱՅԷՐ (Ֆրոշին)

Սա չրթունքները արդէն լցում է:

ՓՐՕՁ

Ուրեմն տուէք ինձ Ռայնի գինի:

Հայրենի գինուն գինի չի հասնի:

ՄԷՖԻՍՏՕՖԷԼԷՍ

(Ֆրոշի նստած տեղը սեղանի ափը ծակելով)

Մեղրամոմ տուէք, որ ծակը խցեմ:

ԱՆՏՄԱՅԷՐ

Ձեռնածութիւն է անում սա, կարծեմ:

ՄԷՖԻՍՏՕՖԷԼԷՍ (Բրանդէրին)

Իսկ դուք:

ԲՐԱՆԴԷՐ

Ինձ տուէք դուք շամպայն գինի,
Միայն պէտք է լաւ փրփրուն լինի:

ՄԷՖԻՍՏՕՖԷԼԷՍ

Ծակում է. այդ միջոցին հիւրերից մէկը մեղրամոմով խցում է ծակերը:

ԲՐԱՆԴԷՐ

Մենք չենք կարող միշտ խորշիլ օտարի ունեցածից,
Պատուականը շատ անգամ շատ հեռու է մեզանից:
Թէպէտ բուն գերմանացին փրանսիացուն չէ սիրում,
Բայց և այնպէս նրա գինին մեծ հաճութեամբ է խմում:

ԶԻՔԷԼ

(Տեսնելով, որ Մէֆիստֆէլէսը մօտենում է նորան:)

Խոստովանում եմ, թթուն չեմ սիրում,
Մի բաժակ քաղցր գինի եմ խնդրում:

ՄԷՖԻՍՏՕՖԷԼԷՍ

Իսկոյն կը ստանաք Տօկայի գինի:

ԱՆՏՄԱՅԷՐ

Ի՞նձ նայիր, պարոն, այդպէս չի լինի:
Տեսնում եմ, որ մեզ յիմարացնում էք:

ՄԷՖԻՍՏՕՖԷԼԷՍ

Ձեզ նման ազնիւ հիւրեր չեն. երբէք:
Վտանգաւոր խաղ կը լինէր դա շատ:
Դէհ, չո՛ւտ ուրեմն, ասացէք ազատ,
Եւ ձեր ցանկացած գինին ընտրեցէք:

ԱՆՏՄԱՅԷՐ

Ինձ համար մէկ է, միայն կարճ կտրեցէք:

Բոլոր ծակերը արդէն խցում են:

ՄԷՖԻՍՏՕՖԷԼԷՍ

(Տարօրինակ շարժումներով)

Որթը տալիս է ողկոյզներ,

Այծի ճակտին կան եղջիւրներ:

Որթը փայտ է, իսկ գինին է հիւթալից,
Փայտ սեղանն էլ գինի կը տայ իւր միջից:

Բընութեան մէջ պէտք է խորը թափանցէր:
Սա մի հրաշք է, աշքով տեսէր, հաւտացէր:
Հիմա խիցերն հանեցէր, ինչքան կուղէր, խմեցէր:

ԱՄԵՆՔԸ

(Խիցերն հանում են եւ ամեն մէկի բաժակը քլում է իւր պահանջած դիմով:)

Ի՜նչ զեղեցիկ աղբիւր, տեսէր:

Մէֆիսթֆէլէս

Միայն թէ զգոյշ, որ չթափէր:

Նորա շարունակ խմում են:

ԱՄԵՆՔԸ

Այնպէս լաւ ենք տրամադրուած,

Ինչպէս խողեր ցեխում խռում:

Մէֆիսթֆէլէս

Տես, ինչպէս ազատ, ուրախ են մարդիկ:

ՖԱՌԻՍ

Հիմա հեռանանք, ձանձրացայ սաստիկ:

Մէֆիսթֆէլէս

Անասնութիւնը, ունի դարձրու, հիմա

Փառաւորապէս երևան կը գայ:

ԶԻՔԷԼ

(Խմում է անզոյշ. դիմին թափվում է գետնի վերայ եւ բոց է դառնում:)

Օգնեցէք, կըրակ: Դժոխքն այրվում է:

Մէֆիսթֆէլէս (կրակը դիմեցով)

Հանդարտ, սիրելի տանր, խի՛ր ինձ:

(Ընկերներին)

Սա մի փոքր կրակ էր քաւարանից:

ԶԻՔԷԼ

Այս ի՜նչ է: Սպասիր, թանկ կընստի քեզ:

Երկի դու լաւ չես ճանաչում մեզ:

ՖՐՕՁ

Թող երկրորդ անգամ էլ չկրկնէ նա:

ԱՆՏՄԱՅԷՐ

Լաւ է ասեմք, որ հանդարտ հեռանայ:

ԶԻՔԷԼ

Պարոն, ի՜նչպէս էք դուք համարձակում,
Ձեռնածութիւններ էք այստեղ անում:

Մէֆիսթֆէլէս

Ձայնդ, դու տակնու:

ԶԻՔԷԼ

Իսկ դու ցախաւէլ:

Ի՜նչ, յանդգնում ես և կոպիտ վարուել:

ՔՐԱՆԴԷՐ

Ահա, մի լաւ ծեծ կուտես դու իսկոյն:

ԱՆՏՄԱՅԷՐ

(Հանում է սեղանից մէկ խից. նորա վերայ կրակ է թափվում:)

Այրվում եմ, այրվում:

ԶԻՔԷԼ

Ահ, կախարչութիւն:

Զարկ, խփիր, սպանիր. սա մահապարտ է:

Ամենքը հանում են դանակները եւ յարձակվում են Մէֆիսթֆէլէսի վերայ:

Մէֆիսթֆէլէս

(Ծանր շարժումներով)

Կեղծ պատկեր,

Կեղծ բառեր,

Փոխում են միտք ու տեղ.

Եղէք աստ և այնտեղ:

Ամենքը կանգնում են զարմացած եւ նայում իրար երեսին:

ԱՆՏՄԱՅԷՐ

Այս ի՜նչ տեղ եմ ես, ի՜նչ սիրուն երկիր:

ՖՐՕՁ

Այգիներ, իրաւ:

ԶԻՔԷԼ

Ողկոյզներ, նայիր:

ՔՐԱՆԴԷՐ

Ի՜նչ կանաչ թփեր. մէկ այստեղ նայես,

Ի՜նչ որ թ պատուական, ի՜նչ ողկոյզ է, տես:

Նա բռնում է Զիբէյի թից. միւսները միեւնոյնն են անում փոխադարձաբար եւ բարձրացնում են դանակները:

ՄԷՖԻՍՏՕՓԷԼԷՍ (առաջուայ պէս)

Յնորբ, անցիր, աչքերիցը, թող կապերը վերանան.

Չմոռանա՛ր, ինչպէս ձեզ հետ կատակ արեց սատանան:

Անյայտանում է Ֆառաստի հետ. ընկերները թողնում են իրար:

ԶԻՔԷԼ

Այս ի՞նչ է:

ԱՆՄԱՅԷՐ

Ի՞նչպէս:

ՓՐՕՁ

Մի՛թէ քո բիթն էր:

ԲՐԱՆԴԷՐ (Զիբէլին)

Քոնն էլ ես էի պինդ բռնել, ընկեր:

ԱՆՄԱՅԷՐ

Այ հարուած, բոլոր կազմուածքս ցնցեց:

Ես վայր եմ ընկնում, չմտ մէկ աթոռ բեր:

ՓՐՕՁ

Բայց ասացէ՛ք ինձ, այս ի՞նչ պատահեց:

ԶԻՔԷԼ

Ո՛ւր է այն փուճը: Թէ ձեռք կընկնի,

էլ չեմ թողնելու նորան կենդանի:

ԱՆՄԱՅԷՐ

Ես տեսայ, ինչպէս տակառը հեծած,

Մառանի դռնից նա շուտ դուրս գնաց:—

Ոտներս կարծես թէ կապար լինին:

(Ռէպի սեղանը դառնալով)

Արդեօր դեռ էլի հոսսում է գինին:

ԶԻՔԷԼ

Խաբէութիւնն և ցնորք էր բոլորը:

ՓՐՕՁ

Թվում էր գինի եմ լցնում իմ փորը:

ԲՐԱՆԴԷՐ

Իսկ ողկոյզները, նորա ի՞նչ եղան:

ԱՆՄԱՅԷՐ

Թող ասեն, թէ այժմ էլ հրաշքներ չկան:



ՎՃՈՒԿԻ ԽՈՅԱՆՈՅԸ

Յաճր ակումբի վերայ կրակին դրած է մի մեծ պղինձ: Նորա միջից բարձրացող
դոլորշիքի մէջ երևում են զանազան կերպարանքներ: ՄԷԿ ԷՊ ԿԱՊԻԿ նստած
է պղնձի մօտ, քաշում է փրփուրը և նայում է, որ չթափի: ԱՐՈՒ ԿԱՊԻԿԸ
իւր ծագերով մօտիկ նստած է և տարանում է: Պատերը և առաստաղը դարդա-
րած են վնուկի տարօրինակ կահ կարասիքով:

ՓԱՌԻՍՏ և ՄԷՖԻՍՏՕՓԷԼԷՍ



ՓԱՌԻՍՏ

տում եմ անմիտ կախարդութիւնը:
Եւ այս այլանդակ յիմարութիւնը
Պիտի բժշկէ՛ ինձ քո կարծիքով:
Պիտ՝ խորհուրդ գտնեմ պառաւ կնոջ քով:
Կեղտոտ խմիչքը այս խոհանոցից
Երեսուն տարով կըմանկացնէ ինձ:

Վայ ինձ, թէ չունիս աւելի լաւ ճար:

Արդէն կտրել եմ ես յոյսս իսպառ:

Մի՛թէ բնութիւնը, մի՛թէ վեհ ոգին

Մարդուն մանկացնող բալասան չունին:

ՄԷՖԻՍՏՓԷԼԷՍ

Բարեկամ, ահա խելօք խօսեցար:
Քեզ մանկացնելու կայ բընական ճար.
Բայց դա մի ուրիշ գրքումն է գրած,
Ուր և կազմում է առանձին հատում:

ՓԱՌԻՍՏ

Ասա, ուղում եմ ես այդ խմանալ:

ՄԷՖԻՍՏՓԷԼԷՍ

Այդ միջոցն անփող հնար է ստանալ,
Առանց բժշկի և կախարդութեան:
Իսկոյն գնա դաշտը, բրիր ու փորիր,
Եւ նեղ շրջանում գործունէութեան
Անձդ ու միտքդ սահմանափակիր,
Դու քեզ մննդիր պարզ կերակուրով.
Անասունի հետ անասուն եղիր,
Եւ պարարտացրու քո արտը աղբով—
Սա է լաւ միջոց, հաւատան դու ինձ,
Որ ութսուն տարով մանկանաս նորից:

ՓԱՌԻՍՏ

Ես սովոր չեմ ամենին այդ բանին,
Եւ ձեռս բահ տունել կարող չեմ երբէք.
Ես նեղ կեանքին ընդունակ չեմ բնաւին:

ՄԷՖԻՍՏՓԷԼԷՍ

Ապա պէտք է, որ վհուկին դուք զիմէք:

ՓԱՌԻՍՏ

Ինչի՞ անպատճառ պառտւին դիմել,
Մի՞թէ չես կարող ինքդ գեղն եփել:

ՄԷՖԻՍՏՓԷԼԷՍ

Չատ գեղեցիկ զբաղմունք կըլնէր ինձ համար.
Լաւ է չինեմ ես կամուրջներ անհամար:
Բաւական չէ լոկ պատրաստել խմանալ,
Պէտք է նաև համբերութիւն ունենալ:
Երկար ու ձիգ տարիներ են հարկաւոր,
Որ խմորումը լինի նուրբ և զօրաւոր:
Եւ բոլորը, ինչ որ պէտք է ունենալ,

Զարմանալի բաներ են, հեշտ չէ ստանալ:
Ստանալից են թէպէտ և սովորել,
Բայց ստանան ինքը կարող չէ չինել:

Կենդանիները նկատելով.

Նայիր այս սիրուն կենդանիներին.

Այ, սա ծառան է, իսկ սա աղախին:

Կենդանիներին.

Երևի տանը չէ ձեր տիրուհին:

ԿԵՆԴԱՆԻՆԵՐԸ

Խնջոյքի գնաց.

Տանից դուրս գնաց

Ծխնելոյցով բաց:

ՄԷՖԻՍՏՓԷԼԷՍ

Երկար կըղբօսնի դուրսը ձեր տէրը:

ԿԵՆԴԱՆԻՆԵՐԸ

Մինչև տաքացնենք մենք մեր թաթերը:

ՄԷՖԻՍՏՓԷԼԷՍ (Պառլաւին)

Ինչպէս են քնքոյշ կենդանիները:

ՓԱՌԻՍՏ

Չատ յիմար, տեսել չեմ նմանները:

ՄԷՖԻՍՏՓԷԼԷՍ

Խօսակցութիւնը սոցա հետ

է իմ սիրած բանը յաւէտ:

Կենդանիներին

Ասացէք ինձ, անպիտաններ,

Ի՞նչ էք խառնում դուք անդադար:

ԿԵՆԴԱՆԻՆԵՐԸ

Աղքատների համար թաներ:

ՄԷՖԻՍՏՓԷԼԷՍ

Ապա հիւրերն են անհամար:

ԿԱՊԻԿԸ

(Մօտենում է ՄԷՖԻՍՏՓԷԼԷՍԻՆ և քամւում:)

Խաղա՛, խաղա՛,

Հարստանա՛,

Փող վաստակե՛:

Վատ է անփող,
Երբ ունիմ փող,
Զատ խելօք եմ:

ՄԷՖԻՍՏՕՖԷԼԷՍ

Ի՛նչ բաղդաւոր կը համարէր կապիկն իրան,
Թէ որ հետս լօտօ խաղար, տանէր մի բան:

Այդ միջոցին կապիկի ծագերը խաղալով մի մեծ գնդի հետ, առաջ են գլորում:

ԿԱՊԻԿ

Այս մեր աշխարհ
Անում վեր վար,
Միշտ գլորվում,
Հնչում, ջարդվում,
Իբր ապակի:
Մէջն է դատարկ.
Փոխոխակի
Փայլում, վառվում
Է ինչպէս կրակ:
Ապրում եմ ես:
Սիրուն որդեակ,
Զմօտենաս,
Գրմահանաս.
Կաւից է, տնս,
Կըվշրտես:

ՄԷՖԻՍՏՕՖԷԼԷՍ

Մաղումն ի՛նչ կայ:

ԿԱՊԻԿ (վայր է բերում մաղը):

Թէ որ գող ես,
Կիմանամ ես:

Վաղում է կապկուհու մօտ եւ նայել է տալիս մաղի մէջ:

Նայիր, ահա,
Գողն իմացիր,
Եւ անուանիր:

ՄԷՖԻՍՏՕՖԷԼԷՍ (կրակին մօտենալով):

Այս ի՛նչ պոյտ է:

ԿԱՊԻԿ ԵՒ ԿԱՊԻԿՆԷՆ

Ի՛նչ անմիտ է.

Սա չգիտէ՞

Միթէ կաթսան:

ՄԷՖԻՍՏՕՖԷԼԷՍ

Կոսկիտ գաղան:

ԿԱՊԻԿ

Հովհարը բռնիր,

Աթոռին նստիր:

Ստիպում է ՄԷՖԻՍՏՕՖԷԼԷՍին նստել:

ՓԱՌԻՍՏ

(որ այդ միջոցին հայկու առաջ կանգնած մէկ մօտենում է, մէկ հեռանում նորանից):

Այս ի՛նչ է: Ո՛հ, ի՛նչ երկնային պատկեր
Եմ այս դիւթական հայելում տեսնում:
Տհւր ինձ քո արագ թևերը, ու սէր,
Եւ տար ինձ այնտեղ, ուր նա է ապրում:
Ա՛խ, երբ շարժվում եմ իմ կանգնած տեղից
Եւ համարձակվում մօտենալ նորան,
Մշուշով պատած է երևում ինձ:—
Կատարեալ տիպար կնոջ գեղեցկութեան:
Ո՛հ, միթէ այդքան չքնաղ է կինը:
Կարո՞ղ է, ան, այս փափուկ մարմինը
Բոլոր երկնայինն իւր մէջ ամփոփել:
Հնամ է երկրի վրայ նրմանը գտնել:

ՄԷՖԻՍՏՕՖԷԼԷՍ

Երբ Աստուած վեց օր քրտինք է թափում,
Եւ վերջն ինքն իրան «բրանօ» է ասում,
Իհարկէ պէտք է լաւ բան գոյանայ:
Նայիր, մինչև որ աչքդ կշտանայ:
Զուտով կունենաս դու մէկ այդպիսին:
Երջանիկ է նա, ով կարժանանայ,
Նրան իւր տուն տանել, իբրև ամուսին:

Ֆատուսը շարունակում է նայել հայկու մէջ: ՄԷՖԻՍՏՕՖԷԼԷՍը, բազկաձողի վերայ
ծղծղուելով եւ հովհարը խաղացնելով, շարունակում է իւր խօսքը:

Այստեղ նստած եմ գահի վրայ, իբր արքայ.

Այ գայիսոն, միայն գլխիս թագ չկայ:

ԿԵՆԴԱՆԻՆԵՐԸ

(որոնք մինչև այժմ ամեն տեսակ զարմանալի շարժումներ էին անում, բարձրա-
ձայն աղաղակելով, բերում են Մէֆիստոֆէլէսին մէկ ծաղ:)

Խնդրում ենք ելիր բարի,

Քրտնքով, արնով արի,

Կպցրո՛ւ թագը:

Անշնորհք վարուելով կոտորում են ծաղը երկու կտոր, որոնցով թռչկոտում են շուրջ:

Արդէն եղաւ: Խօսում ենք,

Տեսնում ենք ու լսում ենք

Եւ կազմում յանգը:

ՓԱՌԻՍՏ (հայելու առաջ)

Վայ ինձ, համարեա խելագարվում եմ:

ՄԷՖԻՍՏՕՖԷԼԷՍ

(Կենդանիները ցոյց տալով)

Գլուխս կորցնել ես էլ սկսում եմ:

ԿԵՆԴԱՆԻՆԵՐԸ

Թէ յաջողի մեզ,

Յարմարի նոյնպէս,

Մտքեր են կարծես:

ՓԱՌԻՍՏ (ինչպէս վերելք)

Կուրծքս սկսում է այրուել.

Արի, հեռանանք շուտով:

ՄԷՖԻՍՏՕՖԷԼԷՍ

Բայց պէտք է խոստովանել,

Պովէտներ են բաց սրտով:

Կաթսան, որ կապկուռին անուշադիր էր թողել մինչև այժմ, սաստիկ եռալով,
սկսում է թափուել. գոյանում է մեծ բոց, որ վերել է խփում ծխնելոյզի մէջ:

Վ.ՀՈՒԿԸ դուրս է գալիս բոցի միջից սարսափելի աղաղակով:

Վ.ՀՈՒԿԸ

Ա՛յ, ա՛յ, ա՛յ, ա՛յ:

Փշանաւ դու, վայ:

Պղինձը թողնում,

Տիկնոջ խանձում:

Դու անախտան,

Խնդ ու գազան:

Ֆաուստին եւ Մէֆիստոֆէլէսին նկատելով.

Ի՞նչ է այստեղ,

Ո՛վ էք այստեղ,

Ի՞նչ էք ուզում,

Է՛ր ներս սողում:

Կրակով այսպէս

Կայրեմ ես ձեզ:

Գողը կոխում է կաթսայի մէջ եւ բոցեր է թափում Ֆաուստի, Մէֆիստոֆէ-
լէսի եւ կենդանիների վերայ: Կենդանիները ոռնում են:

ՄԷՖԻՍՏՕՖԷԼԷՍ

(Չեւին բռնած հովհարը դարձնում է եւ կոծով ջարդում բաժակները եւ պտուկները:)

Ջարդ ու փշուր,

Թափուիր, ապուր,

Ջարդուիր, բաժակ:

Սա է կատակ,

Եւ շատ յարմար

Երգիդ համար:

(Մինչդեռ վիռլը կատաղած ու դարձուած յետ է քաշվում:)

Ճանաչում ես ինձ, դու, կրմախր ու հրէջ,

Ճանաչում տիրոջդ ու թագաւորին:

Ո՛վ կարգելէ ինձ ջարդել քեզ, դու, վէշ,

Եւ քեզ հետ նոյնպէս քո կատուներին:

Էլ չես պատկառում կարմիր բաճկոնից,

Ոչ արագադի փետուրը տեսնում:

Մի՛թէ ծածկեցի գէմքս քեզանից,

Անունս լսել ես դու ցանկանում:

Վ.ՀՈՒԿԸ

Ո՛վ, տէր, ներեցէք, կոշտ էր իմ բարև:

Ձեր ձիու ոտը էլ չեմ տեսնում ես,

Ձեր երկու ազուան էլ նմանապէս:

ՄԷՖԻՍՏՕՖԷԼԷՍ

Այս անգամ պրծար դու այդպէս թեթեւ.

Այդ այն պատճառով, իհարկէ, որ մենք

Ջատ ժամանակ է իրար տեսել չենք:
Քանի աշխարհը լուսաւորւում է,
Այնքան սատանան էլ փոփոխւում է.
Ել հիւսիսային ճիւղը չկայ.
Եղջիւրներ, ճանկեր, պոչն ուր է հիմա:
Իսկ ոտիս գալով, որին չկայ ճար,
Մարդկանց առաջը ինձ վնաս կըտար.
Այդ պատճառով ես կրում եմ կեղծ թամբեր,
Ինչպէս մի քանի երիտասարդներ:

Վ.ՆՈՒՅԸ (պարելով)

Խելքս ու միտքս իսպառ կորցնում եմ,
Երբ սատանային այստեղ տեսնում եմ:

ՄԷՖԻՍՏՓԷԼԷՍ

Կին, այդ անունը էլ չլսեմ ես:

Վ.ՆՈՒՅԸ

Բայց ինչի, պարոն, ինչ է արել ձեզ:

ՄԷՖԻՍՏՓԷԼԷՍ

Հին առակների մէջն է դա գրուած.
Բայց մարդիկ դրանից օգուտ չեն ստացել.
Թէև են նորա չարից աղատուած,
Սակայն չարերը էլի մնացել:
Այսուհետ դու ինձ տէր ընտրօն կանչիր.
Ես էլ ասպետ եմ ուրիշների պէս:
Ազնիւ ծաղմանս վրայ մի կասկածիր.
Դրուագս այս է, ահա, նայիր, տես:

Անպատկառ շարժումն է անում:

Վ.ՆՈՒՅԸ (բարձրաձայն ծիծաղով)

Հա, հա, հա, այդ ձեր եղանակն է ճիշդ:
Անառակ էք դուք, ինչպէս որ և միշտ:

ՄԷՖԻՍՏՓԷԼԷՍ (Ֆառուստին)

Ահա, բարեկամ, տես ու սովորիր,
Վհուկների հետ միշտ այսպէս վարուի:

Վ.ՆՈՒՅԸ

Հիմա, պարոններ, ինչ էք կամենում:

ՄԷՖԻՍՏՓԷԼԷՍ

Յայտնի խմբից մի բաժակ բեր չուտ.
Միայն թէ շատ հին լինի նա և դուտ.
Որքան հին, այնքան ոյժ է ունենում:

Վ.ՆՈՒՅԸ

Մեծ ուրախութեամբ. Ունիմ մի սրուակ,
Որից երբեմն ծծում եմ ինքս էլ,
Մէջն ամենևին վատ հոտ չէ մնացել.
Նորանից կըտամ ես ձեզ մի բաժակ:

(Կամաց Մէֆիստոֆէլէսին)

Եթէ անպատրաստ խըմէ իմ դեղը,
Դիտէք, կըմեռնի սա տեղն ու տեղը:

ՄԷՖԻՍՏՓԷԼԷՍ

Լաւ բարեկամս է, սորան վնաս չի տայ.
Դեղդ խմեցնել կարող եմ վստահ:
Զրջանդ քաշիր, առածներդ առա,
Տուր լիքը բաժակ, թող վայելէ սա:

Վ.ՆՈՒՅԸ

(Ստարօտի շարժումներով մի շրջան է քաշում և դարսում է նորա մէջ զարմա-
նալի առարկաներ. այդ միջոցին բաժակները սկսում են զնգզնգալ, պտուկները հըն-
չել և կաղմում են երաժշտութիւն: Վերջապէս բերում է նա մէկ մեծ գիրք,
կանգնեցնում է շրջանի մէջ կապիկներին, որոնք նորան ծառայում են իբրեւ գրա-
կալ և բռնում են ջանքեր: Նա նշանով ցոյց է տալիս Ֆառուստին, որ մօտենայ իրան:)

ՓԱՌԻՍՏ (Մէֆիստոֆէլէսին)

Ասա ինձ, այս ինչ խաղ է զգուցիլի.
Այս շարժումները տղեղ ու անմիտ,
Խաբւթութիւնը անշնորհք ու կոպիտ,
Վաղուց ծանօթ են ինձ ու ատելի:

ՄԷՖԻՍՏՓԷԼԷՍ

Կատակ է միայն ծիծաղի համար.
Մի լինիր չափից դուրս խիտ ու յամառ:
Հնարքներ է անում սա բժշկի պէս,
Որ հիւթը ազդէ, օգուտ անէ քեզ:

Ստիպում է Ֆառուստին մտնել շրջանի մէջ:

ՎՋՈՒԿԸ

(Ուռած, փրկած կարգում է գրքից բարձր ձայնով:)

Պիտի իմանաս,
 Մէկից շինել տաս' .
 Երկուսը թողնես,
 Հուտ երեք շինես .
 Եւ դու հարուստ ես:
 Չորսը պիտ' կորցնես .
 Վեցից ու հնգից,
 Սովորիւ վնակից,
 Զինել եօթն ու ութ .
 Կըլլանայ շուտ:
 Եւ մէկ է իննը,
 Տասը ոչ մինը:
 Ահա այսպէս ենք
 Բազմապատկում մենք:

ՓԱՌԻՍՏ

Կարծես պառաւր զառանցում լինի:

ՄԷՖԻՍՏՕՖԷԼԷՍ

Այդ զառանցմանը վերջ չկայ շուտով .
 Այդ գիւրքը վաղուց է ինձ լաւ յայտնի,
 Բոլորը լիքն է անմիտ խօսքերով,
 Հակասութիւն է դա լիակատար,
 Որ չեն հասկանայ խելօքն ու յիմար:
 Այդ արուեստը նոր է հին է նոյնպէս .
 Ամեն ժամանակ է ընդհանրապէս
 Երեք ու մէկով, մէկ ու երեքով
 Աղաւաղել են ճշմարտութիւնը .
 Այդ են քարոզել մարդիկ միշտ խօսքով,
 Բայց ումն է գրաւում յիմարութիւնը:
 Սովորաբար, երբ մարդ լսում է բառեր,
 Կարծում է, թէ նոցա մէջ կան է մտքեր:

ՎՋՈՒԿԸ (շարունակում է)

Վեհ գիտութիւնը,
 Նրա զօրութիւնը,

Աշխարհից ծածկում,
 Ով չէ հետամուտ,
 Նա է ստանում շուտ,
 Ոչինչ չաշխատած:

ՓԱՌԻՍՏ

Այս ինչ է սա ափեղցփեղ գուրս տալիս .
 Սրան լսելով, զլուխս պտոյտ է գալիս:
 Թվում է, թէ հարիւր հազար յիմարներ
 Ժողովել են և արձակում են ձայներ:

ՄԷՖԻՍՏՕՖԷԼԷՍ

Բաւական է, գուշակունի պատուական:
 Բեր խմիչքդ, լիքը լցրու բաժակը .
 Վհաս չի տայ բարեկամիս սիրական
 Քո խմիչքը, տո՛ւր, թող առնէ ճաշակը:
 Աշխարհումս շատ է ապրել ու փորձուել,
 Եւ իւր կեանքում թիչ բան չէ սա կուլ տուել:

Վհուկը զանազան արարողութիւններով ածում է խմիչքը բաժակի մէջ. հենց որ
 Ֆառաստը մօտեցնում է բերանին, գոյանում է թեթեւ բոց:

Դէ՛հ, չո՛ւտ խմիր, բան չմնայ,
 Հուտով սիրտդ կուրախանայ:
 Ստանային մտերմացար,
 Փորրիկ բոցից ի՛նչ վախեցար:

Վհուկը բաց է անում շրջանը: Ֆառաստը գուրս է դալիս:

ՄԷՖԻՍՏՕՖԷԼԷՍ

Դէ՛հ, շուտ գնանք, հանգիստ պիտի չմնաս:

ՎՋՈՒԿԸ

Անոյշ լինի, վայելչութիւն չատ ստանաս:

ՄԷՖԻՍՏՕՖԷԼԷՍ (վհուկին)

Թէ պէտք լինի քեզ համար բան մի անել,
 Վախուրդիւմ կարող ես դու ինձ ասել:

ՎՋՈՒԿԸ

Ահա մի երգ, որ թէ երբեմն երգես,
 Խմած դեղը աւելի լաւ կօգնէ քեզ:

ՄԷՖԻՍՏՕՖԷԼԷՍ (Ֆառաստին)

Դէ՛հ, չո՛ւտ արա, արի՛ հետս տանեմ քեզ:

Հիմա պէտք է շարժուես դու և լաւ քրտնես,
Որ ներգործէ վրադ քո խմած գեղաջուր:
Ապա աղնիւ անգործութեան անձնատուր,
Ուրախութեամբ շուտով կղզաս քո սրտում,
Թէ ինչպէս է Կուսիդօնը թռչկոտում:

ՓԱՌԻՍՏ


Մէկ անգամ էլ թոյլ տուր, նայեմ հայելուն.
Նրա մէջ տեսած կընոջ պատկերն էր սիրուն:

ՄԷՓԻՍՏՕՓԷԼԷՍ

Ո՛չ, ո՛չ, գնանք, շուտ կըտեսնես կենդանի
Դու քո առաջ կնոջ տիպարը գեղանի:

(Աամաց)

Այդ խմիչքն ընդունելով, ամեն կին
Իբր չեղինէ միշտ կերևայ քո աչքին:



Փ Ո Ղ Ո Յ

ՓԱՌԻՍՏ. ՄԱՐԳԱՐԻՏ (մօտից անցնելով)

ՓԱՌԻՍՏ

Իրուն օրիորդ, թոյլ կըտամք դուք ինձ,
Տալ ձեզ իմ թեր, լինել ուղեկից:

ՄԱՐԳԱՐԻՏ

Ոչ օրիորդ եմ և ոչ էլ սիրուն,
Կարող եմ մենակ գնալ ես իմ տուն:

Խղում է եւ գնում:

ՓԱՌԻՍՏ

Աստուած իմ, ինչ գեղեցիկ է այս երեսան.
Ես կեանքիս մէջ գեռ չեմ տեսել ոչինչ նման:
Ինչպէս համեստ է նա, ինչպէս առաքինի,
Եւ միևնոյն ժամանակ սուր լեզու ունի:
Զրթունքների վարդագոյնը, վայլն այտերի,
Ինչքան ապրեմ, ես մոռանալ ինձ չեմ ների:
Երբ աչքերը խոնարհեցրեց պարկեշտաբար,
Նա իմ սրտին տիրապետեց խելոյն իսպառ.
Նա ինձ այնպէս կարճ ու կտրուկ պատասխանեց,
Որ իմ խելքը յափշտակեց, հոգիս հանեց:

ՄԷՓԻՍՏՕՓԷԼԷՍ (մտնում է)

ՓԱՌԻՍՏ

Այն աղջիկը պիտի ճարես ինձ համար:

ՄԷՓԻՍՏՕՓԷԼԷՍ

Ո՞ր աղջիկը:

ՓԱՌԻՍՏ

Որ նոր անցաւ: Իմացար:

ՄԷՓԻՍՏՕՓԷԼԷՍ

Նա գալիս է իւր տէրտէրի մօտից,
Որ նրան արձակեց բոլոր մեղքերից.
Աթոռի մօտից կամացուկ անցայ,
Իսպառ անմեղ է մանուկն, իմացայ.
Իզուր էր եկել խոստովանելու,
Նորան անզօր եմ մի բան անելու:

ՓԱՌԻՍՏ

Տասշորս տարեկան արդէն անշուշտ կայ:

ՄԷՓԻՍՏՕՓԷԼԷՍ

Խօսում ես, ինչպէս անառակ սրիկայ,
Որ ամեն ծաղիկ ուղում է քաղել,
Որ ամեն պատիւ և համակրութիւն
Կարծում է, թէ հեշտ կարող է գրաւել.
Բայց չէ ունենում միշտ յաջողութիւն:

ՓԱՌԻՍՏ

Պարոն մազիստրոս, դու մեծահուշակ,
Այդ օրէնքները քեզ համար պահիր:
Ես քեզ ասում եմ կարճ ու հասարակ,
Որ թէ այս գիշեր, այս լաւ իմացիր,
Զի մտնի գիրկս այն սիրունիկը,
Ապա կըլուծեմ ես մեր դաշինքը:

ՄԷՓԻՍՏՕՓԷԼԷՍ

Մտածիր, որ այդ հեշտ չէ, բարեկամ:
Տասշորս օր գոնէ պէտք է ունենամ,
Որ առիթ գտնել մի կարողանամ:

ՓԱՌԻՍՏ

Թէ ունենայի ես եօթն օր հանդիստ,
Զէի կարօտի սատանային խիստ,
Որ հրապուրէի նրա պէս մի էակ:

ՄԷՓԻՍՏՕՓԷԼԷՍ

Փրանսիացու պէս էք խօսում թեթե.
Սակայն խնդրում եմ, որ չբարկանաք.
Ի՞նչ օգուտ իսկոյն և եթ վայելել:
Ուրախութիւնը չէ երկարատե.
Աւելի լաւ է, նորան քաշքշել
Այս ու այն կողմը ու սեթեթեթել,
Նախապատրաստել, քաշել ախ ու վախ,
Ինչպէս վէպերում կարդում ենք յաճախ:

ՓԱՌԻՍՏ

Առանց դորան էլ ունիմ արտօթակ:

ՄԷՓԻՍՏՕՓԷԼԷՍ

Լաւ է, որ հիմա չանենք մենք կատակ:
Ես ձեզ ասում եմ, գեղեցիկուհու հետ
Զտապելով ոչինչ չէք կարող անել.
Այս գործում ոյժը չէ ձեզ օգտաւէտ.
Խորամանկութիւն պէտք է գործ դնել:

ՓԱՌԻՍՏ

Ինձ համար մի բան բեր իմ սիրունից,
Նրա անկողինը ցոյց տուր ինձ մօտից,
Կրճքի փողպատը գոնէ բեր, տո՛ւր ինձ,
Կամ թէ սունակապը նորա ոտից:

ՄԷՓԻՍՏՕՓԷԼԷՍ

Որ տեսնէք, ինչպէս ես յօժարակամ
Զեզ ծառայելու համար պատրաստ կամ,
Առանց մի վայրկեան անդամ կորցնելու,
Այսօր նրա սենեակին եմ ձեզ տանելու:

ՓԱՌԻՍՏ

Նորան պիտ' տեսնեմ, նորան ունենամ:

ՄԷՓԻՍՏՕՓԷԼԷՍ

Ո՛չ: Նա դրացուհու մօտ կըլնի մի ժամ:

Եւ այդ միջոցին դուք այնտեղ մենակ
Քաղցր յոյսերին ձեր անձը կըտար,
Նրա չնշած օդով լաւ կըկշտանար:
ՓԱՌԻՍՏ

Ուրեմն գնանք:

ՄԷՔԻՍՏՕՓԷԼԷՍ
Դեռ վաղ է, սպասիր:
ՓԱՌԻՍՏ

Դու նորա համար ընծայ պատրաստիր:

Դուրս է գնում:
ՄԷՔԻՍՏՕՓԷԼԷՍ

Իսկոյն ընծայել: Այ, այդ լաւ բան է:
Դա նպատակին շուտով կըտանէ:—
Թաղած գանձերի տեղեր շատ գիտեմ.
Գընամ և նորից աչքի տակ առնեմ:

Դուրս է գնում:



Ե Ր Ե Կ Ո Յ

Մի փոքր, մաքուր սենեակ:

ՄԱՐԳԱՐԻՏ

(Մագիքը հիւսում է եւ ղիսի վերայ կապում)



Դա, երբեք թէ իմանալ կարողանամ,
Պարոնն ո՞վ էր, որ պատահեց ինձ այս անգամ:
Տեսնով կտրիճ էր բաւական,
Անշուշտ է նա ազնուական.
Եւ այդ շատ պարզ երևում է նորա դէմքից—
Թէ չէ նա չէր համարձակի կանգնեցնել ինձ:
Դուրս է գնում:

ՄԷՔԻՍՏՕՓԷԼԷՍ. ՓԱՌԻՍՏ

ՄԷՔԻՍՏՕՓԷԼԷՍ

Մտիր, կամայ, ձայն չհանես:

ՓԱՌԻՍՏ

(Կարճ լուծիւնից յետոյ)

Խնդրում եմ ինձ մենակ թողնես:

Մէֆիսթֆէլէս

(Սենեակը դիտելով)

Ի՞նչպէս մարդը է այստեղ, տես.

Ամեն աղջկայ մօտ չէ այսպէս:

ՓԱՌԻՍՏ (նայելով իւր շուրջը)

Ողջունում եմ քեզ, քնկար վերջալոյս,
Որ տաքածովում ես այս սրբավայրում:
Գրաւիր իմ սիրտը սիրոյ քաղցր յոյզ,
Որ յուսոյ անոյշ ցոգովն ես ապրում:
Այստեղ, իմ շուրջը, ի՞նչ խաղաղութիւն,
Կարգ ու մաքրութիւն, բաւականութիւն.
Աղքատութեան մէջ, ճրքան լիութիւն,
Եւ այս բանտի մէջ ի՞նչ երջանկութիւն:

Ընկնում է կաշուէ բազմաթոփ մէջ, անկողնու մօտ:

Ո՛հ, ընդունիր ինձ, հինաւուրց աթոռ,
Դո՛ւ պապերի զահ նահապետական.
Յաճախ եմ շուրջդ մի խումբ թոռն ու ծոռ.
Զուարճացել խաղով երեխայական:
Դուցէ սիրունիս, իբրեւ երեխայ,
Ծերունի պապից ստանալով ընծայ,
Այստեղ համբուրել է նորա ձեռք:
Ես զգում եմ, ո՞վ կոյս, ոգիդ իմ շուրջը,
Մաքրասէր ոգոյդ հրեշտակի շունչը:
Հարազատ մօր պէս խրատում է նա քեզ,
Սեղանը մաքուր սփռոցով ծածկես,
Սենեակի յատակն աւազով ցանես:
Սիրելի ձեռք, կոյս չընաղաղէմ,
Խրճիթը հրաշքով դարձնում է Եզեմ:
Ապա այստեղ:

(Յետ է բաշում անկողնի վարսդոյրը)

Քաղցր սարսուռ պատէից ինձ:

Ամբողջ ժամեր կուղէի մնալ ես այստեղ:
Այստեղ թեթեւ երազներում բերկրալից
Բընութիւնը ծընաւ հրեշտակ մի անմեղ:

Այստեղ պառկած էր մանուկը նազելի,
Քնքոյշ կուրծքը կենդանութեան ուժով լի.
Հետզհետէ դարգանալով մեծացաւ.
Եւ երկնային սուրբ կերպարանք մի ստացաւ:

Իսկ դո՛ւ: Աստ, ի՞նչը բերեց քեզ այստեղ:
Այս ի՞նչ յուզմունք իմ մէջ անկեղծ ու զօրեղ:
Ի՞նչ ես ուզում, ի՞նչն է այդպէս քեզ տանջում:
Թշուառ Փառուտ, ես քեզ էլ չեմ ճանաչում:

Կախարդութեան արդեօք եղայ ենթակայ:
Հեշտ վայելքի համար այստեղ ես եկայ,
Եւ ինձ զգում եմ սիրոյ ցնորքին անձնատուր.
Միթէ խաղ է անում մեզ հետ բաղդը կոյր:

Այս լուսէին եթէ յանկարծ ներս գայ նա,
Յանդգնութիւնս խիստ պատիժ կըստանայ:
Որքան լիրբ եմ, նոյնքան ստոր եմ ու դաճած.
Ես փոշու մէջ պիտ' խոնարհիմ նրա առաջ:

Մէֆիսթֆէլէս

Զո՛ւտ, հեռացիր, գալիս է նա:

ՓԱՌԻՍՏ

Գնանք, էլ չեմ վերադառնայ:

Մէֆիսթֆէլէս

Ահա, մի արկղիկ ճարել եմ մի տեղ.
Թեթեւ չկարծես, ծանր է բաւական:
Սուրան դարանում կըղնենք այստեղ,
Խելքից կըհանէ քո սիրած աղջկան.
Արկղիս մէջ դրած թանկագին գանձը
Իսկոյն կըգրաւէ սիրունի անձը:
Գիտէ՞ք—երեխան երեխայ է միշտ:

ՓԱՌԻՍՏ

2գիտեմ, անեմ:

ՄԷՖԻՍՏՕՖԷԼԷՍ

Ինչի էք հարցնում:

Գուցէ ձեզ համար էք դանձը պահում:
Եթէ այդպէս է, կասեմ ես ձեզ ճիշդ.
Ափսոս ժամանակ, որ ես կորցրի,
Եւ իմ աշխատանք, որ ես գործ դրի:
Ժլատ մի լինիր, պիտի ձեզ խնդրեմ:
Թէ գլուխս քորեմ, ձեռներս տրորեմ—

(Գնում է արկղը դարանի մէջ եւ նորից կողպում:)

Հիմա շուտ գնանք — որ կարողանանք
Սիրունի սիրտը ձեզ համար որսանք:
Ի՞նչ էք, ասացէք, շուարած կանգնել,
Կարծես, ուզում էք լսարան մտնել,
Եւ ձեր առաջը այնտեղ կանգնած կան
Ֆիզիկան եւ թէ մէտաֆիզիկան:
Դէհ, գնանք:

(Նորա դուրս են գնում:)

ՄԱՐԳԱՐԻՏ

(Մտնում է մի լսատեր ձեռին)

Ինչպէս խեղդուած, ինչպէս ծանր է այստեղ օդը,

(Բաց է անում պատուհանը)

Թէպէտ այնքան էլ սաստիկ չէ դուրսը տոթը:

2գիտեմ ինչի եմ ես անհանգիստ:—

Մայրս երանի թէ շուտով տուն գար:

Բոլոր մարմնովս դողում եմ ես խիստ:—

Ինչ վախկոտ աղջիկ եմ ես ու յիմար:

(Սկսում է երգել եւ միեւնոյն ժամանակ շորերը հանում է:)

Երբեմն մէկ թագաւոր

Ապրում էր շատ բաղդաւոր,

Իւր սիրունուց յիշատակ

Ստացաւ ոսկէ մի բաժակ:

Նա շատ սիրեց բաժակը,
Միշտ նորանից էր խմում.
Արտասովում էր նրա աչքը,
Հենց բերանին էր դնում:

Երբ որ պիտի տար հողին,
Իւր տէրութիւնը տուեց
Բոլորը իւր ժառանգին,
Միայն բաժակը պահեց:

Կաղմեց խնջոյք մի շքեղ.
Նրան ասպետներ են պատում
Մեծ դահլիճում փառահեղ,
Ծովափին իւր պալատում:

Վերջին անգամ ծերունին
Բաժակից խմեց զինին,
Ապա նետեց բաժակը
Խորը ծովի յատակը:

Եռացին ալիքները,
Ոսկէ բաժակն ընկղմեց:
Փակեց ծերը աչքերը,
Միւս անգամ էլ չխմեց:

Նա բաց է անում դարանը, որ իւր շորերը մէջը դարսէ եւ նկատում է արկղը.

Ի՞նչ սիրուն արկղ է, սրտեղից է սա.

2է որ կողպեցի ինքս դարանը:

Ջարմանալի է: Արդեօք մէջն ինչ կայ:

Գուցէ սա մէկի է գրաւականը,

Որով իմ մօրից փող են պարտք առել:

Ահա բանալին էլ թելից կախած.

Կարող եմ, այո, խեղոյն բաց անել:

Այս ինչ եմ տեսնում, Արարիչ Աստուած,

Իմ օրում նման մի բան չեմ տեսել:

Զքեզ զարդ, որով մի ազնիւ տիկին
Կարող է իրան զարդարել Զատկին:
Կըվայելի ինձ, տեսնեմ, այս չղթան:
Արդեօք ո՞վ է տէրն այս հարստութեան:

Զարդարվում է եւ նայում հայելու մէջ:

Ա՛խ, թէ այս օղերն իմը լինէին.
Իսկոյն փոխվում է մարդ բոլորովին:
Ի՞նչ օգուտ կայ մեզ գեղեցկութիւնից:
Իհարկէ վատ չէ, երբօր սիրուն ենք.
Բայց ուշ չեն դարձնում մարդիկ այդ բանին,
Եւ մեզ գովում են կարեկցութենից:
Ոսկի են խնդրում,
Ոսկուն են ձգտում
Ամենքը: Ի՞նչ խեղճ արարածներ ենք:



Զ Ր Օ Ս Ա Ն Ք

ՓԱՌԻՍՏ. (ման է դալիս մտածելով): Նորան մօտենում է: ՄԷՖԻՍՏՕՖԷԼԷՍԸ



ՄԷՖԻՍՏՕՖԷԼԷՍ

Նիծուի մերժուած սէրը, անիծուի դժոխքի
տանջանք:

Ախո՞ս, որ ես չգիտեմ աւելի վատ հայհոյանք:
ՓԱՌԻՍՏ

Ի՞նչ կայ, ի՞նչ է պատահել,
Ի՞նչ ես դէմքդ ծռումել:

ՄԷՖԻՍՏՕՖԷԼԷՍ

Սատանային կըծախէի իմ հոգին,
Թէ որ ինքս չլինէի սատանայ:

ՓԱՌԻՍՏ

Ես չգիտեմ, ի՞նչ է փչել քո խելքին,
Կատաղել ես. ով տեսնէ, կըղարմանայ:

ՄԷՖԻՍՏՕՖԷԼԷՍ

Գրէտխէնի համար ճարած զարդերը
Յափշտակել է հայր սուրբ պատէրը:—
Մայրը տեսնում է սիրուն արկղիկը
Եւ սարսափում է բարեպաշտ կնիկը.

Հատ նուրբ է նորա հոտոտելիքը,
Ձեռից չէ թողնում աղօթագիրքը,
Միշտ հոտոտում է նա իւր քթով սուր.
Թէ ո՞ր բանն է սուրբ, որը անմաքուր:
Ջարդը տեսնելով, շուտ հասկացաւ նա,
Թէ այդ բանի մէջ օրհնութիւն չկայ:
«Անարգար գոյքը, որդեակ թանկագին»,
Ասաց, «մաշում է մարմինն ու հոգին:
Լաւ է նուիրենք գանձն Աստուածածնին,
Նա մեզ մանանայ կըտայ երկնային»:
Գրէտխէնը քիթն ու պըռուկը կախեց.
Ընծան անարգար գոյք չէ, մտածեց,
Եւ անաստուած չէ, իրաւ, այն անձը,
Ով որ բերել է այստեղ այս գանձը:
Մայրը հրաւիրեց իւր մօտ պատէրին,
Որ, երբ իմացաւ ինչումն է բանը,
Ուրախ նայելով փայլուն զարդերին,
Ասաց. «Հաւան եմ ձեր որոշմանը:
Որ համբերեսցէ, իսպառ նա կեցցէ:
Սուրբ եկեղեցու ստամոքսը մեծ է,
Ամբողջ երկիրներ կերել է, լափել,
Սակայն դեռ երբէք նա չէ կշտացել.
Անարգար գոյքը, պէտք է ձեզ ասել,
Միայն եկեղեցին կարող է մարսել»:
ՓԱՌԻՍՏ

Այդ սովորութիւնն է ընդհանրական.
Նոյնը անում են հրէան ու արքան:

ՄԷՖԻՍՏՓԷԼԷՍ

Առաւ օդերը, շղթան, մատանին,
Կարծես անտառում ժողված սունկ լինին.
Ընորհակալութիւն անգամ նա չարեց,
Կարծես մի կողով կաղին նա ճարեց.
Խոստացաւ նոցա երկնից վարձ առատ—
Գոհացրեց նոցա տէրտէրի խըրատ:

ՓԱՌԻՍՏ

Իսկ Մարգարիտը:

ՄԷՖԻՍՏՓԷԼԷՍ

Ձէ հանգստանում,
Ինքն էլ չգիտէ, թէ ինչ է անում,
Մտքից չէ դնում թանկագին գանձը,
Մանաւանդ թէ այն ընծայող անձը:

ՓԱՌԻՍՏ

Սիրունուս վիշտը ցաւ է իմ անձին:
Ճարիր նրա համար նոր զարդ վերստին.
Հատ էլ մեծ բան չէր զարդը առաջին:

ՄԷՖԻՍՏՓԷԼԷՍ

Այո՛, ձեզ համար էր նա շատ չնչին:

ՓԱՌԻՍՏ

Արա՛, ինչ որ ես հրամայում եմ քեզ:
Աշխատիր գրաւել նորա դրացունուն:
Սատանայ եղիր, թէ սատանայ ես,
Եւ իսկոյն ճարիր մի նոր զարդ սիրուն:

ՄԷՖԻՍՏՓԷԼԷՍ

Այո՛, ողորմած պարոն, անպատճառ:

Ֆատուտը դուրս է գնում

Այս պարոնի պէս տարփածուն յիմար
Արին ու լուսին, աստղերն անհամար
Օդ՝ կըցնդեցնէ սիրունու համար:

(Դուրս է գնում:)





ԴՐԱՅՈՒՀՈՒ ՏՈՒՆԸ



ՄԱՐԹԱ (մենակ)

Աստուած ներէ իմ սիրելի մարդուն,
Մոռացել է ինձ, չէ ուզում դալ տուն:
Ազատ թափառում է նա աշխարհում,
Իսկ ինձ յարդի վրայ մենակ է թողնում:
Նորան ոչնչով չեմ ես վշտացրել,
Եւ, զիտէ Աստուած, սրտանց եմ սիրել:

(Լաց է լինում)

Գուցէ մեռել է խեղճուկս պանդուխտ: —
Գէթ ունենայի մի վկայաթուղթ:

ՄԱՐԳԱՐԻՏԸ դալիս է:

ՄԱՐԳԱՐԻՏ

Ա՛խ, տիկին Մարթա:

ՄԱՐԹԱ

Հը՞, Գրէտիսէն, ի՞նչ կայ:

ՄԱՐԳԱՐԻՏ

Ծնկներս ծալվում են, վայր եմ ընկնում:
Դարձեալ նոյնպիսի մի արկղիկ գտայ,
Սե փայտից, ահա, իմ պահարանում,
Եւ մէջն աւելի գեղեցիկ զարդեր,
Աւելի չքեղ, քան առաջիններ:

— 125 —

ՄԱՐԹԱ

Այդ մասին ոչինչ չասես քո մօրը,
Թէ չէ կրկանէ խոստովնա՜օրը:

ՄԱՐԳԱՐԻՏ

Ա՛խ, տիկին Մարթա, ահա, նայիր, տես:

ՄԱՐԹԱ (զարդարում է նորան)

Փոքրիկ արարած, ի՞նչ երջանիկ ես:

ՄԱՐԳԱՐԻՏ

Ափս՛ս, չեմ կարող ես ոչ փողոցում
Երեւալ այսպէս, ոչ եկեղեցում:

ՄԱՐԹԱ

Ջուտ շուտ եկ ինձ մօտ, ծածուկ զարդարուիր,
Հայելում նայիր, դիմացը ճեմիր.
Եւ այդպէս ահա տեսրովդ չքեղ
Մենք կուրախանա՜նք երկուսս այստեղ:
Յետոյ կըլինի մի դէպք, մի տօն օր,
Մարդկանց կերևանք զարդով փառաւոր,
Ոսկով, մարդարտով: Մայրդ չի տեսնի.
Տեսնէ էլ, խաբիւ դժուար չի լինի:

ՄԱՐԳԱՐԻՏ

Բայց ո՞վ կարող էր արկղերը բերել:
Սա մի հըրաշք է, ի՞նչպէս բացատրել:

(Գուռը ծեծում են:)

ՄԱՐԳԱՐԻՏ

Որ մայրս լինի, հիմա ի՞նչ անեմ:

ՄԱՐԹԱ

(Վարդույրի տակից նայելով:)

Ինչ որ պարոն է:—Ներս մտէք, խնդրեմ:

ՄԷՖԻՍՏՕՖԷԼԷՍԸ մտնում է:

ՄԷՖԻՍՏՕՖԷԼԷՍ

Ներողութիւն պիտի խնդրեմ տիկիններից,
Որ ուղղակի ես ներս մտնել թոյլ տուի ինձ:

Յարգանքով յետ է բաշվում Մարդարտի պատշ

Մարթա ձվերդտլայն տիկնոջն եկայ հարցնելու:

ՄԱՐԹԱ

Ե՛ս եմ, պարոն, ի՛նչ ունիք ինձ յայտնելու:

ՄԷՖԻՍՏՓԷԼԷՍ (Կամաց Մարթային)

Բաւական է, ծանօթացայ ես ձեզ հետ.
Այժմ ունիք ձեզ մօտ մի հիւր մեծատուն:
Ներեցէք, որ ես համարձակ մտայ տուն.
Էլի կըզամ ձեզ մօտ այսօր ճաշից յետ:

ՄԱՐԹԱ (բարձր ձայնով)

Աղջի, գիտե՛ս, որ պարոնը քեզ ուղղորդ
համարում է ազնուական օրիորդ.

ՄԱՐԳԱՐԻՏ

Բարի պարոն, ինձ պատիւ էք անում շատ,
Մի հասարակ աղջիկ եմ ես և աղքատ.
Այս դարդերը, որ տեսնում էք, իմը չեն:

ՄԷՖԻՍՏՓԷԼԷՍ

Ո՛չ, օրիորդ, այդ դարդերը ոչինչ են.
Այլ ձեր անձը, սուր հայեացքը, թափանցիկ:
Ի՛նչ ուրախ եմ, որ ինձ մնալ թոյլ տուիք:

ՄԱՐԹԱ

Չուտ ասացէք, ի՛նչ լուր ունիք ինձ համար:

ՄԷՖԻՍՏՓԷԼԷՍ

Երանի թէ լաւ լուր տալու լինէր հնար:
Ձեր պատուական ամուսինը, իմ տիկին,
Մեռաւ խեղճը, մեռաւ, տուեց իւր հողին:

ՄԱՐԹԱ

Մեռաւ. վայ ինձ: Հիմա ինձ էլ ի՛նչ ճար կայ:
Ամուսինս մեռաւ, վայ ինձ, էլ չկայ:

ՄԱՐԳԱՐԻՏ

Տիկին Մարթա, շատ մի լաք, ձեզ խնայեցէք:

ՄԷՖԻՍՏՓԷԼԷՍ

Տխուր վէպս շարունակեմ, լսեցէք:

ՄԱՐԳԱՐԻՏ

Ես իմ օրում սիրելու չեմ ոչորին,
Որ կորցնելով, չմաշէ վիշտն իմ հողին:

ՄԷՖԻՍՏՓԷԼԷՍ

Ուրախութիւնն ու վիշտը միշտ յաջորդում են իրար:

ՄԱՐԹԱ

Պատմեցէք ինձ նրա մահը: Չատ ժամանակ էր տկար:

ՄԷՖԻՍՏՓԷԼԷՍ

Պաղուա քաղաքումը,

Սուրբ Անտօնի բակումը,

Հանդուցեալը նեղ շիրմում:

Հանգիստ քուն է վայելում:

ՄԱՐԹԱ

Արդեօք ոչինչ չէք բերել դուք նորանից ինձ համար:

ՄԷՖԻՍՏՓԷԼԷՍ

Այո, տիկին, մեծ խնդիրք, թէպէտե ծանր ու դժուար:
Նա խնդրեց, որ նրա համար երեք հարիւր պատարազ
Գուր ձեր հաշուով անել տաք. իսկ իւր քսակն էր դատարկ:

ՄԱՐԹԱ

Ի՛նչ: Չուղարկեց նա ոչինչ, ոչ էլ անգամ մի հատ դմար:
Իւրաքանչիւր մի բանուոր, թէ որ է նա ազնիւ մարդ,
Ինքը քաղցած է մնում, կոպէկ կոպէկ ժողովում,
Եւ վերջը իւր կնոջը մի յիշատակ է թողնում:

ՄԷՖԻՍՏՓԷԼԷՍ

Մաղան, սրտանց ցաւում եմ, հաւատացէք իմ խօսքին.
Իւր փողերը նա երբէք չէ բաժանել ոչորին:
Նա շատ և շատ զոջում էր իւր բազմաթիւ սխալները,
Եւ ողբում էր դառնապէս իւր տարաբաղդ օրերը:

ՄԱՐԳԱՐԻՏ

Խեղճ մարդ, ճիշտն տարաբաղդ է եղել նա աշխարհքում:
Ես կըյիշեմ նորան միշտ իմ ջերմեռանդ աղօթքում:

ՄԷՖԻՍՏՓԷԼԷՍ

Արժանի էք, որ խկոյն գտնէք մէկ լաւ ամուսին,
Որովհետեւ սիրարժան և բարի էք դուք այդքան:

ՄԱՐԳԱՐԻՏ

Ո՛չ, դեռ ես շատ վաղ է ինձ մտածել այդ մասին:

ՄԷՖԻՍՏՓԷԼԷՍ

Մարդ չլինի, թող լինի առ այժմ մի սիրական:

Ամենամեծ վայելչութիւն է երկնային,
Գիրկը առնել ձեզ պէս սիրուն երեխային:

ՄԱՐԳԱՐԻՏ

Սովորութիւնն այդ չկայ մեղանում:

ՄԷՖԻՍՏՓԷԼԷՍ

Կայ, չկայ, բայց այդ շատերն են անում:

ՄԱՐԹԱ

Պատմեցէք, պարոն:

ՄԷՖԻՍՏՓԷԼԷՍ

Պատմում եմ ան:

Ես կանգնած էի նորա մահճի մօտ,

Որ փռած յարդ էր, սաստիկ գարշահոտ.

Սակայն նա մեռաւ, իբրեւ քրիստոնեայ:

Անկեղծ գոջալով, կանչեց վշտազին.

«Թողի արհեստս, կնոջս թողի ես.

Ինչպէս տանջւում է, Աստուած, իմ հողին:

Ա՛խ, թէ ներէր ինձ կինս թանկագին»:

ՄԱՐԹԱ (լալով)

Խեղճուկս, վաղուց ներել եմ ես քեզ:

ՄԷՖԻՍՏՓԷԼԷՍ

«Բայց զիտէ Աստուած, և կըհաստատեմ,

Նա աւելի է մեղանշել իմ դէմ»:

ՄԱՐԹԱ

Այդ սո՛ւտ է: Ի՛նչպէս չէ նա ամաչում,

Մեռնելիս անգամ ստով մեղանշում:

ՄԷՖԻՍՏՓԷԼԷՍ

Անշուշտ զառանցում էր նա հողեարք,

Եթէ չեմ սխալւում: «Ես», ասում էր նա,

«Միշտ աշխատել եմ, քրտնել անխնայ.

Նախ պէտք է որդիք բերէի աշխարհք,

Ապա ամենքի համար հաց ճարել.

Իսկ իմ բաժինը հանգիստ չեմ կերել»:

ՄԱՐԹԱ

Մոռացել է նա այդպէս իմ սէրը,

Իմ տանջանքները օր ու գիշերը:

ՄԷՖԻՍՏՓԷԼԷՍ

Ո՛չ, այդ բոլորը յիշում էր նա լաւ:

Ասաց. «Երբ Մալտա նստեցայ ես նաւ,

Ջերմ աղօթքով դիմեցի ես երկնքին,

Յանձնելով իմ ընտանիքը նրա խնամքին:

Եւ երկինքը լսեց աղօթքս իրաւ,

Ծովի վերայ բռնեցինք մի տաճկի նաւ,

Որ բարձած էր մեծ սուլթանի գանձերով:

Կողոպուտը բաժանեցինք մեր ձեռով.

Եւ իւր մասը ստացաւ մեզնից մեն մինը,

Ես էլ ստացայ իհարկէ իմ բաժինը:

ՄԱՐԹԱ

Է՛յ, է՛յ, չգիտէք, ի՛նչտեղ է պահել:

ՄԷՖԻՍՏՓԷԼԷՍ

Ո՛վ զիտէ, թէ ուր քամուն է տուել:

Երբ նէսպօլում շրջում էր մինակ,

Նրան մի օրիորդ չէր թողնում տրտում,

Որի սէրը և քաղցր յիշատակ

Մինչև իւր մահը պահեց իւր սրտում:

ՄԱՐԹԱ

Ո՛վ գող, աւագակ, ո՛վ իւր տան չարիք:

Ոչ անբաղդութիւնն և ոչ մի կարիք

Չուղղեցին նորա կեանքը անառակ:

ՄԷՖԻՍՏՓԷԼԷՍ

Դորա համար էլ մեռաւ խայտառակ:

Հիմա ձեր տեղը եթէ լինէի,

Մի տարի միայն սուգ կըպահէի

Եւ կորոնէի մի նոր ամուսին:

ՄԱՐԹԱ

Ա՛խ, հեշտ չեմ գտնի ես նորա պէսին,

Թէպէտ և ման գամ ես բոլոր աշխարհ:

Հանգուցեալս էր բարեսիրտ յիմար:

Սիրում էր կեանքը թափառականի,

Եւ օտար կանանց, և օտար գինի.

Մէկ էլ անիծած խաղը ատելի:

ՄԷՖԻՍՏՓԷԼԷՍ

Այդքանը միայն և ոչ աւելի:
 Սակայն և երբէք ձեզ չէր արգելում
 Անել այն, ինչ որ նա ինքն էր անում:
 Նոյն այդ պայմանով, պատրաստ եմ, տիկին,
 Խնդրել ձեզ, որ մենք դառնանք մարդ ու կին:

ՄԱՐԹԱ

Իհարկէ, պարոն, կատակ էք անում:
 ՄԷՖԻՍՏՓԷԼԷՍ (ինքն իրան)

Չուտ գնամ, թէ չէ, սիլ է իմանում,
 Վայ թէ խօսքի վրայ բռնէ սա դեմին:

(Մարգարիտին)

Չեր սիրտը զարթել չէ՞ դեռ տակաւին:

ՄԱՐԳԱՐԻՏ

Ի՞նչ էք կամենում ասել դուրանով:

ՄԷՖԻՍՏՓԷԼԷՍ (ինքն իրան)

Ո՛վ, անմեղ մանուկ:

(Բարձր ձայնով)

Մընացէք բարով,

Ազնիւ տիկիններ:

ՄԱՐԳԱՐԻՏ

Գընացէք բարով:

ՄԱՐԹԱ

Ի՞նչպէս ստանամ ես մի վկայութիւն
 Խեղճ մարդուս մահուան ու թաղման մասին:
 Ես միշտ սիրել եմ կարգապահութիւն.
 Կուզէի կարգալ լրագրում այդ մասին:

ՄԷՖԻՍՏՓԷԼԷՍ

Տիկին, բաւական է երկու վկայ,
 Որ ճշմարտութիւնը երևան գայ:
 Ունիմ լաւ ընկեր. այդ իմ ընկերին
 Կընեղկայացնեմ ես դատաւորին:

Կամենա՞ր, բերեմ:

ՄԱՐԹԱ

Այո, չմտ բերէք:

ՄԷՖԻՍՏՓԷԼԷՍ

Օրիորդ, դուք էլ, խնդրում եմ, եկէք:—
 Ազնիւ տղայ է, կտրիճ և արի,
 Վերին աստիճան քաղաքավարի:

ՄԱՐԳԱՐԻՏ

Ես չառ կամաչեմ պարոնի առաջ:

ՄԷՖԻՍՏՓԷԼԷՍ

Արքայ էլ լինի, պահեցէք ձեզ քաջ:

ՄԱՐԹԱ

Իմ տան ետեւը ունիմ ես պարտէզ.
 Այնտեղ կըսպասենք այս երեկոյ ձեզ:





Փ Ո Ղ Ո Յ

ՓԱՌԻՍՏ. ՄԷՓԻՍՏՕՓԷԼԷՍ



ՓԱՌԻՍՏ

Ք՛, աստ, ինչպէս է գնում բանը:
Հուտով կը հասնեմ իմ ցանկութեանը:

ՄԷՓԻՍՏՕՓԷԼԷՍ

Ա՛հ, բրնձ, դօկտօր, այրվում էք բոցում:
Հուտով Գրէտխէնք կըլնի ձեր ծոցում:
Այսօր կըտեսնէք դրացուն հու այգում:
Ա՛յ կին, նմանը չկայ աշխարհքում,
Կասես ստեղծուած է կաւատ լինելու:

ՓԱՌԻՍՏ

Լաւ է:

ՄԷՓԻՍՏՕՓԷԼԷՍ

Մեզնից էլ բան են խնդրելու:

ՓԱՌԻՍՏ

Ամենայն սիրով պիտի կատարենք:

ՄԷՓԻՍՏՕՓԷԼԷՍ

Մի վկայաթուղթ պիտի ստորագրենք,
Թէ նորա մարդու գիակը հոտած
Պաղուտ օրհնած հոգումն է թաղած:

ՓԱՌԻՍՏ

Ուրեմն պէտք է զնանք ու տեսնենք:

ՄԷՓԻՍՏՕՓԷԼԷՍ

Sancta simplicitas! Կարիք չունինք:
Առանց տեսնելու դու կը վկայես:

ՓԱՌԻՍՏ

Ուրեմն պէտք է այդ միտքը թողնես:

ՄԷՓԻՍՏՕՓԷԼԷՍ

Ո՛վ սուրբ մարդ, սրբան ազնուամտութիւն:
Առաջին անգամն էք դուք ձեր կեանքում,
Ասացէք, տալիս սուտ վկայութիւն:
Աստուծոյ, երկրի, որ ինչ աշխարհքում,
Մարդու և բոլոր բաների մասին,
Ինչ որ կայ նորա գլխումն ու սրտում,
Քանի աշխարհ էք ուսանողներին
(ձշմարտութիւն էք կարծես հաստատում),
Տուել ձեր կողմից լուրջ, ազդու խօսքով,
Գողող ճակատով, յանդուգն հոգով
Ձեր խելքից փշած բացատրութիւնը:
Բայց եթէ խորը քննենք, կըտեսնենք,
Որ և նոյնքան է ձեր գիտութիւնը,
Որքան ձվէրդալայնի մասին բան գիտենք:

ՓԱՌԻՍՏ

Ստախօս սովիւստ էիր միշտ և կաս:

ՄԷՓԻՍՏՕՓԷԼԷՍ

Մեզ ուրիշներից պէտք չէ առնել դաս:
Արդեօք հենց վաղը չես յիմարացնի
Խեղճուկ Գրէտխէնին, չես հաւատացնի,
Թէ բոլոր հոգով սիրում ես նորան:

ՓԱՌԻՍՏ

Այո և սրտանց:

ՄԷՓԻՍՏՕՓԷԼԷՍ

Խօսք չկայ դորան:

Յետոյ անասան հաւատարմութեան,
Անսահման սիրոյ մասին կը խօսես—

Սրտանց կըլինի այդ բանն էլ նոյնպէս:

ՓԱՌԻՍՏ

Լաւ, բաւական է: Երբ ես զգում եմ
եւ իմ զգացմունքի համար ուզում եմ
Մի անուն գտնել, սակայն չեմ գտնում,
Ամբողջ աշխարհը մտքով պտտում,
Գեղեցիկ, վսեմ բառեր եմ շարում,
Եւ այս կրակը, որ ինձ է այրում,
Ես անուանում եմ անսահման, անվերջ,
Մի՞թէ ստուծին կայ ասածիս մէջ:

ՄԷՖԻՍՏՕՖԷԼԷՍ

Լաւ: Սակայն էլի ես եմ ճշմարիտ:

ՓԱՌԻՍՏ

Ասածս լսիր և պահիր մտքիդ,
Եւ խնդրում եմ, որ թոքերս խնայես.
Ով ուզում է, որ ճշմարիտ լինի,
Կըլնի, լինի միայն լեզուանի:
Ե՛կ, դատարկ խօսել չեմ սիրում, գիտես.
Համաձայնում եմ, դու ճշմարիտ ես:



Պ Ա Ր Տ Է Ձ

ՄԱՐԳԱՐԻՏԸ, ՓԱՌԻՍՏԸ, ՄԱՐԹԱՆ և ՄԷՖԻՍՏՕՖԷԼԷՍԸ թեւ թեւի
տուած դրօսնում են:

ՄԱՐԳԱՐԻՏ

Ա զգում եմ, պարոն, խնայում էք դուք ինձ,
Ձէք ուզում, որ ես կարմրեմ ամօթից:
Դուք, իբրեւ ճամբորդ, շատ բան էք տեսել,
Եւ իմանում էք, ում հետ ինչ խօսել:
Ես գիտեմ, ձեզ պէս բազմափորձ մարդուն
Կարող չէ գրաւել իմ խօսակցութիւն:

ՓԱՌԻՍՏ

Քո մէկ հայեացքը, բառը, նազելի,
Ինձ համար գրաւիչ է շատ աւելի,
Քան թէ աշխարհի իմաստութիւնը:

Համբուրում է նորա ձեռք:

ՄԱՐԳԱՐԻՏ

Ի՞նչպէս կարող էք այս ձեռն համբուրել:
Տեսէք, կորցրել է իւր փափկութիւնը.
Ծանր աշխատանքն է այդպէս կոշտացրել.
Միշտ գործ է շինում և չունի հանգիստ,
Ա՛խ, իմ մայրիկը պահանջող է խիստ:

Անց են կենում:

ՄԱՐԹԱ

Ուրեմն դուք միշտ շրջում էք, պարոն:

ՄԵՓԻՍՏՕՓԷԼԷՍ

Այո, շրջելն է, տիկին, իմ պաշտօն:
Ծաւելով պէտք է երբեմն հեռանայ
Մի տեղից, ուր մարդ ուղղում է մնալ:

ՄԱՐԹԱ

Իհարկէ, հեշտ է երկտասարդին
Ամբողջ աշխարհում պտտել ագատ,
Սակայն ծերութեան տխուր հասակին
Ամուրի մեռնել, ահա այդ է վատ
Եւ ցանկալի չէ անշուշտ ոչորին:

ՄԵՓԻՍՏՕՓԷԼԷՍ

Սոսկում եմ, երբ այդ մտածում եմ ես:

ՄԱՐԹԱ

Ուրեմն խորհուրդ եմ տալիս ես ձեզ:

Անց են կենում:

ՄԱՐԳԱՐԻՏ

Կերթաք և ինձ կըմոռանաք,
Հիմա էք դուք խօսում տաք տաք.
Դուք շատ ունիք բարեկամներ,
Որոնց խելքն է իմից շատ վեր:

ՓԱՌԻՍՏ

Հաւատան ինձ, սիւ իմ հրեշտակ միամիտ,
Խելօքները սնափառ են, կարճամիտ:

ՄԱՐԳԱՐԻՏ

Ի՞նչպէս:

ՓԱՌԻՍՏ

Ափսոս, որ անմեղութիւնը
Չէ ճանաչում իւր արժողութիւնը:
Համեստութիւնն է գերագոյն բարիք,
Բընութեան պարզ և մի շնաշխարհիկ:—

ՄԱՐԳԱՐԻՏ

Ա՛խ, թէ մի վայրկեան կը յիշէք դուք ինձ,
Երբէք չեմ հանի ես ձեզ իմ մտքից:

ՓԱՌԻՍՏ

Ասացէք, դուք շատ մեղաւ էք տանը:

ՄԱՐԳԱՐԻՏ

Այո, թէպէտ մեծ չէ մեր տան բանը,
Սակայն ամեն տեղ էլ պէտք է հասնել:
Աղախին չունինք և ամեն բան էլ
Ես պէտք է անեմ. եփեմ, աւելեմ,
Կարեմ, ամբողջ օր ոտի վրայ լինեմ.
Եւ մայրս ունի շատ խիստ բնութիւն,
Սաստիկ սիրում է կարգապահութիւն:
Մենք կարիք չունինք այդպէս նեղ ապրել
Եւ ուրիշներից պակաս կեանք վարել.
Իմ հայրը թողեց լաւ կարողութիւն,
Դուրսը մէկ պարտէզ, քաղաքում մէկ տուն:
Հիմա հանգիստ եմ ապրում բաւական.
Եղբայրս գնաց և զինուոր դառաւ,
Իսկ փոքրիկ քոյրս, խեղճուկը, մեռաւ:
Ինձ շատ չարչարեց, ան, այդ երեխան.
Սակայն այնքան շատ սիրելի էր ինձ,
Որ յօժար եմ ես չարչարուել նորից:

ՓԱՌԻՍՏ

Անշուշտ հրեշտակ էր, թէ քեզ էր նման:

ՄԱՐԳԱՐԻՏ

Ինձ շատ էր սիրում, ես մեծացրի նրան:
Հօրս մահից յետ եկաւ նա աշխարհ.
Մօրս դրութիւնն էր անսխիլմար,
Նա ծանր հիւանդ անկողին ընկաւ,
Չատ կամաց կամաց միայն ոյժի եկաւ:
Այդպէս, իհարկէ, չէր կարող ինքը
Երեխային տալ մայրական ստիները.
Ես սննդեցի փոքրիկին մեղաւ,
Կաթնով ու ջրով, իբրեւ իմ զաւակ:
Դրկումս պահած, նորան տաքացրի,
Առողջ ու զուարթ այդպէս մեծացրի:

ՖԱՌԻՍՏ

Անշուշտ երջանիկ զգում էիր դու քեզ:

ՄԱՐԳԱՐԻՏ

Բայց ծանր ժամեր ունեցայ նոյնպէս:

Նրա օրօրոցը անկողնիս մօտ էր

Գիշերը կանգնած. հենց որ շարժվում էր,

Քնիցս զարթում, կաթն էի տալիս,

Կամ ինձ մօտ առնում, թէ շատ էր լալիս,

Տեղից վեր կենում, գիրկս էի առնում

Եւ սենեակի մէջ դէս ու դէն պարում.

Առաւօտը վաղ շորերը լուանում,

Յետոյ շուկան գնում, կերակուր եփում.

Այսպէս ամեն օր միևնոյնն անում:

Ա՛խ, պարոն, դորձը միշտ հեշտ չէ գնում,

Բայց յետոյ լաւ ես ուտում ու քնում:

Անց են կենում:

ՄԱՐԹԱ

Ի՞նչ անեն խեղճ կանայքը, ողորմելի են իրաւ.

Ամուսնանալ չեն ուզում ամուրիներն անիրաւ:

ՄԷՖԻՍՏՕՖԷԼԷՍ

Ձեզ պէս մէկը թէ լինէր և ինձ բարի խորհուրդ տար,

Ինձ համոզել, կարծում եմ, լինելու չէր շատ զօուար:

ՄԱՐԹԱ

Ասացէ՛ք ինձ, մի՞թէ դեռ չէ պատահել ձեզ մի կին,

Որին ձեր սիրտը կպչէր և համակրէր ձեր հոգին:

ՄԷՖԻՍՏՕՖԷԼԷՍ

Յայտնի առածն ասում է. սեպական տուն և լաւ կին,

Չատ աւելի թանկ արժեն, քան մարդարիտն ու ոսկին:

ՄԱՐԹԱ

Մի՞թէ երբէք ցանկութիւն չէր ունեցել դուր իրաւ:

ՄԷՖԻՍՏՕՖԷԼԷՍ

Ամեն տեղ, ուր եղել եմ, ընդունել են ինձ շատ լաւ:

ՄԱՐԹԱ

Ես հարցնում եմ. մի՞թէ ձեր սիրտը զգացել չէ դեռ սէր:

ՄԷՖԻՍՏՕՖԷԼԷՍ

Կատակ անել կանանց հետ յանդգնութիւն կը լինէր:

ՄԱՐԹԱ

Ա՛խ, դուք ինձ չէք հասկանում:

ՄԷՖԻՍՏՕՖԷԼԷՍ

Ափսոսում եմ ես սրտանց,

Բայց այս պարզ է ինձ համար, որ բարի էք չափազանց:

Անց են կենում:

ՖԱՌԻՍՏ

Ճանաչեցիր ինձ, իմ փոքրիկ հրեշտակ,

Երբ մտայ պարտէզ:

ՄԱՐԳԱՐԻՏ

Մի՞թէ չտեսաք,

Ինչպէս աչքերս խոնարհեցրի ես:

ՖԱՌԻՍՏ

Յանդգնութիւնս արդեօք ներձում ես,

Որ ես խօսեցայ քեզ հետ փողոցում,

Երբ եկեղեցուց տուն էիր գնում:

ՄԱՐԳԱՐԻՏ

Չփութուեցայ, այդ ինձ դեռ չէր պատահել.

Ոչոք կարող չէ իմ վատը ասել:

Ա՛խ, մտածեցի, իմ մէջ ի՞նչ տեսաւ,

Որ այնպէս վստահ նա ինձ մօտեցաւ:

Թե՛թի վարքի տէր աղջիկ համարեց,

Եւ ինձ հետ այնպէս կատակ նա արեց:

Բայց պէտք է ասեմ, որ իսկոյն ինչ որ

Ձգացի ես իմ մէջ, ձեզ նախատաւոր.

Սակայն ես ինձ վրայ սաստիկ բարկացայ,

Թէ ինչի ձեզ վրայ շատ չչարացայ:

ՖԱՌԻՍՏ

Սէր իմ:

ՄԱՐԳԱՐԻՏ

Թողէ՛ք ինձ:

Նա կտրում է մէկ աստղածաղիկ եւ մէկ մէկ փետում է թերթիկները:

ՖԱՌԻՍՏ

Այդ ի՞նչ ես անում:

ՄԱՐԳԱՐԻՏ

Ոչինչ, խաղում եմ:

ՖԱՌԻՍ

Ի՞նչ, չեմ հասկանում:

ՄԱՐԳԱՐԻՏ (կիսածայն)

Նա ինձ սիրում է—նա ինձ չէ սիրում:

ՖԱՌԻՍ

Հրեշտակ իմ չքնադ:

ՄԱՐԳԱՐԻՏ (շարունակում է)

Սիրում—չէ սիրում—

Սիրում—չէ սիրում—

Վերջին թերթիկը փետելով, ուրախացած:

Նա սիրում է ինձ:

ՖԱՌԻՍ

Այդ պատասխանը ծաղկի շրթունքից,

Սէր իմ, համարի՛ր պատգամ երկնքից:

Նա քեզ սիրում է: Դու հասկանում ես,

Թէ ինչ ասել է. նա սիրում է քեզ:

Բռնում է նորա ձեռք:

ՄԱՐԳԱՐԻՏ

Ես վախենում եմ:

ՖԱՌԻՍ

Ո՛չ, մի, նազելի:

Թող այս հայեացքը, ձեռք սխմելը

Ասեն քեզ, ինչ որ է անասիլի.

Հոգով իրար հետ կապուել, միանալ,

Փոխադարձ սիրոյ երջանկութիւն զգալ,

Որ պիտի լինի յաւիտենական,

Որ պիտի լինի անվերջ, մշտական:—

Նորա վախճանն է յուսահատութիւն:

Ո՛չ, թող չունենայ վերջաւորութիւն:

Մարգարիտը սխմում է նորա ձեռները, խլովում է ու փախչում: Ֆառուստը մի րոպէ կանգնած է մտածումների մէջ, յետոյ հետեւում է նորան:

ՄԱՐԹԱ (զալիս է)

Արդէն մթնում է:

ՄԷՖԻՍՏՓԷԼԷՍ

Եւ պէտք է գնալ:

ՄԱՐԹԱ

Ես կըլնեղրէի ձեզ էլի մ՛նալ,

Բայց, պէտք է ասեմ, վատ տեղ ենք ապրում:

Չուրջ ապրողները, հեռու ու մօտիկ,

Կարծես բան ու գործ չունին այդ մարդիկ,

Միշտ հարեանի քայլերն են համրում:

Որքան և համեստ ապրես քեզ համար,

Քեզ կըբամբասէ նոցա լեզուն չար:

Սակայն մեր զոյգը, ուր է, ինչ եղաւ:

ՄԷՖԻՍՏՓԷԼԷՍ

Թռչունների պէս այն կողմը թռաւ:

ՄԱՐԹԱ

Կարծես պարոնը սիրեց աղջկան:

ՄԷՖԻՍՏՓԷԼԷՍ

Աղջիկն էլ նորան: Սովորական բան:





ՓՈՔՐԻԿ ՏՈՒՆ ՊԱՐՏԻՉՈՒՄ

ՄԱՐԳԱՐԻՏԸ ներս է վազում, թաղնվում դրան կտեւը, դնում է մատի ծայրը
շրթունքներին եւ նայում է դրան ճեղքից:



ՄԱՐԳԱՐԻՏ

ալիս է:

ՓԱՌԻՍ (դալիս է)

Այդպէս զրգուում ես ինձ,
Ա՛յ չարաճճի. չէս փախչի ինձնից:

(Համբուրում է նորան)

ՄԱՐԳԱՐԻՏ

(Նորան զրկելով եւ համբոյրը վերադարձնելով)

Պատուական տղամարդ, սիրում եմ ես քեզ:

ՄԷՓԻՍՏՕՓԷԼԷՍ (զուտը ծնծում է)

ՓԱՌԻՍ (բարկացած)

Ո՛վ է:

ՄԷՓԻՍՏՕՓԷԼԷՍ

Բարեկամ:

ՓԱՌԻՍ

Դու անասուն ես:

ՄԷՓԻՍՏՕՓԷԼԷՍ

Արդէն ժամանակ է բաժանուելու:

ՄԱՐԹԱ (դալիս է)

Այո, իմ պարոն, արդէն շատ ուշ է:

ՓԱՌԻՍ

Իրաւունք կը տամք ձեզ ուղեկցելու:

ՄԱՐԳԱՐԻՏ

Ո՛չ, ո՛չ, մենք բարով, մայրս կը տեսնէ:—

ՓԱՌԻՍ

Ուրեմն պիտի գընամ: Մենք բարով:

ՄԱՐԹԱ

Գնա՛ք բարով, պարոն:

ՄԱՐԳԱՐԻՏ

Կը տեսնուենք շուտով:

Ֆառաստիկ եւ Մէֆիստոֆէլէսը դնում են:

ՄԱՐԳԱՐԻՏ

Չատ խելօք մարդ է, Աստուածս վկայ.

Ամեն բան գիտէ, ինչ կայ ու չկայ:

Կանգնած եմ առաջը ամաչելով,

Նրա ամեն խօսքին «այո» ասելով:

Ես այնպէս տղէտ ու միամիտ եմ.

Ի՞նչ տեսաւ իմ մէջ, իրաւ չգիտեմ:

Դուրս է գնում:





ԱՆՏԱՌ ԵՒ ՔԱՐԱՅՐ



ՓԱՌԻՍՏ (մենակ)

Ե՛հ ոգի, դու ինձ ամեն բան տուիր,
Ինչ որ խնդրեցի: Իզուր չէր, որ դու
Բոցափայլ դեմքդ դարձրիր գէպի ինձ:
Բնութիւնը տուիր իմ իշխանութեան,
Տուիր նաև ոյժ, որ զգամ, վայելեմ:
Թոյլ տուիր, ոչ թէ սառն աչքով նայել,
Այլ թէ թափանցել նորա խոր կուրծքը,
Իբրև սրտի մէջ մի բարեկամի:
Բոլոր կենդանի արարածները

Դու անց ես կացնում շարքով իմ առաջ,
Ծանօթացնում ինձ եղբայրներիս հետ.
Կանաչ թփի մէջ, օդում ու ջրում:
Եւ երբ գոռում է մրրիկն անտառում,
Հսկայ եղևինը վայր ընկնելով,
Կոտրատում է իւր դրացի ծառերը,
Եւ նորա անկման թնդիւնը կրկնում
Մերձակայ բլուրը, բերում ես դու ինձ
Ապահով այրը և ցոյց ես տալիս
Դու ինձ իմ անձը, և հոգուս առաջ

Բացվում են բնութեան հրաշալիքները:
Եւ երբ ծագում է պայծառ լուսինը,
Ինձ մօտ իջնում են ժայռերը ծածկող
Խոնաւ թփերից անցած դարերի
Ալիոր ստուերներ և մեղմացնում են
Հետադադարեցնող սառնակ գրգիռը:

Աւաղ, զգում եմ ես, ոչինչ կատարեալ
2է տրվում մարդուն: Վայելչութեան մէջ,
Որ մօտեցնում է ինձ աստուածներին,
Տուիր ինձ մի ընկեր, որից հեմ կարող
Բաժանուել, թէպէտ նա լիրբ սառնութեամբ
Ստորացնում է իմ հսն իմ առաջ
Եւ պարզենեղ ծաղրում, չքացնում:
Սրտիս մէջ վառեց նա վայրենի սէր
Դէպի մի չքնաղ, անմեղ արարած:
Անվերջ ցանկանում եմ և վայելում,
Եւ վայելելով, նորից ցանկանում:

Մտնում է ՄԷՖԻՍՏՓԷԼԵՍԸ

ՄԷՖԻՍՏՓԷԼԵՍ

Մի՞թէ այդպէս չուտ կեանքից ձանձրացաք,
Որ այս անապատը առանձնացաք:
Մէկ անգամ արդէն որ այդ փորձն արիք,
Նոր, ուրախ կեանքի պիտի զգաք կարիք:

ՓԱՌԻՍՏ

Լաւ էր մի ուրիշ գործով զբաղուէիր,
Քան հանգստութիւնս խանգարէիր:

ՄԷՖԻՍՏՓԷԼԵՍ

Լաւ է, լաւ, հանգիստ կը թուինեմ ես քեզ.
Ինձ հարկաւոր չէ, որ խօսքդ կրկնես:
Քեզ պէս անհամբոյր, կոպիտ, խելագար
Ընկերը մի մեծ գիւտ չէ ինձ համար:
Ամբողջ օր անխոնջ աշխատում եմ ես,

Կամբղ կատարում, հաճոյանում քեզ.
Սակայն դու, պարոն, ոչնչով դո՛ւ չես:

ՖԱՌԻՍՏ

Ընորհակալութիւն ես դեռ պահանջում,
Որ ձանձրացնում ես դու ինձ ու տանջում:

ՄԷՖԻՍՏՕՖԷԼԷՍ

Առանց ինձ ինչպէս պիտի ապրէիր
Դու այս աշխարհում, թշուառ հողածին:
Յիմար ցնորքներով շատ կըտանջուէիր,
Թէ չէիր օգնել ես քո խեղճ անձին.
Թէ ես չլնէիր, արդէն ճանապարհ
Ընկած կլնէիր դէպի միւս աշխարհ:
Այս քարայրերի ու ժայռերի մէջ
Ինչի՞ ես նստել, ինչպէս մի բուռն:
Փռած մամուլի մէջ եւ թաց քարերում
Դողոշի նման ինչի՞ ես ապրում:
Լաւ ժամանակ ես այստեղ անցկացնում.
Դօկտորութիւնդ էլի չես թողնում:

ՖԱՌԻՍՏ

Հասկանում ես դու, ինչ ոյժ կենսական
Տալիս է ինձ այս կեանքն առանձնական:
Եթէ հասկանալ կարողանայիր,
Դե՛, դու իմ բաղդին կընախանձիր:

ՄԷՖԻՍՏՕՖԷԼԷՍ

Վայելչութիւն է լեռներում շրջել,
Ցողի մէջ պառկել, մարմինը թրջել,
Երկինքն ու երկիր մտքով գիրկդ առած,
Երեւակայել քեզ իբրեւ Աստուած,
Թափանցել մինչեւ երկրի խորքերը,
Զգալ արարչութեան բոլոր հրաշքները,
Զգիտեմ, ինչ որ մի վայելք ստանալ,
Երջանիկ սիրով հիանալ, ցնծալ,
Մոռանալ քո մէջ հողածին մարդուն,
Եւ յետոյ այդ բարձր ոգևորութիւն—

(Փամածոռելով)

Անօթ է՝ ասել— վերջացնել այսպէս:

ՖԱՌԻՍՏ

Փո՛ւ քո երեսին:

ՄԷՖԻՍՏՕՖԷԼԷՍ

Անախորժ է ձեզ.

Իրաւունք ունիք դուք ինձ «փո՛ւ» ասել:
Մարուր ականջը կարող չէ լսել,
Ինչ որ անհրաժեշտ է մարուր սրտին:
Աշխարհը թողած, այս փոսում մի՞թիւ
Որոնում ես դու բաւականութիւն,
Բայց շուտով կըղգաս սաստիկ ձանձրութիւն,
Եւ շատ չի անցնի, որ էլի նորից
Հալ ու մաշ կըլնիս դու նոր ցնորքներից:
Քո սիրականը նստած է տխուր,
Խեղճը միշտ քեզ է սպասում, բայց իզուր.
Քեզ նա մի բողբ մտքից չէ հանում,
Նա քեզ սիրում է, քեզ է ցանկանում:
Սկզբում քո սէրը, ինչպէս մի առուակ,
Որ յորդացել է հալուող ձիւներից,
Լցրեց Գրէտխէնի սիրտը անապակ.
Այժմ առուակը բարկել է նորից:
Փոխանակ շրջել անտառներում մութ,
Լաւ կանես, պարոն, պարտքդ կատարես,
Զուտ վերադառնաս սիրականիդ մօտ
Եւ նորա սէրը սիրով վարձատրես:
Խեղճուկը մենակ շատ է ձանձրանում.
Նա պատուհանից էլ չէ հեռանում,
Տեսնում է, ինչպէս ամպերը թեթեւ
Անցնում, ծածկվում են տների ետեւ:
«Ա՛խ, թէ թռչնի պէս թռչէի օդում».
Այսպէս է երգում նա օր ու գիշեր:
Մերթ ուրախ է նա, մերթ սաստիկ տրտում,
Եւ մերթ արտասովում են նորա աչեր,
Եւ յետոյ նորից երևում հանգիստ,
Բայց եւ այնպէս միշտ սիրահարուած խիստ:

ՓԱՌԻՍՏ

Օ՛ձ դու, օձ:

ՄԷՖԻՍՏՕՖԷԼԷՍ (ինքն իրան)

Չնտ լաւ, միայն թէ ձեռս ընկնես:

ՓԱՌԻՍՏ

Անիծած, կորիր, չտեսնեմ ես քեզ,
Չեմ ուզում, որ դու նրա անունն յիշես:
Թող, մի գրգռիր նորից իմ կիւրքը,
Որ ինձ քաշում է նրա քաղցրիկ գիրկը:

ՄԷՖԻՍՏՕՖԷԼԷՍ

Նա կարծում է, թէ փախել ես նրանից.
Որ այդ այդպէս է, թվում է և ինձ:

ՓԱՌԻՍՏ

Հոգով ու սրտով եմ միշտ նորա հետ,
Նորան մոռանալ չեմ կարող յաւէտ.
Ես նախանձում եմ Փրկչի սուրբ մարմինին,
Երբ նա դիպչում է նորա բերանին:

ՄԷՖԻՍՏՕՖԷԼԷՍ

Այն, բարեկամ, ես էլ եմ զգում
Նախանձ, տեսնելով ձեզ իրար գրկում:

ՓԱՌԻՍՏ

Հեռացիր, կաւատ:

ՄԷՖԻՍՏՕՖԷԼԷՍ

Լաւ է, գեղեցիկ:

Դուք հայհոյում էք, իսկ ես ծիծաղում:
Աստուած, որ ստեղծեց տղայ ու աղջիկ,
Որոշեց նաև նոցա սուրբ կոչում:
Արի գնանք, լաւ չէ այս մութ խողովում:
Սիրականիդ մօտ եմ ես քեզ տանում,
Ոչ թէ պառկեցնում թաց գերեզմանում:

ՓԱՌԻՍՏ

Նորա գրկումն է երջանկութիւնը,
Թող նորա կրծքի զգամ ջերմութիւնը,
Միշտ հետս ունիմ նրա տրամութիւնը:
Ոչ մի տեղ հանգիստ ինձ չգտնելով,

Փախայ նորանից, ընկայ սար ու ձոր,
Ջրվէժի նման ժայռից ընկնելով,
Դիմում էի ես դէպ' անդունդը խոր:
Իսկ նա մի կողմը փոքրիկ խրճիթում
Ապրում է, իբրև մի անմեղ մանկիկ,
Ոչինչ հոգս չունէր անարատ սրտում,
Դո՛հ իւր վիճակից և միշտ երջանիկ:

Եւ ես, մերժուածս,

Ի՞նչ էի խնդրում,

Մինչ մէկ հարուածս

Ժայռեր էր փշրում:

Խլեցի նորա հանգստութիւնը,
Դժոխքին զոհեցի անմեղութիւնը:
Սրտիս երկիւղը փարատիր, ո՛վ դե:
Լինելուն լինի, և այնուհետև
Նորա օրհասը ինձ վրայ ծանրանայ,
Եւ նա էլ ինձ հետ թող ոչնչանայ:

ՄԷՖԻՍՏՕՖԷԼԷՍ

Դարձեալ եռում է, այրվում բոցավառ:
Գնա, մխիթարիր նորան, դու յիմար:
Հենց որ մի բանում չես գտնում դու ելք
Չուտ վհատում ես, կորցնում միտք ու խելք:
Կեցցէ, ով որ քաջ մտնում է աշխարհ:
Մեղ հետ բաւական սատանայացար:
Ոչինչ այնքան վատ երբէք չէ թվում,
Քան մի սատանայ, որ յուսահատվում:





ԳՐԷՏԻՆԻ ՍԵՆԵԱԿԸ



ԳՐԷՏԻՆ

(Մենակ նստած է նախարակի մօտ)

Կորան իմ հանգիստ,
Սիրտս ծանր է խիստ.
Անձկութիւնն ու վիշտ
Տանջում են ինձ միշտ:

Ուր որ նա չկայ,
Անդ միայն մահ կայ.
Ամբողջ աշխարհը
Մութն է ու դառը:

Խեղճուկ գլուխս էլ
Խեղադարուել է,
Միտքս շփոթուել
Ու խանգարուել է:

Կորան իմ հանգիստ,
Սիրտս ծանր է խիստ.
Անձկութիւնն ու վիշտ
Տանջում են ինձ միշտ:

— 151 —

Նորան եմ նայում
Միշտ պատուհանից,
Նորա համար եմ
Դուրս գնում տանից:

Նորա քայլուածքը,
Ազնիւ շարժուածքը,
Ժպիտը անոյշ,
Աչքի փայլն ու ոյժ.

Նորա խօսքերի
Թովիչ հրապոյրը,
Ա՛խ, չըթուեքների
Քաղցր համբոյրը:

Կորան իմ հանգիստ,
Սիրտս ծանր է խիստ.
Անձկութիւնն ու վիշտ
Տանջում են ինձ միշտ:

Ա՛խ, կարողանամ,
Նորան ամեն ժամ
Պինդ պահել գրկիս,
Կշտանայ հոգիս:

Համբոյրներ անվերջ
Դրոշմեմ չըթուեքին,
Համբոյրների մէջ
Փշեմ իմ հոգին:



ՄԱՐԹԱՅԻ ՊԱՐՏԷԶԸ

ՄԱՐԳԱՐԻՏ. ՓԱՌԻՍՏ



ՄԱՐԳԱՐԻՏ

Ոստացիր, Հայնրիկս:—

ՓԱՌԻՍՏ

Ինչ որ կարող եմ:

ՄԱՐԳԱՐԻՏ

Ասա, լինչպէս ես դու կրօնին նայում:
Դու շատ բարի ես, և ես սիրում եմ,
Բայց կարծում եմ, որ կրօնը չես յարգում:

ՓԱՌԻՍՏ

Դու զգում ես սէրս, հրեշտակ իմ սիրուն.
Քեզ զոհ կըբերեմ իմ կեանքն ու արիւն,
Հաւատդ խել չեմ կամենում ես:

ՄԱՐԳԱՐԻՏ

Այդպէս չէ, պէտք է հաւատալ նոյնպէս:

ՓԱՌԻՍՏ

Պէտք է:

ՄԱՐԳԱՐԻՏ

Երանի՜ թէ համոզեմ քեզ:

Սուրբ հաղորդութիւնն էլ դու չես յարգում:

ՓԱՌԻՍՏ

Յարգում եմ:

ՄԱՐԳԱՐԻՏ

Սակայն պահանջ չես զգում:
Ժամ չես ման գալիս, չես խոստովանում.
Արդեօր հաւատում ես դու Աստծուն:

ՓԱՌԻՍՏ

Այդ ո՞վ կարող է ասել, իմ սիրուն,
Թէ հաւատում եմ: Հարցրու տէրտէրին,
Կամ իմաստունին, հարցրու շատերին,
Եւ նոցա տուած քեզ պատասխանը
Յանդուզն ծաղր կըլնի հարցմանը:

ՄԱՐԳԱՐԻՏ

Ապա ուրեմն դու չե՞ս հաւատում:

ՓԱՌԻՍՏ

Ա՛խ, սէր իմ, դու ինձ լաւ չես հասկանում:

Ո՞վ նրան կանուանէ,

Ո՞վ կըգաւանէ.

Հաւատում եմ ես:

Ո՞վ է նրան ըզգում,

Եւ համարձակում

Աներկիւղ ասել.

Չեմ հաւատում ես:

Ամենահասը,

Ամենակալը,

Նա չէ պահպանում

Քեզ, ինձ, ինքն իրան:

Մեր վերիը չէ՞ երկնակամարը,

Երկիրը հաստատ չէ՞ մեր ոտի տակ:

Յաւիտենական փայլուն աստղերը

Չեն ծաղում բարձրից հանդարտ գիշերը:

Չէ՞ նայում միթէ աչքս քո աչքում,

Եւ չէ՞ թափանցում արդեօք բոլորը

Քո գլուխն ու սիրտը, և, իբրեւ զազանիք

Յաւիտենական, չէ՞ շուրջ պատում քեզ

Մերթ տեսանելի, մերթ աներևոյթ:
Թող այդ զգացմունքը լցնէ քո սիրտը,
Եւ երբոր կըզգաս դու քեզ երջանիկ,
Ապա անուանիր, ինչպէս ուզում ես:
Բաղդաւորութիւն, սիրտ, սէր կամ Աստուած:
Ես դորա համար մի անուն չունիմ:
Այն, ինչ որ ունիմ, է միայն զգացմունք:
Անունն է հնչիւն, անունն է լոկ ծուխ,
Որ մեզնից ծածկում է լոյսն երկնային:

ՄԱՐԳԱՐԻՏ

Այդ բոլորը շատ լաւ է, խօսք չկայ:
Քահանան գրեթէ նոյնն է ասում մեզ,
Միայն թէ բառերում տարբերութիւն կայ:

ՖԱՌԻՍ

Մարդիկ ամեն տեղ նոյնը կասեն քեզ,
Ինչտեղ տեսնում են արեւի երես,
Իւրաքանչիւրը իւր յատուկ լեզուով:
Ինչի՞ չսլիտի ասեմ ես իմով:

ՄԱՐԳԱՐԻՏ

Երբ քեզ լսում եմ, կարծես, այդպէս է,
Բայց էլի ինչ որ մի բան պակաս է,
Որովհետեւ դու լաւ քրիստոնեայ չես:

ՖԱՌԻՍ

Հրեշտակ իմ սիրուն:

ՄԱՐԳԱՐԻՏ

Չատ ցաւում եմ ես,

Որ դու նորա պէս մի ընկեր ունիս:

ՖԱՌԻՍ

Ո՛ւմ պէս:

ՄԱՐԳԱՐԻՏ

Որ քեզ հետ միշտ ման է գալիս.

Ես հոգով-սրտով ատում եմ նորան,
Կեանքումս տեսել չեմ նորա նման.
Կարծես, սրտումս դանակ է ցցում,
Երբոր ինձ վերայ հայեացք է գցում:

ՖԱՌԻՍ

Ո՛չ, մի վախենար նրանից, իմ սիրուն:

ՄԱՐԳԱՐԻՏ

Ա՛խ, միշտ պղտորում է նա իմ արիւն:
Ես բոլոր մարդկանց սիրում եմ սրտանց.
Բայց, փափագելով քո քաղցր տեսին,
Սոսկում եմ նայել նորա երեսին.
Նա պէտք է վատ մարդ լինի չափազանց:
Թէ մեղանշում եմ, ներէ՛ ինձ Աստուած:

ՖԱՌԻՍ

Նորապէսներն էլ պիտի որ լինին:

ՄԱՐԳԱՐԻՏ

Երբէք չէի ապրի նրա հետ միասին:
Երբ երևում է նա գըրան չեմքին,
Ծաղրով նայում է իւր շուրջ ամենքին,
Եւ երևում է սաստիկ բարկացած.
Նա ոչինչ բանով, կարծես, չէ գրաւված.
Եւ պարզ գրուած է նորա ճակատին,
Թէ սիրելի չէ ոչոր նրա սրտին:
Ինձ այնպէս լաւ է լինում քո գրկին,
Խնդում է սիրտս, ցնծում իմ հոգին.
Բայց նրան տեսնելիս, անձս չէ ուրախ:

ՖԱՌԻՍ

Ո՛վ դու նախադրած հրեշտակ իմ չքնադ:

ՄԱՐԳԱՐԻՏ

Այդ մարդն ինձ վերայ այնքան է ազդում,
Որ երբ նա մի տեղ մօտենում է մեզ,
Կարծում եմ, թէ քեզ էլ չեմ սիրում ես:
Նրա ներկայութեամբ էլ չեմ աղօթում:
Եւ այդ բանը ինձ տանջում, մաշում է.
Անշուշտ քեզ հետ էլ նոյնը լինում է:

ՖԱՌԻՍ

Մի խօսքով նորան դու չես համակրում:

ՄԱՐԳԱՐԻՏ

Հիմա ես գնամ:

ՓԱՌԻՍՏ

2եմ կարողանում,

Ա՛խ, մի ժամ գրկիդ մէջ հանգստանալ,
Հոգով ու սրտով քեզ հետ միանալ:

ՄԱՐԳԱՐԻՏ

Ա՛խ, եթէ մենակ լինէի քնած,
Քեզ համար դուռը կը թողնէի բաց.
Բայց մայրս յանկարծ թէ զարթի քնից,
Տեսնէ միասին այնտեղ քեզ ու ինձ,
Կըմեռնեմ տեղն ու տեղը անպատճառ:

ՓԱՌԻՍՏ

Դորա համար էլ կայ միջոց ու ճար:
Այ, այս սրուակից կը տաս ջրի հետ
Մի երեք կաթիլ, և խսկոյն և եթ
Անոյշ, խոր քնով մայրդ կը քնի:

ՄԱՐԳԱՐԻՏ

Ա՛խ, ես քեզ համար ինչ բան համ անի:
Արդեօք չի՞ վնասուի մայրս այս դեղով:

ՓԱՌԻՍՏ

Ո՛չ, իմ սիրական, եղի՛ր ապահով:

ՄԱՐԳԱՐԻՏ

Երբ քեզ տեսնում եմ, քաղցր սիրական,
Կամրիդ անպայման հնազանդում եմ ես.
Քեզ համար արդէն արեւ եմ այնքան,
2գիտեմ, էլի ինչո՞վ շահեմ քեզ:

Դուրս է գնում:

ՄԷՖԻՍՏՕՖԷԼԵՍԸ մտնում է:

ՄԷՖԻՍՏՕՖԷԼԵՍ

Գնաց կապիկը:

ՓԱՌԻՍՏ

Հը՛, ինչ է, դարձեալ
Լքտեսո՞ւմ էիր, ս՛վ դու անիծեալ:

ՄԷՖԻՍՏՕՖԷԼԵՍ

Մանրամասնօրէն լսեցի, ինչպէս
Կրօնի դաս տուին, պարո՞ն դօկտօր, ձեզ.
Յուսով եմ, դա ձեզ օգուտ բերէ շատ:
Աղջիկները շատ հետաքրքիր են.
Որո՞նք երկրւոյած են, ունին հաւատ,
Կարծում են, դոքա նոցա կը սիրեն:

ՓԱՌԻՍՏ

Մի՛թէ հետ տեսնում, դու հրէշ ատելի,
Որ նորա աղնիւ, սիրազգաց հոգին,
Ջերմեռանդ և սուրբ հաւատովը լի,
Որ պիտ' փրկութիւն տայ այն հրեշտակին,
Սաստիկ տանջվում է և վշտահար է,
Որ նա ինձ պիտի կորած համարէ:

ՄԷՖԻՍՏՕՖԷԼԵՍ

Ջարմանում եմ քո փափկասրտութեան.
Քեզ խաղացնում է մի յիմար աղջիկ:

ՓԱՌԻՍՏ

Դու ծնունդ ես կրակի և անմարդութեան:

ՄԷՖԻՍՏՕՖԷԼԵՍ

Դէմք ճանաչելումն է նա շատ ճարպիկ:
Իմ ներկայութեամբ չփոթվում է, չուարում,
Ռեխիս նայելով, խելք է նշմարում.
Անշուշտ հանճար է համարում ինձ նա,
Դուցէ մինչ անգամ նաև սատանայ:
Ուրեմն այս զիշէ՛ր:—

ՓԱՌԻՍՏ

Քեզ ի՞նչ կայ, ճիւղա՛:

ՄԷՖԻՍՏՕՖԷԼԵՍ

2է՛ որ այդ բանին ես էլ եմ ուրախ:





Ձ Ր Հ Ո Ր Ի Մ Օ Տ

ԳՐԷՏԽԵՆ և ԼԻՋԽԵՆ կժերով



ԼԻՋԽԵՆ

Քարօր մասին ոչինչ չեմ լսել:

ԳՐԷՏԽԵՆ

Ոչինչ: Վաղուց է, որ մարդ չեմ տեսել:

ԼԻՋԽԵՆ

Այսօր ինձ հաստատ ասաց մի կախարդ,
Որ նա վերջապէս ընկել է թակարդ:

Թող այսուհետև էլ չպարծենայ:

ԳՐԷՏԽԵՆ

Ի՞նչ է պատահել:

ԼԻՋԽԵՆ

Ի՞նչ: Հոտում է նա:

Ինչ որ խմում է և ինչ որ ուտում,

Երկու հողի է այժմ սննդում:

ԳՐԷՏԽԵՆ

Ա՛խ, մի՛թէ, իրա՛ն:

— 159 —

ԼԻՋԽԵՆ

Ստացաւ արժանին:

Չատ պինդ էր կպել նա այն տղային.

Միշտ նորա հետ էր զբօսանք կատարում,

Նորա հետ էր միշտ թռչկոտում, պարում:

Իրան ամենքից բարձր էր համարում,

Հրուշակներ ուտում, գինի էր խմում,

Իւր գեղեցկութեամբ միշտ հպարտանում:

Երեսին այնքան նա ամօթ չունէր,

Որ ընդունում էր նրանից ընծաներ:

Սիրականի հետ պաշտջվում էր շատ,

Եւ այդ պատճառով բանը գնաց վատ:

ԳՐԷՏԽԵՆ

Խեղճ աղջիկ:

ԼԻՋԽԵՆ

Ի՞նչպէս. խղճում ես դու դեռ:

Մինչ մենք ճախրակի առաջը նստած,

Աշխատում էինք ամբողջ գիշերներ,

Նա սիրականին իւր թիւը տուած,

Երկար ժամերով նրա հետ էր լինում,

Առանձնանալով մութ անկիւններում:

Հիմա թող գլուխը խորը կռացնէ,

Աղաշխարհի շաղիկը հաղնէ:

ԳՐԷՏԽԵՆ

Անշուշտ տղան նորան իրան կին կառնէ:

ԼԻՋԽԵՆ

Յիմար կըլինի, թէ նա այդ անէ:

Աւելի լաւը կարող է ճարել:

Արդէն փախել է:

ԳՐԷՏԽԵՆ

Չատ վատ է արել:

ԼԻՋԽԵՆ

Թէև պսակուի, վատ է նրա բանը.

Տղերքը կըլսեն զլսից պսակը,

Տաշեղ կըթափենք նորա դրանը:

Գուրս է գնում:

ԳՐԷՏԽԷՆ

(Գնալով դէպի տուն)

Ինչպէս խիստ էի առաջ նախատում,
Երբ մի խեղճ աղջիկ դործում էր սխալանք,
Ուրիշի մեղքերն անխնայ դատում,
Բառերով յայտնում զայրոյթ ու զգուանք:
Թէպէտ մեղքը սի է ինքն ըստ ինքեան,
Սեպնում էի, որքան հնար կայ.
Վարքովս հպարտ էի բաւական—
Եւ հիմա ինքս մեղքի մէջ ընկայ:
Սակայն — այն բանը, որ ինձ սխալացրեց,
Աստուած իմ, ինչպէս ինձ երջանկացրեց:



ԵԿԵՂԵՑՈՒ ԳԱԻԻԹԸ

Պատի խորշում գրուած է տիրամօր (mater dolorosa) պատկերը. նորա առաջը
զարսած են ծաղիկներով ամաններ:

ԳՐԷՏԽԷՆ

Թարմ ծաղիկներ է գնում ամանների մէջ:



այիր ուղորմած,
Դո՛ւ, վշտով լցուած,
Իմ անտանելի տարաբաղդութեան:
Սիրտդ վիրաւոր,
Ցաւով բխրաւոր
Նայում ես որդուդ սոսկալի մահուան:

Դու հօրն ես նայում
Եւ վեր ուղարկում
Հառաչանքներ քո և նորա համար:


Ա՛խ, ո՞վ է զգում,
Ինչպէս է կրծում
Եւ մաշում ցաւը իմ ոսկորները,
Ինչից է խեղճուկ սիրտս վախենում,
Ինչից գողգոթում, ի՛նչ է ցանկանում.
Միայն դո՛ւ գիտես, դո՛ւ և դո՛ւ միայն:

Ուր որ գնում եմ,
 Հետս տանում եմ
 Այս ցաւն, այս ցաւն, այստեղ, կրծքիս մէջ:
 Եւ երբ մնում եմ
 Մենակ, ողբում եմ.
 Ա՛խ, սիրտս, սիրտս կոտրվում իմ մէջ:

Իմ պատուհանում ծաղկամանները
 Ցողեցի աչքիս արտասուքներով,
 Երբ վաղ առաւօտ այս ծաղիկները
 Քաղում էի ես դողդոջուն ձեռով:

Արեգակը իւր ճառագայթներով,
 Երբ լուսաւորեց սենեակս պայծառ,
 Ես արդէն նստած էի անկողնում,
 Այնպէս յուսահատ, այնպէս վշտահար:

Փրկիր, ազատիր ինձ նախատինքից,
 Ազատիր մահից, նայիր ոլորմած,
 Նայիր թշուառիս, դձու, վշտով լցուած,
 Ազատիր հոգիս դառն տանջանքից:



Գ Ի Շ Ե Ր

Փողոց Գրէտխէնի տան առաջ



ՎԱԼԷՆՏԻՆ, զինուոր, Գրէտխէնի եղբայրը:

Նկերներիս հետ նստած միասին,
 Երբ խօսք էր լինում աղջկերանց մասին,
 Եւ ամեն մէկը իւր սիրած աղջկայ
 Գեղեցկութիւնն էր դովում, հռչակում,
 Եւ հպարտ յենուած սեղանի վերայ
 Բաժակ բաժակի վերայ դատարկում,
 Ես հանդիստ նստած ինձ համար այնտեղ,
 Լսում եմ նոցա խօսքն ամիսդփեղ:

Մօրուքս չփում, բեխս ոլորում,
 Առնում եմ ձեռս լիքը բաժակը
 Եւ ասում. «Մէկ չէ մարդկանց ճաշակը:
 Բայց կայ, ասացէք, մէկը մեր երկրում,
 Որ իմ Գրէտխէնին գեղով նմանի,
 Որ իմ քրոջը հաւասար լինի»:
 Եւ չխշխկում են շուրջ բաժակները:

Լսվում են ձայներ. «Այո, ճշմարիտ,
Իւր սեռի զարդն է քոյրդ Մարգարիտ»:
Եւ պապանձվում են պարծեցողները:
Իսկ հիմա—աւանդ, մաղերս փետեմ,
Գլուխս պատին տամ, ջուրը ինձ նետեմ—
Կծու խօսքերով, ռեխը ծռելով,
Պիտի ծաղրէ ինձ ամեն մի սրիկայ:
Ամեն մէկ բառի վերայ քրտնելով,
Պիտ' լռեմ, կարծես վերաս մեծ մեղք կայ:
Եւ թէն անեմ նոցա ջարդ ու փշուր,
Չեմ կարող ասել, բամբասում են զուր:

Այս ի՞նչ է: Ո՞վ է գալիս գողէզող:
Եթէ չեմ սխալվում, երկունն են եկող:
Թէ նա է, իսկոյն վզից կըբռնեմ,
Ու տեղն ու տեղը հողին կըհանեմ:

ՖԱՌԻՍ. ՄԷՖԻՍՏՕՖԷԼԷՍ

ՖԱՌԻՍ

Տես, եկեղեցու խորանում այնտեղ
Պատուհանի մէջ վառվում է կանթեղ,
Աւելնում, պակսում է լոյսն անդադար,
Իսկ նորա շուրջը պատում է խաւար.
Ահա այդպէս էլ մութն է իմ սրտում:

ՄԷՖԻՍՏՕՖԷԼԷՍ

Իսկ իմ մէջ կատուի բարբ եմ նկատում,
Որ միշտ թափառում է տանիքների
Եւ քսմսվում է կամաց պատերին:
Այժմ ծնում են իմ մէջ լաւ մտքեր.
Ուզում եմ գողնալ, զովացնել կրքեր:
Արդէն սպասում եմ ամեն իրիկուն
Վալպուրգիայի հանդէսին շքեղ:
Մէկ օրից յետոյ կերթանք մենք այնտեղ.
Արժէ գիշերն անդ անցկացնել անքուն:

ՖԱՌԻՍ

Բայց տես, որ դանձր ձեռից չգնայ,
Որ վերջին անգամ ես այնտեղ տեսայ:

ՄԷՖԻՍՏՕՖԷԼԷՍ

Ջուտով, շատ շուտով դու կուրախանաս,
Եւ այն կաթնային դու կըտիրանաս:
Նորերում աչքս մէջը ձգեցի,
Փայլուն ոսկիներ շատ նկատեցի:

ՖԱՌԻՍ

Բայց չկայ մի զարդ, կամ մի մատանի,
Որ իմ սիրուհու սիրտն ուրախացնի:

ՄԷՖԻՍՏՕՖԷԼԷՍ

Դորա նման բան, այո, այնտեղ կար,
Թանկագին մանեակ մի մարգարտաշար:

ՖԱՌԻՍ

Այդ լաւ է: Սիրտս շատ է վշտանում,
Երբ իմ սիրուհուն ընծայ չեմ տանում:

ՄԷՖԻՍՏՕՖԷԼԷՍ

Թող այդ բանը ձեզ անհանգիստ չանէ,
Ձրի վայելքն էլ ցանկալի բան է:
Պարզ երկնքի տակ, նորա դրան առաջ,
Պիտ' խոստովանէք, որ վարպետ եմ քաջ.
Մի բարոյական երգ կըհնչեցնեմ,
Որ նրան աւելի հեշտ յիմարացնեմ:

Երգում է, դիտարը նուագելով:

Զո՛ւր ես եկել, զո՛ւր
Սիրականիդ դուռ,
Կատերին չքնադ,
Առաւօտը վաղ:
Հաւատան, Կատիկ,
Այստեղ վտանդ կայ.
Կըմանես աղջիկ,
Աղջիկ չես դուրս գայ:

Զգոյշ եղիր, դու, զգոյշ,
Յետոյ կըլնի ուշ.
Երբ իւրը կանէ,
Տանից կըհանէ:
Թէ սիրում ես քեզ,
Պիտի նրան ասես.
Կամքդ չեմ անի
Առանց մատանի:

ՎԱԼԷՆՏԻՆ (առաջ է դալիս)
Ո՛ւմ համար ես, դո՛ւ, անիծած
Մկնորս, երգում. այս ի՛նչ բան է:
Նախ գործիքը պէտք է ջարդած,
Ապա երգչին դժոխքը տանէ:

ՄԷՖԻՍՏՕՖԷԼԷՍ
Գիտարը ջարդուեց, էլ պէտք չէ սա մեզ:

ՎԱԼԷՆՏԻՆ
Հիմա էլ գանգդ պիտի ճեղքեմ ես:

ՄԷՖԻՍՏՕՖԷԼԷՍ (Ֆառատին)
Մի վախենար, պարո՛ն դօկտօր,
Կռուիր հետը քաջի պէս.
Հանիւր սուրդ և հարուած տուր,
Իմ կողմից էլ կօզնեմ քեզ:

ՎԱԼԷՆՏԻՆ
Ուրեմն օգնիր:

ՄԷՖԻՍՏՕՖԷԼԷՍ
Այո՛, ինչի՛ չէ:

ՎԱԼԷՆՏԻՆ
Էլի՛:

ՄԷՖԻՍՏՕՖԷԼԷՍ
Անպատճառ:

ՎԱԼԷՆՏԻՆ
Սակայն այս ի՛նչ է.
Կարծես սատանան է կռվում հետս,

Արդէն թուլանալ սկսում է ձեռս:
ՄԷՖԻՍՏՕՖԷԼԷՍ (Ֆառատին)

Զարկ:
ՎԱԼԷՆՏԻՆ (վայր է ընկնում)

Վայ:
ՄԷՖԻՍՏՕՖԷԼԷՍ
Յիմարը շուտ հանգստացաւ:

Բայց հիմա վնանք, շուտով հեռանանք.
Լսո՛ւմ ես, արդէն աղմուկ բարձրացաւ.
Պօլիցիայից չկայ մեծ վտանգ,
Բայց դատաստանից պէտք է զգուշանանք:
ՄԱՐԹԱ (պատուհանից)

Եկէք, եկէք:
ԳՐԷՏԽԷՆ (պատուհանից)
Զո՛ւտ, մո՛մ բերէք:

ՄԱՐԹԱ (ինչպէս վերելք)
Սաստիկ վէճ էր, աղմուկ և կռիւ:
ԺՈՂՈՎՈՒՐԴ

Ա՛յ, սպանուած է մէկը, տեսէք:
ՄԱՐԹԱ (դուրս գալով)

Մարդասպաններն եղել են ցրի՛ւ:
ԳՐԷՏԽԷՆ (դուրս գալով)

Այս ո՛վ է ընկած:
ԺՈՂՈՎՈՒՐԴ
Քո մօր որդին է:

ԳՐԷՏԽԷՆ
Արարիչ Աստուած, սա Վալէնտինն է:
ՎԱԼԷՆՏԻՆ

Այո՛, մեռնում եմ, հեշտ է այդ ասել,
Աւելի հեշտ է ասածը անել:
Ի՛նչ էք ողբ կարգում, կանայք, դուք իմ շուրջ.
Լսեցէք, ահա, վերջին խօսքս լուրջ:

Ամենքը շրջապատում են նորան:
Ի՛մ Գրէտիւէն, դու դեռ չատ մանկահաս ես,

Գեռ շատ անփորձ ես, խելքով տհաս ես.
Դու կանգնել ես վատ ճանապարհի վրայ:
Ես մտերմաբար արդ ասում եմ քեզ.
Մէկ անգամ արդէն որ բողացել ես,
Ուրեմն եղբի՛ր դու բող աշկարայ:

ԳՐԷՏԽԷՆ

Տէր Աստուած, եղբայր, ի՞նչ եմ լսում ես:

ՎԱԼԷՆՏԻՆ

Խնդրում եմ, Աստծուն դու հանգիստ թողնես:
Եղածն եղած է, էլ գաղտնիք չէ դա,
Եւ ինչպէս սկսուեց, այնպէս էլ կերթայ:
Դու նախ մէկի հետ սկսեցիր ծածուկ,
Յետոյ շատերն են գալիս կամացուկ,
Եւ երբ կըհասնի բանը տասնեակին,
Կընիս մատչելի ամբողջ քաղաքին:

Երբ որ ամօթը մէկ անգամ ծնվում,
Միշտ գաղտնի կերպով է աշխարհ բերվում:
Սկզբում գիշերուայ թանձր քողի տակ
Ծածկում է նա իւր գէմը խայտառակ.
Եւ այդ ժամանակ նրան պէտք է սպանել:
Բայց զարգանում է, մեծանում, ուռչում,
Եւ օր ցերեկով համարձակ շրջում,
Թէն աւելի չէ գեղեցկացել:
Որքան աւելի է տգեղանում,
Անքան աւելի է նա լրբանում:

Ճուտով, շատ շուտով կըգայ ժամանակ,
Որ բոլոր ազնիւ քաղաքացիներ
Կըփախչեն քեզնից, ու դու անառակ,
Իբրեւ դիակից փտած, որդնակեր:
Սիրտդ կըծքիդ մէջ կըյուսահատուի,
Երբոր կընայեն նորա քո անձին.
Ոսկէ չղթայով էլ չես զարգարուի,
Ահով կըմտնես դու եկեղեցին:

Ջրեղ զարգարուած ժապաւէններով,
Հանդէսներում չես զուարճանայ պարով.
Մուրացկանների և հաշմերի հետ
Մութ անկիւններում կապրիս դու յաւէտ:
Եւ թէ երկնքում ներէ քեզ Աստուած,
Երկրի վրայ մընա միշտ դատաւարտուած:

ՄԱՐԹՆ

Խնդրեցէք Աստծուն, շնորհէ թողութիւն,
Մի բարձէք ձեզ վրայ և զրպարտութիւն:

ՎԱԼԷՆՏԻՆ

Ա՛խ, եթէ ես քեզ կարողանայի
Ջարդել, պատառել, կաւատ անիծած,
Այն ժամանակ ես յոյս կունենայի,
Որ իմ մեղքերին կըներէ Աստուած:


ԳՐԷՏԽԷՆ

Եղբայր իմ, եղբայր, մի տանջիր դու ինձ:

ՎԱԼԷՆՏԻՆ

Մի լար, ի՞նչ օգուտ արտասուքներից:
Դու քո պատիւը ոտնակոխ արիր,
Մահացու հարուած իմ սրտին տուիր:
Թող կարճէ մահը կեանքս երկրաւոր,
Կերթամ առ Աստուած իբրեւ քաջ զինուոր:

Մեռնում է:





ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻ

Պաշտամունք, երգեսոն և երգեցողութիւն

ԳՐԷՏԻՆ շատ ժողովրդի մէջ. նորա կտեւը 2ԱՐ ՈԳԻՆ



2ԱՐ ՈԳԻՆ

նշալէս ուրիշ էր, Գրէտիւն,
Երբ անմեղ կանգնած
Սեղանի առաջ,
Դու հին գրքոյկից
Թոժովում էիր աղօթքներ,
Մէկ խաղ մանկական,
Մէկ Աստուած սրտումդ,
Գրէտիւն:

Ուր է քո գլուխը:
Մատաղ սրտիդ մէջ
Ի՞նչ ծանր յանցանք:

Մօրդ համար ևս աղօթք անում դու,

— 171 —

Որին քո ձեռով յաւիտեան քնեցրիր:
Այն իմ արիւնն է քո դրան չեմքին,
Եւ քո սրտի տակ
Այն ի՞նչ է շարժվում,
Սարսափեցնում քեզ
Իւր ներկայութեամբ:

ԳՐԷՏԻՆ

Վայ ինձ, վայ:

Ի՞նչպէս ազատուեմ ես այս մտքերից,
Որոնք անխնայ հալածում են ինձ
Եւ հոգիս մաշում:

ԽՈՒՄԲ

Dies irae, dies illa

Solvat saeculum in favilla.

Երգեհոն:

2ԱՐ ՈԳԻՆ

Սարսիւր, սարսիւր դու:
Փողը հնչում է,
Դերեզմանները բացվում:
Ցանցաւոր սիրտդ
Իւր դերեզմանից
Նորից դուրս գալով,
Դժոխային տանջանքների համար,
Դողում է սաստիկ:

ԳՐԷՏԻՆ

Ա՛խ, ի՞նչ փախչեմ ես:
Երգեհոնի ձայնը
Հունչս կապում է,
Երգեցողութիւնը
Սիրտս թուլացնում:

ԽՈՒՄԲ

Judex ergo cum sedebit,
Quidquid latet, adparebit,
Nil inultum remanebit.

ԳՐԷՏԽԷՆ

Ջուհչս կապիում է:

Այս պատերը

Սիւմում են ինձ,

Այս կամարները

Ճիշում են ինձ:—Օհ:

ՉԱՐ ՈԳԻ

Ծածկիր քեզ: Մեղքն ու ամօթը

Չեն մնայ ծածուկ:

Օհ, լոյս:

Վայ քեզ:

ԽՈՒՄԲ

Quid sum miser tunc dicturus,

Quem patronum rogaturus,

Cum vix justus sit securus?

ՉԱՐ ՈԳԻ

Երեսները դարձնում են

Քեզանից արդարները,

Քեզ ձեռք մեկնել

Սոսկում են անմեղները:

Վայ քեզ:

ԽՈՒՄԲ

Quid sum miser tunc dicturus?

ԳՐԷՏԽԷՆ

Դրացի, սրուակդ:—

Ուշամափում է:

ՎԱԼՊՈՒՐԳԵԱՆ ԳԻՇԵՐ





ՀԱՐՑ ԼԵՌՆԵՐ

Շիրկէ եւ Էլէնդ գիւղերի շրջակայքը

ՓԱՌԻՍՏ. ՄԷՓԻՍՏՕՓԷԼԷՍ

ՄԷՓԻՍՏՕՓԷԼԷՍ



Ես ուզում արդեօք դու մի ցախաւել:
Կուղէի հեծնել հիմա մի լաւ այծ:
Այսպէս չենք կարող մենք շուտ տեղ հասնել:
ՓԱՌԻՍՏ

Քանի ոտներս դեռ չեն թուլացած,
Այս դաւադանն էլ բաւական է ինձ:
Ի՞նչ օգուտ կայ մեզ կարճ ճանապարհից:
Զրջել լեռների լարիւրին թոսում,

Բարձրանալ ժայռը, որից թափվում է
Կարկաչող վտակն ու ձորում հոսում,
Այս բոլորը իմ սիրտը դրաւում է:
Գարնան շնչիցը դարձել է կեչին,
Նորան ըզգում է նաև եղևինն.
Մի՛թէ և մեզ վրայ պիտի չազդէ նա:

ՄԷՓԻՍՏՕՓԷԼԷՍ

Ճշմարիտն ասեմ, չէ ազդում ինձ վրայ:

Ես զգում եմ իմ մէջ կատարեալ ձմեռ,
Եւ ցանկանում եմ ձիւն, սառնամանիք:
Տես, լուսնեակը, արդէն կիսամեռ,
Կարմրագոյն լուսով ելնում է երկինք:
Այնքան նուազ է նրա լոյսը, որ մենք
Ծառին կամ քարին զարկուել կարող ենք:
Թոյլ տուր, հրաւիրեմ ես մի մոլի կրակ:
Ահա, մէկն այնտեղ վառվում է ուրախ:
Է՛յ դու, բարեկամ, ինչի՞ ես մենակ
Այդտեղ մի կողմը փայլում դու ի դուր:
Խնդրում եմ, վերե եկ և մեզ լոյս տուր:

ՄՈՂԻ ԿՐԱԿ

Յարգելով ձեզ, ես յոյս ունիմ, որ իմ թեթև
Բարը փոխեմ, ինձ ստիպելով, որովհետև
Սովորաբար մենք ծուռն ու մուռն ենք միշտ թռչում:

ՄԷՖԻՍՏՕՖԷԼԷՍ

Է՛յ, ուրեմն մարդկանց պէս էք դուք էլ շրջում:
Ուղիղ գնա, սատանան է պատուիրում քեզ,
Թէ չէ իսկոյն կըհանգցնեմ շնչովս ես:

ՄՈՂԻ ԿՐԱԿ

Ես տեսնում եմ, որ իշխան էք դուք այս տանը:
Ուրախութեամբ կըկատարեմ ձեր հրամանը,
Միայն, գիտէ՞ք, այսօր այստեղ շատ խառնուած է,
Եւ թէ պիտի մոլի կրակը ձեզ ման ածէ,
Խստապահանջ մի լինիր, է իմ պայմանը:

ՓԱՌԻՍՏ, ՄԷՖԻՍՏՕՖԷԼԷՍ և ՄՈՂԻ ԿՐԱԿԸ երգում են փոփոխակի:

Երազական և կախարդուած
Կարծես աշխարհն ենք մենք միմաժ:
Լաւ առաջնորդ եղիր դու մեզ,
Որ շուտ անցնենք մեր ասպարէզ
Անապատում այս ընդարձակ:

Տես, ծառերը իրար ետև
Սլանում, անցնում են շատ արագ,

Եւ լեռները թերվում թեթև,
Եւ ժայռերի քթերը ձիգ
Խըռմըրում են, փնշում սաստիկ:

Քարերի մէջ, կանաչներում
Չտապ վազում է առուակն առաջ:
Կարկաշուն եմ արդեօք լսում,
Թէ սիրոյ երգ, սիրոյ հառաչ:
Երջանկութեան են հնչիւններ,
Որ է մեր յոյս, որ է մեր սէր:
Եւ իբրև հին աւանդութիւն
Արձագանքը կրկնում իսկոյն:

Բո՛ւ, բո՛ւ, բո՛ւ, բո՛ւ, լսում եմ ես,
Բու և բուէ՛ճ և ագռաներ
Բոլորն արթնն են այս գիշեր:
Թփերի մէջ գորտ ու մողէս,
Երկարոտնեայ և հաստափոր:
Արմատները ոլոր մոլոր,
Փաթաթվում են օձերի պէս
Ժայռերին ու քարափներին,
Տարածում են երկար թաթեր,
Եւ սարքելով որդայլներ,
Վախեցնում են անցորդներին:
Եւ գոյնդգոյն մկներ խմբով
Խոտերի մէջ վազում շտապով:
Փայլուն որդեր, պսպղալով,
Այս ու այն կողմն են սլանում,
Մէկ հանգչելով, մէկ լոյս տալով,
Ճանապարհից են մեզ հանում:

Բայց ասա ինձ, կանգնած ենք մենք
Արդեօք մէկտեղ, թէ գնում ենք:
Չուրջ ամեն բան խառն ի խուռը
Պտտում է. ծառեր, ժայռեր,

Եւ թռչելով ծուռն ու մուռը,
Պսպղում են մոլի կրակներ:

ՄԷՖԻՍՏՕՖԷԼԷՍ

Փեշո բռնիր: Պիտի ելնես
Հիմա դու այս լեռան ծայրը,
Եւ այնտեղից դու կըտեսնես
Տէր Մամոնի հրեղէն այրը:

ՓԱՌԻՍՏ

Տես, ահա, այնտեղ փայլում է ցածում
Արշալոյսի պէս կարմիր լոյսն ալօտ,
Եւ մինչև անգամ հասնում, թափանցում
Նոյն խակ անդունդի խոր յատակը մութ:
Բարձրանում է ծուխ, փռվում մառախուղ,
Եւ գոլորշիքում շողշողում է կրակ,
Որ մէկ ձգվում է, իբրև թել բարակ,
Մէկ խփում, իբրև աղբիւր յորդաբուլս:
Այստեղ ծածկում է բլւր երակներով
Մեծ տարածութեամբ հովիտն ընդարձակ,
Եւ նեղ անկիւնում այնտեղ սկսումելով,
Բորբոքվում է ու վառվում է մենակ:
Ցանում է անթիւ կայծեր դէն ու դէս,
Ոսկէ աւազի հատիկների պէս:
Բայց նայիր, ահա բարձրից մինչև ցած
Ահագին լեռը բոցով է պատած:

ՄԷՖԻՍՏՕՖԷԼԷՍ

Պարոն Մամոնը այս տօնի համար
Լուսաւորել է իւր տունը շքեղ:
Լաւ է, որ տեսար. արդէն անհամար
Կատաղի հիւրեր զիմում են այնտեղ:

ՓԱՌԻՍՏ

Յանկարծ բարձրացաւ կատաղի մրրիկ,
Եւ հարուածում է ծոծրակս սաստիկ:

ՄԷՖԻՍՏՕՖԷԼԷՍ

Պէտք է պինդ բռնես ժայռի կողերը,
Թէ չէ կըզլորուես ձորի խորերը:

Մէզը թանձրացնում է մութ գիշերը,
Ճոճում, գոռում է հին անտառը,
Կանաչ պալատի սիւն ու կամարը
Մրրիկը ջարդում ու տապալում է,
Ծառերի ոստերը փշրտում է,
Բները ճկում ծղօտի նման,
Հաստ արմատները անում գետնահան:
Սոսկալի կերպով կատաղում է նա,
Ամեն ինչ անում է նա տակն ու վրայ,
Եւ աւեր ու քանդ ձոր ու խողոշում
Սուլում է սաստիկ, ոռնում ու շշում:
Լսում ես ձայներ այնտեղ, վերեր,
Լսում ես հեռու, լսում ես մօտիկ.
Լերան դագաթից մինչև ներքեր
Բարձր երգում է մի խումբ երգեցիկ:

ՎՆՈՒՎՆԵՐ (խմբով)

Բրօկէն է գնում մեր խումբը քաջ.
Դեղին խողան, արտը կանաչ:
Ամենքն այնտեղ են ժողովում.
Ուրիանը վերն է նստած:
Ժայռերի վրայ են արշաւում.
Խիստ հոտում են վհուկն ու այծ:

ՉԱՅՆ

Պառաւիկ Բաուրօն գալիս է մենակ.
Տես, նա հեծել է մի գեր խոզ մատակ:

ԽՈՒՄԲ

Պատիւ տուէք պատուարժանին:
Տիկին Բաուրօ, անցիր առաջ:
Մեր մայրիկը նստած խողին,
Կառաջնորդէ մեր խումբը քաջ:

ՉԱՅՆ

Ո՞րտեղից ես գալիս դու:

ՉԱՅՆ

Իլզէնշտայնի վրայ անցայ:
Բնում տեսայ ես մի բու,

Աչքերը վրաս չունց նա:

ՉԱՅՆ

Ո՛հ, գթութիւնը տանէ քեզ:

Ի՞նչ ես շտապում դու այդպէս:

ՉԱՅՆ

Նա ինձ կծեց անիծածը:

Այս վէրքերն են նրա կծածը:

ՎՃՈՒԿՆԵՐ. ԽՈՒՄԲ

Ճանապարհը լայն է, երկար.

Ճնշում են, հրում ամենքն իրար:

Եղանն է սուր, աւելը ծուռ,

Մանուկն ու մայր մեռնում են դուր:

ԿԱՄԱՐԴՆԵՐ. ԿԷՍ ԽՈՒՄԲ

Մենք սողում ենք խխուռի պէս.

Կանայք առաջ գընացին, տես:

Ինչտեղ չարն է, այնտեղ կլինը

Միշտ հասնում է առաջինը:

ՄԻՒՍ ԿԷՍԸ

Այդ մասին չենք վիճում ձեզ հետ.

Դուք մեղանից չէք մնայ յետ.

Կինը, շատ էլ շտապով գընայ,

Այր մարդուց միշտ յետ կըմնայ:

ՉԱՅՆ (վերելից)

Եկէք, եկէք լիռնալճից:

ՉԱՅՆԵՐ (ներքեւից)

Վեր ելնել ենք ուղում ձորից:

Լուացուեցանք, մաքուր ենք մենք,

Բայց յաւիտեան անպտուղ ենք:

ԵՐԿՈՒ ԽՈՒՄԲԸ

Հողմը լուեց, աստղը թռաւ,

Պղտոր լուսինը ծածկուեցաւ.

Կախարդական խումբը սլանում,

Բիւր, բիւր կայծեր է նա հանում:

ՉԱՅՆ (ներքեւից)

Կացէք, կացէք, լսեցէք ինձ:

ՉԱՅՆ (վերելից)

Ո՛վ է կանչում ժայռի ճեղքից:

ՉԱՅՆ (ներքեւը)

Ինձ վեր առէք, ձեզ հետ տարէք:

Ես ելնում եմ դարեր երեք,

Բայց չեմ կարող ես բարձրանալ,

Նմաններին ընկերանալ:

ԵՐԿՈՒ ԽՈՒՄԲԸ

Հեծիր աւել, հեծիր եղան,

Հեծիր կամ այժ կամ գաւազան:

Ով որ այսօր չի բարձրանայ,

Կորած մարդ է յաւիտեան նա:

ԿԻՍԱՎՃՈՒԿ (ներքեւը)

Ոստոստում եմ ու վազում,

Սակայն նոցա չեմ հասնում:

Տանը հանգիստ չունիմ ես,

Այստեղ էլ չունիմ նոյնպէս:

ՎՃՈՒԿՆԵՐԻ ԽՈՒՄԲԸ

Սպեղանիքը տալիս է ոյժ,

Յնցոտին է լաւ առազաստ,

Մեզ համար տաշտն է լաւ նաւ յոյժ.

Ով չի թռչի, կըմնայ աստ:

ԵՐԿՈՒ ԽՈՒՄԲԸ

Երբ գազաթին կըհասնենք մենք,

Գետնի վերայ մենք կըփռուենք,

Եւ կըլցնէ ողջ անտառը

Վհուկների կախարդ պարը:

Նորա ցած են իջնում:

ՄԷՖԻՍՏՕՖԷԼԷՍ

Ճնշում են, հըրում, ճշում, բարախում,

Չշում են, սուլում, քշում, կատաղում.

Կրակ, ծուխ, գոլորշիք, գարշահոտութիւն,

Իսկ կախարդական շունչ ու բընութիւն:

Բռնիր ինձ, թէ չէ կըբաժանեն մեզ:

Ի՞նչտեղ ես:

ՓԱՌԻՍՏ

Այստեղ:

ՄԷՖԻՍՏՕՖԷԼԷՍ

Արդէն տարան քեզ:

Պէտք է գործ դնեմ իմ իրաւունքը:
Ճանապարհ, եկաւ սատանան ինքը:
Դժկտօր, բռնիր ինձ. մի թըռոյցք կաններ,
Ամբոխի միջից մեզ դուրս կը հանենք:
Այս իրարանցումն ես էլ չեմ տանում:
Տես, այնտեղ ինչ որ մի լոյս է փայլում.
Ես այն թփերը ուզում եմ քաշուել,
Իմ օրինակին հետեւիր դու էլ:

ՓԱՌԻՍՏ

Հակասութեան ոգի դու, տար ինձ, ուր որ ուզում ես:
Ինքդ բերիր ինձ այստեղ, հիմա միտքդ փոխում ես.
Դորա համար Վալպուրգեան գիշերը Բրօկէն եկանք,
Որ մի կողմը քաշուելով, թփերում առանձնանանք:

ՄԷՖԻՍՏՕՖԷԼԷՍ

Տես, ինչ գոյնգոյն լուսաւորութիւն.
Այնտեղ կայ ուրախ հասարակութիւն.
Այնտեղ չենք զգայ մենք մենակութիւն:

ՓԱՌԻՍՏ

Բայց ես կուզէի վեր ելնել սարը.
Տես, բարձրանում է ծովս ու բոց ահեղ:
Ամբոխը գիմում է գէպի չարը.
Չատ հանելուկներ կը լուծուին այնտեղ:

ՄԷՖԻՍՏՕՖԷԼԷՍ

Բայց և նորերը կը կազմուին նոյնպէս:
Թող մեծ աշխարհը ճիշ, աղմուկ հանէ,
Այստեղ կը մնանք հանգիստ դու և ես:
Չատ վաղուց արդէն սովորական է,
Որ մեծ աշխարհից փոքրեր են ծնում:
Տես, այն մանկահաս վհուկը մերկ է,
Իսկ պառաւն իրան զգուշութեամբ ծածկում:
Նոցա հետ սիրով քեզ վարուել պէտք է.

Այդ շատ դժուար չէ, բայց ծիծաղելի:
Նուագածութիւն եմ լսում զգուելի.
Սակայն ինչ արած, պէտք է համբերել:
Ե՛կ, ե՛կ, ուրիշ կերպ կարող չէ լինել:
Ես մէջ կը մտնեմ, քեզ էլ կը մտցնեմ,
Եւ նորից քեզ կը պարտաւորեցնեմ:—
Ի՞նչ կասես, ընկեր, փոքր չէ վայրը.
Հազիւ կը տեսնես մէկից միւս ծայրը:
Տես, հարիւր կրակներ այստեղ շարուած կան.
Այստեղ խօսում են, զուարճանում, պարում,
Եփում են, խմում և իրար սիրում:
Ասա՛, ինչտեղ կայ աւելի լաւ բան:

ՓԱՌԻՍՏ

Ինչպէս ես ուզում դու այնտեղ մտնել.
Իբրեւ սատանայ, թէ իբրեւ կախարդ:

ՄԷՖԻՍՏՕՖԷԼԷՍ

Թ'ի incognito սովոր եմ լինել,
Բայց տօն օր պէտք է կըրել նշան-դարդ:
Ինձ չէ զարդարում ծնկակապ չքեղ,
Բայց ձիու ոտն էլ յարգվում է այստեղ:
Տես, այն խսունջը սողում է մեր դէմ,
Առաջ տարածած եղջիւրները ցից,
Հոտից խմացաւ արդէն, թէ ով եմ:
Այստեղ ամենքը ճանաչում են ինձ:
Մէկ կրակից միւսը հետս արի դու,
Ես հարսնախօս եմ, իսկ դու փեսացու:

Միքանիսին, որոնք նստած են հանգչող ածուխների շուրջը:

Ծեր պարոններ, ինչ էք նստել առանձին:
Երիտասարդ մարդկանց շրջանը մտէք,
Ուրախացէք և զուարճացէք միասին.
Մենակ տանն էլ, երբ ուզենաք, կը նստէք:

ԺԵՆԷՐԱԼ

Ո՛վ կը հաւատայ հիմա ազգերին:
Որքան էլ անես ծառայութիւններ.

Ազգերին, ինչպէս և կանանց սեռին,
Միշտ սիրելի են երիտասարդներ:

ՆԱԽԱՐԱՐ

Այժմ էլ չկայ արդարութիւնը.
Ես միշտ գովում եմ մեր հին աշխարհը.
Երբ որ մեր ձեռքին էր վարչութիւնը,
Այն ժամանակն էր բուն ոսկէ դարը:

PARVENU

Մենք էլ յիմարներ չէինք իհարկէ,
Յաճախ արել ենք, ինչ որ չպէտք է.
Բայց այժմ ամեն բան եղաւ տակն ու վրայ,
Մինչ աշխատում ենք, որ հաստատ մնայ:

ՋԵՂԻՆԱԿ

Այժմ ո՞վ է կարգում մի գիրք, ասացէ՛ք,
Փոքր ինչ խելացի բովանդակութեամբ:
Եւ երիտասարդ մարդիկ, նայեցէ՛ք,
Այսօր պարծենում են յանդգնութեամբ:

ՄԷՖԻՍՏՕՖԷԼԷՍ

(որ յանկարծ շատ ծեր է երևում)

Վերջին անգամը Բրօկէն ելնելով,
Զգում եմ ժողովուրդն հասունացել է.
Տակաւիս ջուրը պղտոր տեսնելով,
Աշխարհի վերջն էլ շատ մօտեցել է:

ՋԵՂԻՆԱԿ ՎԶՈՒԿ

Պարոններ, մի անցնէ՛ք այդպէս,
Լաւ առիթ է, օգտուեցէ՛ք.
Իմ ապրանքներն են շատ պէս պէս,
Ուշադրութեամբ նայեցէ՛ք:
Իմ խանութում այն, ինչ որ կայ,
Այլ տեղ նման մի բան չկայ.
Չկայ մի իր, որ աշխարհքին
Վրնաս հասցրել չէ ահագին:

Չկայ դաշոյն, որ լուացուել չէ արնում,
Չկայ գաւաթ, որից առողջ մի մարմնում
Այրող, մաշող, մահաբեր թոյն չէ թափուել.

Չկայ մի դարդ, որով մի կին չէ խաբուել.
Չկայ մի սուր, որ թշնամուն քամակից
Հարուածելով, վերացրել չէ աշխարհքից:

ՄԷՖԻՍՏՕՖԷԼԷՍ

Լաւ չես անում, դժւ, քեռակի՛ն,
Չես յարմարվում ժամանակին.
Մեզ չէ գրավում հնացած իր,
Նորութիւններ առաջարկիր:

ՖԱՌԻՍ

Այս ամբողջի մէջ կորչել հրնար է.
Այս ի՛նչ ահագին տօնավաճառ է:

ՄԷՖԻՍՏՕՖԷԼԷՍ

Ամբողջ հոսանքը դիմում է վերեւ,
Եւ քեզ էլ առաջ մղում է թեթիւ:

ՖԱՌԻՍ

Այս ո՞վ է:

ՄԷՖԻՍՏՕՖԷԼԷՍ

Լաւ տես. Լիլիթն է դա:
ՖԱՌԻՍ

Ո՞վ:

ՄԷՖԻՍՏՕՖԷԼԷՍ

Առաջին կինը Ադամի: Զգոյշ կաց,
Չյափշտակուիս նորա մազերով,
Որոնցով միայն է նա զարդարուած:
Թէ որ գրաւուեց մէկը նոցանով,
Էլ չի ազատուի նորանից շուտով:

ՖԱՌԻՍ

Տես, երկու կին են նստած,
Պառաւ և երիտասարդ.
Չատ են պարել, են յոգնած,
Հիմա նստել են հանդարտ:

ՄԷՖԻՍՏՕՖԷԼԷՍ

Այսօր այստեղ կարելի չէ հանգստանալ:
Պարը սկսուեց: Մեզ էլ պէտք է ընկերանալ:

ՓԱՌԻՍՏ

(Երիտասարդ կնոջ հետ պարելով)

Մի գեղեցիկ երազ տեսայ,
Խնձորենու տակը կանգնած,
Երկու խնձոր կար վրան հասած.
Սիրտս ուզեց, ծառը ելայ:

ԳԵՂԵՑԿՈՒՅԻՆ

Հատ էք սիրում դուք խնձորենի,
Դրրախտումն էլ ձեզ հետ նոյնն էք.
Հատ ուրախ եմ, որ կը գտնէք
Իմ պարտիզում, եթէ ուզէք:

ՄԷՓԻՍՏՕՓԷԼԷՍ

(Պառաւի հետ պարելով)

Երազումս տեսայ մի ծառ,
Ծառի բունը միջից ճեղքած,
ձեղքի մէջը մի մեծ . . . կար,
. . . տգեղ ինձ չերևաց:

ՊԱՌԱՆԸ

Ասպետ, եթէ կամենում էք,
Ես պատրաստ եմ ձեզ ծառայել,
Եւ թէ . . . հաւանում էք,
Կարող եմ այն ձեզ ընծայել:

ՊՐՕԿՏՕՓԱՆՏԱՄԻՍ

Այդ ինչ էք անում, սով անիծածներ:
Ձեմ ապացուցել վաղուց արդէն ես,
Որ ոգիներին տուած չեն ոտներ,
Իսկ դուք պարում էք այստեղ մարդկանց պէս:

ԳԵՂԵՑԿՈՒՅԻՆ (պարելով)

Ինչի՞ է եկել սա մեր հանդէսը:

ՓԱՌԻՍՏ (պարելով)

Ի՞նչտեղ չէ կոխում սա իրա եսը:
Սա մեր պարը միշտ շատ խիստ է քննում,
Մեր ամեն քայլը վատաբանում է,
Երբոր նկատել կարողանում է.
Զայրանում է, երբ առաջ ենք գնում:

Թէ պտոյտ կը գար դուք նեղ շրջանում,
Ինչպէս սա իւր հին ջրաղացումն անում,
Գուցէ այդ բանին հաւանութիւն տար,
Մանաւանդ, եթէ գլուխ կը տար խոնարհ:

ՊՐՕԿՏՕՓԱՆՏԱՄԻՍ

Դեռ այստեղ էք դուք և ինձ զայրացնում:
Դէհ, կորէք, չէ որ լուսաբանեցինք:
Սատանաները կանոն չեն հարցնում:
Մենք շատ խելօք ենք, բայց օգուտ չունինք:
Ձեմ կարողանում սոցա հեռացնել,
Անմաքրութիւնը միջից վերացնել:

ԳԵՂԵՑԿՈՒՅԻՆ

Հերիք է. շատ էք ձանձրացնում դուք մեզ:

ՊՐՕԿՏՕՓԱՆՏԱՄԻՍ

Երես առ երես ասում եմ ես ձեզ.
Բռնակալութիւնը ոգիներին
Երբէք չեմ տանի, երբէք չեմ ների:

Պարը շարունակվում է:

Այսօր ոչինչ բան չէ յաջողում ինձ.
Պիտի ճանապարհ ընկնեմ ես նորից.
Սակայն յոյս ունիմ, որ ես վերջապէս,
Դեհ, պովէտներ, պիտի յաղթեմ ձեզ:

ՄԷՓԻՍՏՕՓԷԼԷՍ

Նա իսկոյն կերթայ կընստի մօրում,
Ուր հանգստանալ նա շատ է սիրում.
Երբ տղրուկները կաշին յետոյքին,
Ոգիներն էլ չեն տանջի նրա ոգին:

Ֆառուստին, որ թողել է պարը:

Ինչի՞ թողիր դու քո գեղեցկուհուն.
Պարելիս երգում էր նա շատ սիրուն:

ՓԱՌԻՍՏ

Երբ որ երգում էր, երևակայիր,
Բերանից մի մուկ դուրս ցատկեց կարմիր:

ՄԷՖԻՍՏՕՖԷԼԷՍ

Այդ ոչինչ: Չառ խիստ չպէտք է լինել.
 Լաւ է, մոխրագոյն մուկը չես տեսել:
 Սիրոյ վայելքի երջանիկ ժամին
 Ո՞վ է ուշ դարձնում, առա՛, այդ բանին:

ՓԱՌԻՍՏ

Յետոյ տեսայ—

ՄԷՖԻՍՏՕՖԷԼԷՍ

Ի՞նչ:

ՓԱՌԻՍՏ

Տեսնում ես, ահա՛

Հեռու կանգնած է մենակ մի աղջիկ,
 Դէմքը դունաթափ, սակայն գեղեցիկ:
 Այնպէս կամաց է տեղից շարժւում նա,
 Կարծես ոտներին չզթայ ունենայ:
 Խոստովանում եմ, այնպէս է թվում,
 Թէ իմ Գրէտիսէնն է աչքիս երևում:

ՄԷՖԻՍՏՕՖԷԼԷՍ

Թող այդ, մի նայիր: Դա մի դիւթական
 Պատկեր է անշունչ, է մի ուրուական:
 Վտանգաւոր է նորան պատահել.
 Սառած աչքերին չպէտք է նայել,
 Մարդու արիւնը իսկոյն սառում է,
 Եւ նա համարեա՛ թէ քարանում է:
 Անշուշտ լսել ես, ո՞վ էր Մէդուգան:

ՓԱՌԻՍՏ

Մեռած աչքերը մընացել են բաց.
 Նոցա չէ փակել մի ձեռք սիրազգաց:
 Գրէտիսէնիս փափուկ կուրծքն է սա, աւանդ,
 Նորա մարմինը աննման, չքնաղ:

ՄԷՖԻՍՏՕՖԷԼԷՍ

Ո՞վ գիւրահաւան և խաբուած յիմար,
 Հենց գորանումն է կախարդութիւնը,
 Որ նրա մէջ տեսնէ մեն մինն անպատճառ
 Իւր սիրականի նըմանութիւնը:

ՓԱՌԻՍՏ

Ի՞նչ հրճուանք, ի՞նչ վիշտ նորա հայեացքում.
 Ինձ սաստիկ ուժով իւր մօտ է ձգում:
 Նորա գեղեցիկ պարանոցին, տես,
 Կայ մի կարմիր գիծ բարակ թելի պէս,
 Որ սուր գանակի բերանից չէ լայն:

ՄԷՖԻՍՏՕՖԷԼԷՍ

Այդպէս է, ես էլ նկատում եմ այն:
 Կարող է գլուխը թևի տակ կրել,
 Որ Պերսէոսին յաջողեց կտրել:—
 Բայց թող այդ ցնորքը և արի՛ գնանք,
 Չուտ այս բլրակի վերայ բարձրանանք:
 Տես, ինչ ուրախ են ամենքը, ցնծում.
 Եթէ չեմ սխալւում, ահա՛ և թատրոն.
 Երևի կըտան մի ներկայացում:
 Այս ի՞նչ էք անում, ասացէ՛ք, պարոն:

SERVIBILIS

Ներկայացումը կըսկսուի շուտով:
 Դա է հօթներորդ և վերջին խաղը.
 Այստեղ սովոր են վերջացնել հօթով:
 Հատուածը գրել է մի բանասէր,
 Դերասաններն էլ են թատրոնասէր:
 Խնդրում եմ, թոյլ տուէ՛ք, որ ես հեռանամ,
 Պէտք է վարագոյրը գընամ բանամ:

ՄԷՖԻՍՏՕՖԷԼԷՍ

Երբ ձեզ տեսնում եմ Բլօկսբէրգի վերայ,
 Դո՛հ եմ, պատճառ որ ձեր իսկ տեղն է դա:



ՎԱԼՊՈՒՐԳԵԱՆ ԳԻՇԵՐՈՒԱՅ ԵՐԱԶ

Կ Ա Մ

ՕՐԵՐՈՆԻ ԵՒ ՏԻՏԱՆԻԱՅԻ ՈՍԿԷ ՀԱՐՍԱՆԻՔԸ

INTERMEZZO.



ԹԱՏՐՈՆԻ ԿԱՌԱՎԱՐԻՉ

անգստանանք մենք այսօր,
Միգինգի քաջ գաւաղներ,
Հին լեառը և խոնաւ ձոր,
Այս կըլինի բեմը մեր:

ՄՈՒՆԵՏԻԿ

Միշտ ոսկէ հարսանիքին
Կէս դար պիտի լրանայ,
Սիրելի է ինձ ոսկին,
Երբ կռիւը կը վերանայ:

ՕՔԷՐՕՆ

Թող ժողովին ու յայտնուին
Ոգիներն այս յարկի տակ,
Թագաւորն ու թագուհին
Կատարում են նոր պսակ:

ՊՈՒԿ

Եկաւ Պուկն ու պարում է,
Ոտն ետեից քաշ տալով,
Նորան ծափահարում է
Բազմութիւնը խնդալով:

ԱՐԻԷԼ

Անոյշ ձայնով երգում է
Արիէլն իւր երգերը,
Գրաւում, յափշտակում է
Տղեղ, սիրուն գէմբերը:

ՕՔԷՐՕՆ

Մարդ ու կինը մեղանից
Թող սովորեն հաշտ ապրել.
Բաժանեցէք միմեանցից,
Կըսկսեն իրար սիրել:

ՏԻՏԱՆԻԱ

Երբ կռւում են մարդ ու կին,
Այդտեղ չկայ այլ հընար.
Դէպի հիւսիս տար մէկին,
Միւսին գէպի հարաւ տար:

ԵՐԱԺՂՏԱԿԱՆ ԽՈՒՄԲԸ. TUTTI.

Fortissimo

Ճանճերն ու մօծակները,
Եւ ինչ նոցա նման կայ,
Գորտերն ու ճպուռները,
Երաժիշտներն են սորա:

SOLO

Պարկապղուկ է հնչում,
Օճարի փամփուշտ է դա,
Տղգում է ու փշում
Իւր բլթածայր թթով նա:

ՄԻ ՆՈՐ ԳՈՅԱՅՈՂ ՈՐԻ

Սարդի ոտներ, գորտի փոր,
Ինքը ինչ որ թեւաւոր.
Ոչ գաղան է, ոչ թռչուն,
Այլ մի բանաստեղծութիւն:

ՄԻ ԶՈՅԳ

Քայլում է ու թռչկոտում
Ծաղիկներում ցողապատ.

Բայց բարձրանում չէ օդում,
Թէն աշխատում է շատ:

ՀԵՏԱՔՐՔԻՐ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴ

Դիմակ է իմ տեսածը,
Մի՛թէ սխալվում եմ ես.
Տես, Օրէրօն աստուածը,
Նա էլ եկել է հանդէս:

ORTHODOX

Չանգեր չունի, պոչ չունի.
Այդ բանին մի զարմանայ,
Ինչպէս դիր Յունաստանի,
Նա էլ է մի սատանայ:

ՀԻՒՄԻՍԱՅԻՆ ԱՐՈՒԵՍԱԳԷՏ

Այսօր քանի մի թեթիւ
Նկարներ կը պատրաստեմ,
Իտալիա այնուհետեւ
Ես կը ճանապարհորդեմ:

PURIST

Ա՛խ, ինչի՛ եկայ այստեղ.
Տես, այս անառակներին,
Միայն երկու վըհուկ տղեղ
Փոշի ունին մազերին:

ՄԱՆԿԱՋԱՍ ՎՃՈՒԿ

Թէ փոշի և թէ հալաւ
Պառաւի համար են լաւ.
Ես այժի վրայ մերկ նստած,
Տես ահա մարմինս բաց:

ՊԱՌԱՒ ՎՃՈՒԿ

Ապրել գիտենք, չենք ապուշ,
Չենք վիճի ձեզ հետ երկար.
Դեռ մատաղ էք ու քնքոյշ,
Բայց կը փլթիք անպատճառ:

ԽՄԲԱՊԵՏ

Դուք ճանճեր, դուք մոծակներ,
Մի՛ թռչիք մերկ կընոջ շուրջ.

Դուք գորտեր, դուք ճպուռներ,
Մի խանդարէր, խալն է լուրջ:

ՀՈՂՄԱՅՈՅՑ (մէկ կողմից)

Այ, լաւ հասարակութիւն,
Բոլորն էլ հարսնացուներ.
Իսկ երկտասարդութիւն—
Յուսալի փեսացուներ:

ՀՈՂՄԱՅՈՅՑ (միւս կողմից)

Թէ անդունդը չի բացուի
Եւ չի կուլ տայ բոլորին,
Թող իմ անձը գլորուի
Դըժսխքի փոսը խորին:

ԿՍԷՆԻԱՆԵՐ

Իբր միջատներ եկել ենք,
Բռնած սուր ունեկիւրներ.
Սատանայ հօրն ուզում ենք
Յոյց տալ մեր յարգանքն ու սէր:

ՀԷՆԻՆԳՍ

Տես, խմբուել են միասին
Եւ անում են կատակներ,
Վերջը թերեւս ասեն,
Թէ ունին բարի սրտեր:

ՄՈՒՍԱԳԷՏ

Վհուկների շրջանում
Ես չատ լաւ եմ զուարճանում.
Մուսաներից աւելի
Սորա են ինձ հաճելի:

CI-DEVANT ԺԱՄԱՆԱԿԻ ՈԳԻ

Մարդկանց հետ մարդ կը դառնաս.
Սարը ելնենք համարձակ:
Բլօկսրէրդն էլ է մի Պառնաս,
Ունի գազաթ լայնարձակ:

ՀԵՏԱՔՐՔԻՐ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴ

Այն ուր է, որ փառահեղ
Քայլում է: Ի՞նչ է խնդրում:

Հոտոտում է ամեն տեղ,
«Եղուխներ է փնտռում»:

ԿՌՈՒՆԿ

Թէ պարզ ջրում, թէ պղտոր,
Չուկն եմ որոնում ամեն օր.
Բարեպաշտին էլ մէկ մէկ
Դեերի մէջ կը տեսնէք:

ԱԶԽԱՐՀԱԶԱՆԱԿ

Բարեպաշտներն, ասեմ ձեզ,
Ամեն բանից օգտւում են.
Բլօկսրէրդի վրայ էլ նոյնպէս
Երբեմն ժողովում են:

ՊԱՐՈՂ

Անշուշտ նոր խումբ է գալիս.
Հեռու թմբուկ է լսում:
Ճայերն են այդպէս լալիս,
Եղեգներում ծվծվում:

ՊԱՐԻ ՈՒՍՈՒՅԻՉ

Այստեղ ամենքն են պարում,
Ով ինչպէս որ կարող է.
Կաղը, հաստը—չեն հարցնում,
Արդեօք պարը յաջող է:

ՋՈՒԹԱԿԱՆԱՐ

Միացրեց ոտխներին
Այստեղ ջութակի լարը,
Ինչպէս որ գազաններին
Օրֆէոսի քննարը:

ԱՍՏՈՒԱԾԱՐԱՆ

Փոյթ չէ ինձ, թող ուրանան
Կասկածը և կրիտիկան.
Սատանան էլ է մի բան,
Թէ որ սատանաներ կան:

ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ

Երևակայութիւնս
Այսօր շատ գրգռուած է.

Թէ այս բոլորը ես եմ,
Ապա խելքս կորած է:

ԲԷԱԼԻՍՏ

Այս բոլորն ինձ, իրաւ որ,
Ջայրացնում է սաստիկ շատ.
Առաջին անգամն այսօր
Ոտներիս վրայ եմ հաստատ:

ՍՈՒՊԵՐԵԱՏՈՒՐԱԼԻՍՏ

Այստեղ գալով, լաւ արի,
Կարող եմ ես ինձ համար,
Դեերով հրեշտակների
Մասին կազմել գաղափար:

ՍԿԷՊՏԻԿ

Կարծում են գանձ կըստանան,
Հետեւելով այն կայծին.
Ի՛սկ իմ տեղն է. սատանան
Համանիշ է կասկածին:

ԽՄԲԱՊԵՏ

Դուք, գորտեր, դուք, ճպուռներ,
Խաղը խանգարում էք միշտ.
Դուք, ճանճեր ու մօծակներ,
Ահա, դուք էք երաժիշտ:

ՃԱՐՊԻԿՆԵՐԸ

Sans-souci են անուանում
Մեր այս խումբը զուարճասէր.
Մեզ ոտներն էլ չեն տանում,
Ման ենք գալիս գլխավեր:

ԴԱՆԴԱՂՆԵՐԸ

Մենք էլ կերել ենք համով,
Սակայն հիմա Աստուած տայ.
Կօշիկները մաշելով,
Բոքիկ չըջում ենք հիմա:

ՄՈՒԻ ԿՐԱԿՆԵՐ

Գալիս ենք ճահիճներից,
Ինչտեղ գոյութիւն առանք.

Պակաս չենք ուրիշներից,
Մենք էլ ունինք զարդարանք:
ՎԱՅՐ ԸՆԿՆՈՂ ԱՍՏՂ

Բարձրից նետուեցայ ես ցած,
Զողշողալով լուսափայլ,
Հիմա խոտումն եմ ընկած.
Ո՞վ կօգնէ ինձ բարձրանալ:
ՀԱՍՏԱՆԴԱՄՆԵՐԸ

Տեղ տուէք մեզ, տեղ տուէք.
Կոխոտում ենք խոտերը.
Ոգիներ եկան, տեսէք,
Կոշտ են նոցա ոտները:

ՊՈՒԿ


Կամաց, թեթեւ՝ քայլեցէք,
Փղի հորթեր անճոռնի.
Ամենից ծանր, իմացէք,
Այսօր Պուկը պիտ' լինի:

ԱՐԻԷԼ

Բընութիւնը ու ոգին
Թէ տուել են ձեզ թեքեր,
Հետեւեցէք իմ շաւղին,
Ծաղկաբլուրը ելէք վեր:
ԵՐԱԺՃՏԱԿԱՆ ԽՈՒՄԲԸ

(Pianissimo)

Մառախուղն ու ամպերը
Երկնքիցը վերացան,
Հողմը շարժեց թփերը,
Ու բոլորը չքացան:





Ա Մ Պ Ա Մ Ա Ծ Օ Ր

Դ ա շ տ



ՖԱՆՈՒՍՏ. ՄԷՖԻՍՏՕՖԷԼԷՍ

ՖԱՆՈՒՍՏ

Հուառութեան մէջ: Յուսահատութեան մատնուած: Նախ երկար ժամանակ ողորմելի կերպով մոլորվում էր նա երկրի վերայ. իսկ հիմա, իբրև եղևնագործ, փակուած է բանտի մէջ, սարսափելի տանջանքներին ենթարկուած, այն նազելի, տարաբանող արարածը: Բանն այդտեղ հասաւ, այդտեղ:—Ո՛վ դու դաւաճան, անպիտան ոգի, և դու այդ թագցնում ես ինձանից:—Ի՞նչ ես կանգնել, ի՞նչ ես կանգնել և կատաղաբար պտոյտ տալիս քո սատանայական աշքերը. ի՞նչ ես կանգնել և տանջում ինձ քո անտանելի ներկայութեամբ: Բանտի մէջ է նա, անտանելի թշուառութեան մէջ, յանձնուած չար ոգիներին և դատապարտող, անզգայ մարդկութեանը: Իսկ դու ինձ այդ միջոցին զբաղեցնում ես անհամ զուարճութիւններով, թագցնում ես ինձանից նորա աճող վիշտը և թողնում ես նորան անօգնական:

— 201 —

ՄԷՖԻՍՏՕՖԷԼԷՍ

Նա առաջինը չէ:

ՖԱՆՈՒՍՏ

Զնն, զգուելի հրէշ:—Ո՛վ անվախճան ոգի, դարձրո՛ւ այս որդին ինձ նորից իւր շան կերպարանքը, ինչպէս յաճախ երևում էր սա գիշերներով և վաղվղում իմ առաջ, ընկնում անհոգ ուղիորի ոտները, կամ բռնում վայր ընկնողի ուսից: Դարձրո՛ւ սորան իւր սիրած կերպարանքը, որ իմ առաջ սողայ փորի վերայ, և ես կոխտեմ սորան ոտներովս, այս մերժուածին:—Առաջինը չէ:—Տառապանք, մարդկային հոգու համար անտանելի տառապանք, որ աւելի, քան մէկ արարած ընկել է այդ թշուառութեան մէջ, որ առաջինը բաւական չհամարուեցաւ իւր սոսկալի մահացու տանջանքով յաւիտեան ներդրի աշքերի առաջ բոլոր միւսների մեղքերը քաւելու: Այս մէկ հատի տարաբանողութիւնը մաշում է իմ կեանքը, իսկ դու խնդում ես հաղարաւորների վիճակի վերայ:

ՄԷՖԻՍՏՕՖԷԼԷՍ

Ահա, հիմա մենք նորից հասանք մեր սրամտութեան սահմանին, ինչտեղ որ դուր մարդիկ կորցնում էք ձեր խելքը: Ինչի՞ ես ընկերանում մեզ հետ, երբոր չես կարող զլուխ դուրս տանել: Ուզում ես թուշել և վախենում ես, որ զլուխդ պտոյտ կըգայ: Մենք քեզ գիմեցինք, թէ դու մեզ:

ՖԱՆՈՒՍՏ

Մի ցոյց տայ ինձ զազանի ատամներդ: Ես զգվում եմ:—Ո՛վ մեծ, սրանշելի ոգի, որ արժանացրիր ինձ քո գէմքը տեսնելու, դո՛ւ, որ ճանաչում ես իմ սիրտն ու հոգին, ինչի՞ կապեցիր ինձ այս խայտառակ ընկերի հետ, որի համար վնասը բաւականութիւն է և կորուստը վայելք:

ՄԷՖԻՍՏՕՖԷԼԷՍ

Կըվերջացնես, թէ չէ:

ՖԱՆՈՒՍՏ

Փրկիր նորան, թէ չէ վայ քեզ: Ամենատարսափելի անէծքներ կըթափեմ գլխիդ վերայ մինչև յաւիտեան:

ՄԷՖԻՍՏՕՖԷԼԷՍ

Ես չեմ կարող լուծել վրիժահանի կապանքները, չեմ կարող

բաց անել նորա փականքները: —Ո՞վ ձեզից նորան կորուստի մէջ:
Ե՞ս, թէ դու:

Ֆառաստը վայրենաբար նայում է իւր շուրջը:

Կայծակ հս ուրոնում: Լաւ է, որ տուած չէ նա թշուառ մահ-
կանացուներէդ: Անմեղ ընդդիմախօսին ջարդել, այս է բռնակալների
վարուելու եղանակը, երբոր նորա դժուարութեան են հանդիպում:
ՓԱՌԻՍՏ

Տնար ինձ նորա մօտ: Նա պէտք է աղատ լինի:

ՄԷՖԻՍՏՕՖԷԼԷՍ

Իսկ վտանգը, որին դու քեզ ենթարկում ես: Մի մոռանայ, որ
քաղաքում դեռ ես մնում է քո ձեռով կատարած արիւնոտ մեղքը:
Սպանուածի բնակարանը պահպանում են վրիժաւան ողբիներ և
սպասում են մարդասպանի վերադարձին:

ՓԱՌԻՍՏ

Այդ Էլ պէտք է լսեմ քեզանից: Ամբողջ աշխարհի մահն ու
անէծքը քո գլխին, հրէշ դու: Տնար ինձ նորա մօտ, ասում եմ քեզ,
և աղատիր նորան:

ՄԷՖԻՍՏՕՖԷԼԷՍ

Ես կըտանեմ քեզ, և ինչ որ կարող եմ անել, ահա այս է:
Մի՛թէ իմ ձեռին են երկնքի և երկրի բոլոր զօրութիւնները: Ես
կըթմրեցնեմ բանտապետի զգայարանները. տիրապետի բանա-
լիքներին և դուրս բեր նորան բանտից մարդկային ձեռովդ: Ես
պահապան կըկանգնեմ. կախարդական ձիւները պատրաստ են, ես
ձեզ կըփախցնեմ: Ահա, այս կարող եմ ես:

ՓԱՌԻՍՏ

Ընտ գնանք:



Գ Ի Շ Ե Ր

Ընդարձակ դաշտ

ՓԱՌԻՍՏԸ և ՄԷՖԻՍՏՕՖԷԼԷՍԸ սեւ երիվարների
վրայ նստած արշաւում են:

ՓԱՌԻՍՏ

Նչ են ժողովիլ այնտեղ կոճղի շուրջ:

ՄԷՖԻՍՏՕՖԷԼԷՍ

Չգիտեմ, ինչ որ բան են պատրաստում:

ՓԱՌԻՍՏ

Ելնում են, իջնում, ընկնում դէս ու դէն:

ՄԷՖԻՍՏՕՖԷԼԷՍ

Վհուկների ժողով է:

ՓԱՌԻՍՏ

Ցանում են, ինչ որ ծէս են կատարում:

ՄԷՖԻՍՏՕՖԷԼԷՍ

Անցնենք, անցնենք:





Բ Ա Ն Տ



ՓԱՌԻՍՏ

(Ձեռին բանալիքներ եւ լապտեր կանգնած է երկաթէ դրան առաջ։)

յս ի՞նչ անսովոր երկիւղ եմ ըզգում.
Մարդկութեան վիշտը կրում իմ կրծքում.
Նա ապրում է այս թաց պատի ետեւ,
Եւ նրա յանցանքն էր մի ցնորք թեթեւ.
Էլ ի՞նչ ես կանգնել. է՛ր չես մտնում ներս.
Վախենում ես դու տեսնել նրա երես.
Ճտապիր, որ մահից նորան ազատես։

Նա բռնում է կողպէքը։ Ներսից լսվում է երգ։

Անառակ մայրս,
Նա ինձ սպանեց.
Անպիտան հայրս
Ինձ կերաւ, լափեց.
Իմ փոքրիկ քոյրը
Իմ ոսկորները
Մի հով տեղ պահեց.
Եւ ես դարձայ սիրուն թռչնակ.
Եւ թռչում եմ հեռու, արագ։

ՓԱՌԻՍՏ

(Կողպէքը բաց անելով)

Նա չզիտէ, որ սիրելին այստեղ կանգնած,
Զըղթաների ձայնը լսում է սարսափած։

Ներս է մտնում։

ՄԱՐԳԱՐԻՏ

(Թաղնուկով անկողնի վերայ)

Վայ ինձ, վայ ինձ, ահա եկան. պիտ' մեռնիմ ես։

ՓԱՌԻՍՏ (ցածր ձայնով)

Կամաց, կամաց, դալիս եմ, որ ազատեմ քեզ։

ՄԱՐԳԱՐԻՏ

(Ընկնելով նորա առաջ)

Թէ դու մարդ ես, աղաչում եմ, խընայիր ինձ։

ՓԱՌԻՍՏ

Պահանակներին կըզարթեցնես այդպէս քնից։

Բռնում է նորա շրթաները, որ բաց անէ։

ՄԱՐԳԱՐԻՏ (ծնկների վերայ)

Դահլիճ, դահլիճ, ո՞վ տուեց քեզ

Այդ իրաւունքն ինձ վերայ.

Կէս գիշերին ինձ տանում ես,

Թո՛ղ, թո՛ղ ապրեմ, ո՛հ, խղճա՛ւ։

Մի՛թէ կարող չես առաւօտը վաղ

Դու ինձ գլխատել։

Վեր է կենում։

Դեռ այսպէս մատաղ,

Եւ ահա, արդէն պիտի մեռնիմ ես.

Գեղեցկութիւնս ինձ արեց այսպէս։

Իմ բարեկամը հեռու է ինձնից,

Ծաղկէ պսակս ընկաւ իմ ճակտից։

Ո՛հ, մի բռնիր ինձ դու այդպէս սաստիկ,

Խնայիր ինձ, ես քեզ չեմ հասցրել չարիք։

Ո՛հ, թո՛ղ դուր չանցնի իմ աղերսանքը.

Անծանօթ, խնայիր իմ մատաղ կեանքը։

ՓԱՌԻՍՏ

Ի՞նչպէս տանեմ ես այս տառապանքը։

ՄԱՐԳԱՐԻՏ

Ես բոլորովին քեզ եմ յանձնուած:
Թող, նախ կերակրեմ երեսաս սոված:
Դիչերն անցկացրի նորան գգուելով:
Ձեռիցս առան, որ պատճառեն վիշտ:
Ասում են, ես եմ սպանել իմ ձեռով:
Այսուհետ տխուր կըմնամ ես միշտ:
Մարդիկ իմ մասին երգեր են կապել:
Ինձ հետ անիրաւ են վարվում նորա:
Այգալէս վերջանում է մի առասպել:
Այստեղ ինձ հետ ինչ նմանութիւն կայ:

ՓԱՌԻՍՏ

(Նորա առաջ ընկնելով)

Տես, քեզ պաշտողն է առաջդ ընկած,
Նա քեզ կըհանէ բանտից անկասկած:

ՄԱՐԳԱՐԻՏ

(Ընկնում է նորա կողքին)

Աղօթենք, որ մեզ օգնեն սրբերը:
Տեսնում ես դու այս աստիճանները:

Դըրան շեմքի տակ,
Տես, դժոխք ու կրակ:
Չարն այնտեղ կանգնած,
Սաստիկ կատաղած,
Աղմուկ է հանում:

ՓԱՌԻՍՏ (բարձր ձայնով)

Դրէտխէն, Դրէտխէն:

ՄԱՐԳԱՐԻՏ (ախանջ դնելով)

Բարեկամիս ձայնն էր այս:

Նա վեր է թռչում. շղթաները վայր են ընկնում:

Ո՛ւր է: Լսեցի, կանչում էր նա ինձ:
Ահա, ազատ եմ: Հիմա անարգել
Կարող եմ կախուել ես նորա վզից,
Կարող եմ նորան համբուրել, գրկել:
Գրէտխէն, կանչեց նա ինձ դըրան շեմքից:

Եւ թէպէտ դժոխքը գոռում էր, գոչում,
Սատանայական դասը ծաղրում ինձ,
Ես ճանաչեցի, ով է ինձ կանչում:

ՓԱՌԻՍՏ

Ե՛ս եմ:

ՄԱՐԳԱՐԻՏ

Դո՛ւ ես, դո՛ւ: Ո՛հ, մէկ էլ ասա:

Բռնում է նորան:

Նա է: Տանջանքս չքացաւ ահա:
Ո՛ւր է երկիւղս, ո՛ւր բանտ, ո՛ւր շղթայ:
Դու եկար և ես փրկուեցի զտայ:
Այո՛, փրկուած եմ: —
Ահա փողոցը, այն փողոցը, տես,
Ուր ես առաջին անգամ տեսայ քեզ:
Ահա ստուերախիտ և կանաչ պարտէզ,
Ուր սպասում էինք քեզ Մարթան ու ես:

ՓԱՌԻՍՏ (նորան իւր հետ քաշելով)

Ե՛կ հետս, գնանք:

ՄԱՐԳԱՐԻՏ

Ուզում ես գնալ:

Դիտես, սիրում եմ ես քեզ հետ մնալ:

Դուրսդուրում է նորան:

ՓԱՌԻՍՏ

Չտապիր, սիրական: Եթէ չչտապես,
Ապա սաստիկ թանկ կընտրի այդ մեզ:

ՄԱՐԳԱՐԻՏ

Այս ինչ է, էլ չես համբուրում դու ինձ:
Վաղուց չէ, ինչ որ ինձնից հեռացար,
Եւ համբուրելը արդէն մոռացար:
Ինչի՞ եմ հիմա վախենում քեզնից,
Մինչ առաջ քո մէկ հայեացքն ու մէկ բառ:
Չուրջս դրախտ էր ստեղծում ինձ համար:
Եւ դու ինձ այնպէս էիր համբուրում,
Այնպէս պինդ գրկում, այնպէս գուրգուրում,

Կարծես թէ խեղդել ուզում էիր ինձ:
Դէ՛հ, համբուրիր ինձ դու առաջուայ պէս,
Թէ չէ կըսկսեմ համբուրել ես քեզ:

Գրկում է նորան:

Ո՛հ, ցուրտ է փշում քո շրթունքներից,
Դու համր ես, աւանդ, էլ չես սիրում ինձ:
Ասա, ո՞վ խլեց ինձներից քո սէրը:

Երեսը դարձնում է նորանից:

ՖԱՌԻՍՏ

Ե՛կ հետս, սէր իմ, բռնիր իմ ձեռք:
Սէրս դէպի քեզ վառ է ու բորբոք:
Ե՛կ հետս, էլ մեզ չի բաժնի ոչ ոք:

ՄԱՐԳԱՐԻՏ (դառնալով նորան)

Ուրեմն դո՛ւ ես, իրաւ այս դո՛ւ ես:

ՖԱՌԻՍՏ

Այո, ես եմ, եկ:

ՄԱՐԳԱՐԻՏ

Եւ դու լուծում ես

Իմ շղթաները, ինձ զիրկդ առնում:
Բայց միթէ ինձներից դու չես վախենում:
Բարեկամ, ումն ես ազատում, զիտեմ:

ՖԱՌԻՍՏ

Ե՛կ, գիշերն արդէն անց է կենում, տես:

ՄԱՐԳԱՐԻՏ

Ես իմ մօրը սպանեցի,

Երեսայիս խեղդեցի:

Մեր երկուսիս զաւակն էր նա:

Քո՛նն էլ:—Դու ես, այո, ահա,

Տո՛ւր ձեռք ինձ: Սա երազ չէ:

Տո՛ւր ձեռք:—Ա՛խ, բայց այս ի՞նչ է:

Ձեռք թաց է: Սրբիր, սրբիր:

Վրան արիւն կայ, արիւն. նայիր:

Ա՛խ, Տէր Աստուած, այդ ի՞նչ արիր:

Սուրդ պահիր, էլ չհանես:

Պահիր, պահիր, խնդրում եմ քեզ:

ՖԱՌԻՍՏ

Պատահածը մոռացիր,
Ինձ կըսպանես, իմացիր:

ՄԱՐԳԱՐԻՏ

Ո՛չ, բարեկամ, դու ապրիր:

Մեզ համար ո՞վ կըհողայ.

Գերեզմանները փոքիր,

Հենց որ օրը լուսանայ:

Լաւ տեղը կըտաս մօրս,

Նորա կողքին եղբօրս.

Ինձ մի կողմը պառկեցրու,

Բայց նոցանից ոչ հեռու:

Կրծքիս դիր իմ փոքրիկին.

Մարդ չի պառկի իմ կողքին:—

Ի՛նչպէս հրճվում էր, ցնծում իմ հոգին,

Երբ սխմում էիր դու ինձ քո կրծքին:

Աւանդ, հիմա այդ էլ չէ լինելու:

Ձեմ վստահանում քեզ մօտենալու.

Վախենում եմ, որ ինձ յետ կըմղես,

Բայց էլի դու ես, էլի բարի ես:

ՖԱՌԻՍՏ

Գնանք, եթէ որ զգում ես այդ բանը:

ՄԱՐԳԱՐԻՏ

Ո՛ւր:

ՖԱՌԻՍՏ

Դուրս:

ՄԱՐԳԱՐԻՏ

Այնտեղ է իմ գերեզմանը,

Սպասում է մահը. ուրեմն գնանք:

Այնտեղ յաւիտեան կըհանգստանանք.

Բայց միայն մի քայլ:—Հայնրիկս, գնում ես:

Կարողանայի հետդ գալ և ես:

ՖԱՌԻՍՏ

Ուզիր, կարող ես: Տես, դուռը բաց է:

ՄԱՐԳԱՐԻՏ

մե՛2 կարող, աւանդ, յոյսս կորած է:
Բայց ինչպէս փախչել, չէ՞ որ կը տեսնեն:
Ա՛խ, վատ է, վատ է մուրացկան լինել,
Մեղքով ծանրացած խիղճ կը ծրում կրել,
Օտարութեան մէջ անտէր թափառել,
Եւ վերջ ի վերջոյ էլի կը բռնեն:

ՓԱՌԻՍՏ

Ե՛կ, գնանք, ես քեզ մենակ չեմ թողնի:

ՄԱՐԳԱՐԻՏ

Ո՛հ, շտապիր, շտապիր.
Զաւակդ փրկիր:
Այդ ճանապարհով
Գնա՛ վերեւ գետով,
Չաւիղը անցիր,
Անտառը մտիր,
Յանկապատի մօտ
Լճակից տղմոտ,
Բռնիր, շուտ հանիր.
Վեր է քաշվում, վեր,
Կենդանի է դեռ.
Հանիր, ազատիր:

ՓԱՌԻՍՏ

Ուշքի եկ, սէր իմ: Դուռը բաց է, տես.
Մի քայլ միայն արա՛ս և դու ազատ ես:

ՄԱՐԳԱՐԻՏ

Երանի լեռը շուտով անցնէինք:
Այնտեղ քարի վրայ նստած է մայրս.
Ա՛խ, վերաս գալիս է սառը քրտինք:
Այնտեղ քարի վրայ նստած է մայրս,
Նստած է այնտեղ ու գլուխը շարժում.
Նա ինձ չէ կանչում, գլուխը շատ ծանր է.
Նա խոր քուն մտաւ, զարթել անհնար է:
Նա խոր քուն մտաւ, մենք ուրախացանք:
Ա՛խ, ինչ երջանիկ ժամեր ունեցանք:

ՓԱՌԻՍՏ

Խօսքս չէ ազդում, խնդիրքս նոյնպէս,
Ուրեմն բռնի դուրս կը տանեմ քեզ:

ՄԱՐԳԱՐԻՏ

Թո՛ղ ինձ: Բռնութիւն չեմ կարող տանել:
Ո՛չ, մի բռնիր ինձ այդպէս սաստկութեամբ:
Միշտ կամքդ արել եմ ուրախութեամբ:

ՓԱՌԻՍՏ

Ա՛խ, սէր իմ, օրը բացվում է ահա:

ՄԱՐԳԱՐԻՏ

Բացվում է: Այո, վերջին օրս է դա:
Հարսանքիս օրը պիտի լուսանար:
Ոչոքին շասես, թէ՛ դու ինձ տեսար:
Իմ պսակը, վայ ինձ,
Փշացաւ, չկայ:
Կը տեսնուենք նորից,
Բայց էլ չենք պար գայ:
Խուռն բաղմութեամբ լիքն է հրապարակ.
Ամբոխը լուռ է, հնչում է զանգակ:
Ահա, բռնեցին ինձ ու կապեցին,
Արիւնոտ կոճղին արդէն մօտեցրին,
Եւ գլխիս վերայ շողաց տապարը.
Գերեզմանի պէս լռեց աշխարհը:

ՓԱՌԻՍՏ

Երանի երբէք չէի ծնուել ես:

ՄԷՓԻՍՏՕՖԷԼԷՍ

(Նրեւում է դրան մէջ)

Զո՛ւտ, եկէք, թէ՛ չէ մահ է սպասում ձեզ:
Ի՞նչ էք շատ խօսում, ի՞նչ էք տատանում:
Իմ ձիւները չեն հանգստանում.
Զուտով առաւօտը կը լուսանայ:

ՄԱՐԳԱՐԻՏ

Այն ո՞վ դուրս եկաւ գետնից: Նա է, նա:
Ո՛հ, Հայնրիխ, ասա՛, որ իսկոյն գընայ,
Որ այս սրբազան տեղից հեռանայ:

Նա ինձ է ուղում:

ՓԱՌԻՍՏ

Դու պիտի ապրես:

ՄԱՐԳԱՐԻՏ

Տէր Աստուած, քեզ եմ ապաւինում ես:

ՄԷՓԻՍՏՕՓԷԼԷՍ (Ֆառուստին)

Եկ, թէ չէ դու էլ հետը կրկորչես:

ՄԱՐԳԱՐԻՏ

Արարիչ, փրկի՛ր, արարածդ եմ ես:

Հուրջս պատեցէք, ս'վ սուրբ հրեշտակներ,

Ինձ պաշտպանեցէք, երկնային խմբեր:

Ո՛հ, Հայնրիխ, քեզնից սոսկում եմ սաստիկ:

ՄԷՓԻՍՏՕՓԷԼԷՍ

Դատաւարտուած է:

ՁԱՅՆ (վերելից)

Փրկուած է:


ՄԷՓԻՍՏՕՓԷԼԷՍ (Ֆառուստին)

Հիւտ, եկ:

(Անյայտանում է Ֆառուստի հետ միասին)

ՁԱՅՆ (ներսից հնչելով)

Հայնրիխ, Հայնրիխ:



Ծ Ա Ն Յ Ք Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

«Փ Ա Ո Ւ Ս Տ»

ԱՌԱՋԻՆ ՄԱՍԷ

Գ Ի Շ Ե Ր

Նբէ՝ 25, րոշ 22.

Նօստրադամի ձեռով գրած...

«Նօստրադամի», ֆրանսիացոյ Կարլոս IX թագաւորի պալատական ըծիչը և միջին դարերի նշանաւոր աստղագէտներից և պատգամախօսներից մէկը, ապրել է 1503—1566 թուականներում: Նորա գիրքը հրատարակուել է 1555 թ. և կրում է այս վերնագիրը. «Les prophcies de M. Michel Nostradamus».

Նբէ՝ 25, րոշ 33.

Բայ է անում գիրքը և տեսնում է Մակրոկոսմոսի նշանը: «Մակրոկոսմոս» տիեզերքի ոգին է, իսկ «Միկրոկոսմոս»—երկրի ոգին:

Ք Ա Ղ Ա Ք Ի Ց Դ Ո Ւ Ր Ս

Նբէ՝ 47.

Այս երեսում պատահող բառերը. «Կարմիր առիւծ», «Զուշան», «Թագուհի» ալքիմիական անուններ են զանազան նիւթերի:

Ա Ռ Ա Ն Ձ Ն Ա Ս Ե Ն Ե Ա Կ

Նբէ՝ 56.

Այս երեսում պատահող բառերը. «Սալամանդր», «Ունդենա», «Սիլֆիդա» եւ «Ինկուբուս» զանազան ոգիների անուններ են: «Սալամանդր» —կրակի մէջ ապրող ոգի, որ ինքն էլ բաղկացած է կրակից. «Սիլֆիդա» —օդային ոգի. «Ունդենա» —ջրի մէջ ապրող ոգի, կոչւի կեր-

պարանքով. «Յնկուքոս» — այսպէս կոչվում էին միջին դարերում կախարդ-ներին հետ յարաբերութիւն ունեցող դէները, որոնք անհանգիստ են անում քնած մարդկանց:

Երէ՛ 57, հաշ. 33.

Եւ Սողոմոնի քանակիքով քեզ...

«Սողոմոնի քանակիք» երբայական մոգական գրքի անունն է, որի հեղինակը համարում են Սողոմոն թագաւորին:

Երէ՛ 60, հաշ. 30.

Պենտագրամման է քեզ փակում այստեղ:

«Պենտագրամմա» — զիւթական նշանի անունն է, երկու եռանկիւնի-ներէց կազմած առողաձև, որ միջին դարերում գծում էին դրան չեմքի վի-րայ, որպէս զի ոգիները չկարողանան ներս մտնել:

Ա Ռ Ա Ն Ջ Ն Ա Ս Ե Ն Ե Ա Կ

Երէ՛ 79, հաշ. 16.

«Collegium logicum» նախ և առաջ կըսկսէք:

«Collegium logicum» — տրամաբանութեան դասեր:

Երէ՛ 79, հաշ. 18.

Սպանիական կոշիկներում...

«Սպանիական կոշիկներ» — տանջանքի գործիքի անունն է: Մէկին «Սպանիական կոշիկներ» հազցնել նշանակում է զսպել:

Երէ՛ 80, հաշ. 10.

«Encheiresin naturae» անում է դրան քիմիան:

«Encheiresin naturae» նշանակում է բնութեան ձեռագործ:

Երէ՛ 84, հաշ. 3.

Eritis sicut Deus, scientes bonum et malum.

Այսինքն. կըլինիք իրբէ Աստուած, կիմանաք բարին ու չարը:

ԱՌԻԵՐԲԱՆԻ ՊԱՆԴՈԿԸ ԼԱՅՊՑԻԳՈՒՄ

Երէ՛ 88, հաշ. 13.

Նորան ծեր այծը Բլոկսթրէրգից պալով...

«Բլոկսթրէրգ» — Գերմանիայի Հարց լեռնախմբի մէջ ամենաբարձր լեռնն է, կոչվում է նաև «Բլոկէն», ունի 3500 ոտնաչափ բարձրութիւն:

Վ Հ Ո Ի Կ Ի Խ Ո Հ Ա Ն Ո Յ Ը

Երէ՛ 109, հաշ. 30.

Վալպուրգիում կարող ես դու ինձ ասել:

«Վալպուրգի» կամ «Վալպուրգեան գիշեր» — այսպէս կոչվում էր վհուկներին և կախարդներին գարնանային տօնը, որ կատարվում էր ապրիլի 30-ի գիշերը Բրօկէն լեռան գագաթի վերայ. այնտեղ այդ գիշերը, ըստ ավանդութեան, ժողովվում էին վհուկները, կախարդները և նոցա նման անձնաւորութիւններ և պարում էին սատանաների հետ: Այդ գիշերը գերմանացի գիւղացիք հրացաններ են արձակում դէներին և վհուկներին այնտեղից քշե-լու համար:

Փ Ո Ղ Ո Ց

Երէ՛ 133, հաշ. 4.

Sancta simplicitas! կարիք չունիք:

«Sancta simplicitas» — այսինքն սուրբ պարզամտութիւն:

Մ Ա Յ Ր Ե Կ Ե Ղ Ե Ց Ի

Երէ՛ 171, հաշ. 13.

Dies irae, dies illa

Solvat saeculum in favilla.

Այսինքն — Կըգայ պատժի օրը, ամեն բան փռի կըղաւնայ:

Երէ՛ 171, հաշ. 32.

Judex ergo cum sedebit,

Quidquid latet, adparebit,

Nil inultum remanebit.

Այսինքն — Դատաւորը կըբազմի աթոռի վերայ, կըմերկացնէ բոլոր գաղտնիքները, հատուցումն կըստանան բոլոր յանցաւորները:

Երէ՛ 172, հաշ. 13.

Quid sum miser tunc dicturus,

Quem patronum rogaturus,

Cum vix justus sit securus?

Այսինքն — Ի՞նչ ասեմ ես, տաւաբաղդս. և ո՞ր սրբին աղօթեմ այն օրը, երբ որ արգարն էլ հաղիւ հաղ կըփրկուի:

Վ Ա Լ Պ Ո Ւ Ր Գ Ե Ա Ն Գ Ի Շ Ե Ր

Երեւ 179, հոգ 17.

Բրօկէն է գնում մեր խումբը քաջ:
«Բրօկէն». տես. վերելք «Բրօկէն»:

Երեւ 179, հոգ 20.

Ուրիանը վերն է նստած...
«Ուրիան» — լեռնային մի ոգու անուն է:

Երեւ 179, հոգ 24.

Պառաւիկ Բաուրօն գալիս է մենակ...
«Բաուրօ» — մի առասպելական կնոջ անուն է:

Երեւ 179, հոգ 34.

Իլզէնշտայնի վրայ անցայ:
«Իլզէնշտայն» — Մերկ գրանիտի լեռն է Հաննովերում, 230 ոտն.
բարձրութեամբ, որի գագաթին կանգնած է տհալին երկաթ է խաչ:

Երեւ 184, հոգ 8.

«Parvenu» — նշանակում է մի այնպիսի մարդ, որ ամեն բանի մէջ
խառնվում է և հանգամանքներից օգտվում:

Երեւ 186, հոգ 23.

«Պրօկտօֆանտաստ» — Մի առասպելական անձնաւորութիւն, որ
սաստիկ ցաւեր զգալով յետոյքում, զառանցում է:

Երեւ 188, հոգ 25.

Անշուշտ լսել ես, ո՞վ էր Մէդուզան:
«Մէդուզա» — Սարսափելի արարած ստորերկրեայ աշխարհում, ըստ
յունական դիւցաբանութեան. նորա հայեացքը քարացնում էր ամեն ինչ:
Նորա գլուխը, որ ծածկուած էր օձերով, փոխանակ մաղերի, կտրից Պէրսեոս
յոյն դիւցազնը, որ Զեւսի և Դանայի որդին էր:

Երեւ 189, հոգ 17.

«Servibilis» — նշանակում է այնպիսի մի մարդ, որ պատրաստ է ամեն-
քին ծառայել:

Վ Ա Լ Պ Ո Ւ Ր Գ Ե Ա Ն Գ Ի Շ Ե Ր Ո Ւ Ա Յ Ե Ր Ա Ջ Կ Ա Մ Օ Ք Ե Ր Օ Ն Ի Ե Ի Տ Ի Տ Ա Ն Ի Ա Յ Ի Ո Ս Կ Ե
Հ Ա Ր Ս Ա Ն Ի Ք Ը

Երեւ 193, հոգ 3.

Միդինգի քաջ զաւակներ...

«Միդինգ» — երբեմն յայտնի թատրոնի կառավարիչ էր և այդ պատ-
ճառով դերասաններին իւր զաւակներ է անուանում:

Երեւ 193, հոգ 11.

«Օրէրօն» — Սկանդինաւեան դիւցաբանութեան մէջ անտառի արքայ,
«Տիտանիայի» ամուսինը:

Երեւ 193, հոգ 16.

«Պուկ» — չին ֆրիզները և Անգլիները համարում էին նորան տնային
չար ոգի, որ քնած մարդկանց անհանգիստ է անում, նոյնը ինչ որ «Պն-
կուրուս»:

Երեւ 195, հոգ 18.

«Purist» — լեզու մաքրող:

Երեւ 196, հոգ 18.

«Հէնինգս» — օրացոյցների յայտնի հրատարակիչ:

Երեւ 196, հոգ 23.

«Մուսագէտ» — Մուսաների առաջնորդ, Ապօլլոնի մականունը. ընդ-
հանրապէս նշանակում է գեղարուեստների բարեկամ ու պաշտպան:

Երեւ 197, հոգ 27.

«Օրֆէոս» — յոյն երգիչ, Կալիօնա մուսայի որդին, որ իւր երգերով
կախարդում էր վայրենի գաղաններին, ծառեր ու ժայռեր:

Երեւ 198, հոգ 8.

«Սուպէրնատուրալիստ» — գերբնականին հաւատացող:

Երեւ 198, հոգ 13.

«Սկէպտիկ» — փիլիսոփայ, որ ամեն բանում կասկածում է:

1346

2013

«Ազգային գրադարան»



NL0266048

